ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՐԹՈՒՐԻ

# ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-2008 ԹԹ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Գարեգինի Մինասյան

Երևան-2019

ԲՈՎԱՆ՛ ՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**.........................................................................................3

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**.........................................................................................13

1.1. ԵՐԿԿՈՂՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-1998)……………………………………13

1.2. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1998-2008) ……………………………………..………………..….33

1.3. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2008 ԹԹ.) ………………………………………………...…..69

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ** ……………………………………………………………………..……..77

2.1. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ……….77

2.2. ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ……………………………………………………………..……..……92

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ** …………………………..……124

3.1. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ ՀՀ և ԲՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ…………………………………………………………..…124

3.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ………………………………………………………………………..……..144

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
**..............................................................................162**
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ**
**ՑԱՆԿ....................................................…167**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## **<u>Թեմայի արդիականությունը</u>**

Ներկայացվող աշխատանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության հարաբերությունների տարբեր ոլորտներին և ընդգրկում է 1991-2008 թթ. ընկած ժամանակաշրջանը: Սա երկու երկրների հարաբերություններում կարևոր մի ժամանակահատված էր, երբ սոցիալիստական ճամբարի և ԽՍՀՄ փլուզումից հետո հանդես եկան նորանկախ բազմաթիվ երկրներ, իսկ որոշ երկրներում հաստատվեցին տնտեսական նոր տարաձևեր ու կառավարման նոր համակարգեր: Ե՛վ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Բուլղարիայի Հանրապետությունը անցել են այս փոփոխությունների միջով: Ուսումնասիրվող թեմայի կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից նշանակալի են հետևյալները. հայ և բուլղար ժողովուրդները ունեցել են անցյալի բազմաթիվ դրվագներ, որտեղ երկու երկրների ուղիները խաչվել են: Այդպիսի դրվագներ կային և նոր ժամանակներում, երբ երկու ժողովուրդների հիմնական հատվածը ապրում էր ու իր գործունեությունը ծավալում էր Օսմանյան կայսրությունում, և՛ նորագույն ժամանակներում, երբ Հայաստանը և Բուլղարիան հայտնվեցին սոցիալիստական աշխարհակարգի հանգրվանում: Երկու երկրների պատմական անցյալը և ժամանակակից փուլում նրանց հարաբերությունները խիստ հետաքրքրական են, քանզի ունենալով շատ նման անցյալ կարևոր է ուսումնասիրել նորագույն շրջանում նրանց պատմության զարգացման ուղղությունը: Հետաքրքրական է դառնում, արդյոք կան զուգահեռներ երկու երկրների պատմական զարգացման ուղու մեջ

ժամանակակից պատմափուլում, ինչպես է ազդել այդ նույն պատմական անցյալը երկու երկրների զարգացման վրա: Ուսումնասիրության արդիականությունը կայանում է նաև նրանում, թե հետսոցիալիստական աշխարհում ձևավորված հասարակությունները զարգացման ինչպիսի ուղի են ընտրել և միմյանց հետ հարաբերությունները ինչ սկզբունքների վրա են կառուցում: 1991 թ. սկսած ՀՀ-ում և ԲՀ-ում սկսեցին տնտեսական, քաղաքական, մշակութային բազմաթիվ փոփոխություններ, որոնք երկրների համար նոր պատմական ուղեգիծ դարձան: Բուլղարիայի Հանրապետությունը անցնելով բարդ ժամանակահատված՝ 1990-2000-ական թթ. սկսեց կայուն քայլերով շարժվել դեպի ԵՄ և Արևմտաեվրոպական երկրների հետ ավելի բարձր հարաբերությունների հաստատում, իսկ ահա ՀՀ-ը շարունակեց իր սերտ քաղաքականությունը ՌԴ հետ և եվրոպական գործընկերներ փնտրելուն և նրանց հետ համագործակցելուն զուգընթաց ավելի շատ գործակցում է նախկին ԽՍՀՄ երկրների հետ: Այնուամենայնիվ ԲՀ-ը այս առումով այն երկրներից է, որի հետ Հայաստանը և խորհրդային և հետխորհրդային տարիներին պահպանում է կայուն հարաբերություններ:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:**

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության հարաբերությունները դիվանագիտական, տնտեսական, մշակութային, գիտակրթական ոլորտներում: Ուսումնասիրության առաջնային խնդիրներն են.

- ՀՀ և ԲՀ երկկողմ քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների ձևավորման և զարգացման ընթացքը ու հետևանքների լուսաբանումը, դրանց պատճառահետևանքային կապերի բացահայտումն ու արժևորումը:
- Հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների զարգացումը, երկկողմ եկեղեցական կապերը, երկու երկրների համար կարևորագույն քաղաքական խնդիրների վերաբերյալ պետությունների դիրքորոշումը:

- ՀՀ և ԲՀ միջև հայ-բուլղարական առևտրատնտեսական կապերի հաստատումը և զարգացումը, միջկառավարական մարմինների ձևավորումը և գործունեությունը:
- Բուլղարահայ համայնքի, նրա առանձին գործիչների, համայնքի մշակութային կառույցների և նրա դերի կարևորումն ու արժեվորումը երկկողմ քաղաքական հարաբերություններում:
- Հայ-բուլղարական մշակութային, գիտակրթական կապերի զարգացման աստիճանի ներկայացումը, դրանցում առկա բացերն ու խնդիրները, զարգացման տեսլականը և առկա հնարավորությունների օգտագործման աստիճանի բացահայտումը:

**Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան են** ՀՀ և ԲՀ հարաբերությունները 1991-2008 թթ.: Քննարկվում են հայ-բուլղարական քաղաքական, դիվանագիտական, միջազգային համագործակցության, տնտեսական փոխառնչությունների, գիտակրթական ու մշակութային շփումների հարցերը: Ուսումնասիրության առարկա են դարձել հայ-բուլղարական միջպետական հարաբերությունները, հայկական համայնքի դերը այդ հարաբերությունների զարգացման գործում:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսությունը շարադրվել է փոխկապակցված մեթոդների և մոտեցումների համալիրի միջոցով: Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության հարաբերությունների ընթացքի ու զարգացումների, դրանց վրա ազդած հիմնական գործոնների քննական մեկնության, կիրառվել է փաստերի համեմատական-համադրական սկզբունքը: Հայ-բուլղարական միջպետական հարաբերությունները ուսումնասիրվել են համակարգային մեթոդով՝ ուշադրություն դարձնելով ժամանակագրության պահպանման վրա: Ատենախոսության համար հիմնական աղբյուր դիտվող արխիվային նյութերի, մամուլի ուսումնասիրությունն իրականացվել է վերլուծության միջոցով: Մամուլի ուսումնասիրության համար օգտագործվել է նաև նրա գաղափարախոսական դրսևորումները և նշանակությունը: Գնահատվել է դրանց ստեղծման արժեհամակարգն ու քաղաքական պատկերը:

**<u>Աշխատանքի գիտական նորույթները:</u>**

Ատենախոսության կարևորագույն նորույթը ՀՀ և ԲՀ հարաբերությունների ուսումնասիրությունն է ամենաբազմազան ոլորտներում: Այս հարցի վերաբերյալ սույն ատենախոսությունը առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվել արխիվային նյութերի, հրապարակի վրա եղած գրականության, մամուլի հրապարակումների հիման վրա ներկայացնել հայ-բուլղարական բազմակողմ հարաբերությունները ՀՀ անկախության շրջանում:

Երկրորդ՝ վեր են հանվել երկու երկրների միջև առկա դիվանագիտական շփումները, բարձր մակարդակի հանդիպումների նախապատրաստական աշխատանքները և տարբեր հարցերի վերաբերյալ երկկողմ մոտեցումները:

Ատենախոսության վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ և ԲՀ հարաբերությունները ունեն բավական բարձր մակարդակ, անցել են ուրույն զարգացման ուղի, հիմնված են փոխադարձ հարգանքի, միմյանց սկզբունքները միջազգային ասպարեզում հարգելու և հնարավորության դեպքում բարձր ատյաններում փոխադարձ աջակցության վրա: Այնուհանդերձ երկկողմ հարաբերությունները ունեն բազմաթիվ չլուծված ու բաց հարցեր, զարգացման բազմաթիվ ուղղություններ ու առաջընթացի մեծ և չօգտագործված ներուժ: Վերջինը հատկապես վերաբերում է տնտեսական հնարավորություններին, որոնք թեև երբեմն-երբեմն մեծ ծավալով զարգացել են, սակայն օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չեն արձանագրել ցանկալի արդյունքներ:

**<u>Աշխատանքի կիրառական նշանակությունը:</u>** Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել Բուլղարիայի և Հայաստանի պատմության ուսումնասիրությունների համար: Բացի այդ հայ-բուլղարական հարաբերությունների ներկայացումը հիմք են Հայոց պատմության հետխորհրդային շրջանի արտաքին քաղաքականության ուսումնասիրությունների համար և կարող են համեմատության մեջ դրվել այդ ժամանակաշրջանում այլ պետությունների հետ Հայաստանի հարաբերություններում, մասնավորապես, Արևելյան Եվրոպայի երկրների հետ: Աշխատանքը

կարող է օգտագործվել նաև հայկական համայնքների պատմությունը ուսումնասիրելիս:

**<u>Ատենախոսության ժամանակագրական սահմանները:</u>** Ատենախոսության ժամանակագրությունը ընդգրկում է 1991-2008 թթ.., ՀՀ անկախության ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հարաբերությունները սկսեցին զարգանալ ու աստիճանաբար կայունանալով հասնել բավական բարձր մակարդակի: 1991 թ. հռչակվեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ Բուլղարիայում փլուզվեց սոցիալիստական համակարգը ու վերջինս անցավ նոր քաղաքական ու տնտեսական զարգացման ուղի: ՀՀ և ԲՀ հարաբերությունները հենց անկախության առաջին շրջանից սկսեցին զարգանալ. Հայաստանը շատ արագ ճանաչվեց ԲՀ կողմից ու սկսեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, որը թեև սկզբում բավական դանդաղ ընթացավ, սակայն աստիճանաբար կայունացավ ու արդեն 1990-ական թթ. վերջերից մեծ թափով սկսեց զարգանալ: ՀՀ և ԲՀ հարաբերությունների համար կարևոր ժամանակաշրջան էր 2007-2008 թթ., երբ Բուլղարիան դարձավ ԵՄ անդամ, իսկ Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրությունները, որի արդյունքում ՀՀ նախագահ դարձավ Սերժ Սարգսյանը:

**<u>Օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների տեսություն:</u>** Ատենախոսությունը գրված է հայերեն, բուլղարերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հրապարակված տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների, մամուլի հրապարակումների, էլեկտրոնային աղբյուրների հիման վրա:

Ներկա ատենախոսության համար առանցքային սկզբնաղբյուրների շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվի նյութերը:[1] Այստեղ օգտագործվել են գլխավորապես երկրորդ եվրոպական բաժնի արխիվացված

[1] ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 20, թ. 8, 9, գ. 218, թ. 62, 71, 123, գ. 220, թ. 100, 123, ց. 3, գ. 212, թ. 22, 23, 25-27, 52, 105, 107, 126, ց. 5, գ. 55, թ. 39-40, 43, 45, 47, ց. 11, գ. 29, թ. 25, 55-56, 128-130:

փաստաթղթերը, որոնք լայնորեն լուսաբանում են միջպետական, միջկառավարական, միջխորհրդարանային դիվանագիտության բազմաթիվ դրվագներ, անդրադարձներ են կատարվում տնտեսական խնդիրներին, մանրամասներ են ներկայացվում երկկողմ մշակութային, գիտակրթական առնչությունների վերաբերյալ: Արխիվային նյութերը հնարավորություն են տալիս անմիջականորեն հասկանալ պաշտոնական այցելություններին նախորդող դիվանագիտական փոխայցելությունների, կնքված պայմանագրերի նախագծերի, դրանցում արված փոփոխությունների և երկկողմ հարաբերություններին առնչվող բազմազան այլ խնդիրների վերաբերյալ:

Արխիվային փաստաթղթերի շարքում բավական կարևոր են նաև Բուլղարիայի Հանրապետության արխիվների փաստաթղթերը[2], որոնք համընդգրկուն են դարձնում երկկողմ հարաբերությունների մանրամասները: Բուլղարական Հանրապետության արխիվի նյութերը հնարավարություն են ընձեռում նաև համեմատել Հայաստանի պատմադիվանագիտական արխիվի նյութերի հետ և կատարել ճշգրիտ եզրահանգումներ, փաստարկումներ ու ընդհանրացումներ:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր են վիճակագրական գրքույկները[3] և տարեգրքերը[4], ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածուները:[5] Տնտեսական ցուցանիշների համադրման ու վերլուծության տեսանկյունից կարևորվում են ՀՀ

---

[2] АМВнР (Архив Министри на външните работи), д. 10, оп. 49-3, а. е. 230, л. 7, 11-13, 15, а. е. 226, л. 3, а. е. 227, л. 2.

[3] Հայաստան, 2001, Վիճակագրական գրքույկ, Եր., 2001: Հայաստան, 2002, Վիճակագրական գրքույկ, Ե., 2002: Հայաստանը թվերով, 1992, Վիճակագրական համառոտ ժողովածու, Եր., 1994: Հայաստանը թվերով, 2003 թ., Վիճակագրական գրքույկ, Եր., 2003: Հայաստանը թվերով, 2005 թ., Վիճակագրական գրքույկ, Եր., 2005: Հայաստանը թվերով, 2006 թ., Վիճակագրական գրքույկ, Եր., 2006: Հայաստանը թվերով, 2007 թ., Վիճակագրական գրքույկ, Եր., 2007: Հայաստանը թվերով, 2008 թ., Վիճակագրական գրքույկ, Եր., 2008:

[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, Վիճակագրական ժողովածու, Եր, 1998: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Եր, 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), Եր., 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Եր., 2002: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, Եր., 2003: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, Եր., 2004: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, Եր., 2005: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006, Եր., 2006: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007, Եր, 2007: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, Եր., 2008: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, Եր., 2009:

[5] Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, Եր., 2002:

արտաքին առևտրի ցուցանիշներին վերաբերող ժողովածուները[6]: Մեծ կարևորություն են ներկայացնում նաև ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագրերը[7]:

Պայմանավորված թեման ընդգրկող ժամանակաշրջանով և թեմայի համեմատաբար քիչ ուսումնասիրվածությամբ հետազոտությունները բավական սակավաթիվ են: Դեռևս խորհրդային տարիներին և դրան նախորդող շրջանում կապված Բուլղարիայում առկա հայահոծ համայնքով կան մի շարք աշխատություններ, որոնք անդրադարձներ են կատարում այնտեղ ապրող հայերի ու բուլղար ժողովրդի հետ դարավոր շփումների, ինչպես նաև նրանց հայրենադարձության վերաբերյալ: Այդպիսի աշխատությունների հեղինակներ են Ա. Ալպոյաճյանը[8], Ձ. Ղասաբյանը[9], Կ. Ճինգոզյանը[10], Հ. Մելիքսեթյանը[11] և այլն: Բուլղարիայում ապրող հայերի մասին տեղեկություններ են ներկայացնում Մ. Մալխասյանը[12], Ա. Ներսիսյանը[13], ինչպես նաև Բուլղարիայի հայության մասին տեղեկություններ կան բերված «Հայ սփյուռք» հանրագիտարանում[14]:

1991-2008 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի մասին առաջին ուսումնասիրությունը իրականացրել է Էդիկ Մինասյանը իր «Հայ-

---

6 Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2002 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2003: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2004: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2004 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2005: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2005 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2006: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2007 թվականին, Վիճակագրական ժողովածու, Եր., 2008:

7 ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2003: ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2006: ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2008:

8 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, Հատոր Բ, Եր., 2015:

9 Ղասաբյան Ձ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, Եր., 1989:

10 Ճինգոզյան Կ., Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից, Եր., 1966:

11 Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940), Երևան, 1975: Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985:

12 Մալխասյան Մ., Հայերն աշխարհում, Եր., 2007:

13 Ներսիսյան Ա., Հայկական սփյուռքի աշխարհագրություն, Վանաձոր, 2014:

14 «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003:

բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ.,»[15] ծավալուն հոդվածում՝ ներկայացնելով երկու երկրների միջև առկա քաղաքական, դիվանագիտական, մշակութային, կրթական ու տնտեսական փոխառնչությունները: Է. Մինասյանը իր «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն»[16] և «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017)»[17] աշխատություններում ևս ներկայացրել է հայ-բուլղարական հարաբերությունների ձևավորումը և զարգացման ընթացքը: Հայ-բուլղարական հարաբերությունների, Բուլղարիայում հայկական համայնքի վերաբերյալ առանձին խնդիրներ արծարծվել են Ք. Պետրոսյանի[18], Մ. Վարանդեանի[19] աշխատություններում:

Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք նաև բուլղար հեղինակների աշխատություններից՝ մանսավորապես Ժ. Ժելևի[20], Ե. Միցեվայի[21], Բ. Նիկոլովի[22] հեղինակած մենագրությունները, որոնք ներկայացնում են 1991-2008 թթ. Բուլղարիայի ներքաղաքական կյանքը ու հայության հետ շփումները: Աշխատանքում օգտագործվել են նաև տարբեր գիտական հոդվածներ, որոնք ներկայացնում են հայ-բուլղարական հարաբերությունների տարբեր ոլորտներ, ինչպես նաև դրանց առնչվող թեմաներ: Այդպիսի հոդվածներ են հեղինակել Գ. Բադալյանը,[23] Հ. Գրիգորյանը,[24] Տ.

---

[15] Մինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ., «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 48-62:
[16] Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2014:
[17] Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Եր, 2018:
[18] Պետրոսյան Ք., Հայ րենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Եր., 2011:
[19] Վարդանեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992:
[20] Желев Ж., Въпреки всичко. Моята политическа биография. София, 2010.
[21] Мицева Е., Арменците в България –култура и идентичнос, София, 2001.
[22] Николов, Б., ВМОРО – псевдоними и шифри 1893-1934, Звезди, 1999. Николов, Б., Вътрешна македоно-одринска революционна организация. Войводи и ръководители (1893 – 1934). Биографично-библиографски справочник, София, 2001.
[23] Բադալյան Գ., Բուլղարիայի հայկական գաղթավայրերը (Սկզբնավորման շրջանից մինչև 20-րդ դարի զկիզբը), «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 41-47:
[24] Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, նշվ. աշխ., էջ 34-41:

Թորոսյանը,[25] Ա. Խաչատրյանը,[26] Գ. Կոլարովը,[27] Տ. Ղանալանյանը,[28] Հ. Մխոյանը,[29] Արթուր սարկավագ Կարապետյանը,[30] Հ. Չիլինգարյանը[31]:

Թեմայի շարադրման համար խիստ կարևոր են եղել պարբերական մամուլից վերցրված հոդվածները, որոնք ներկայացրել են ժամանակաշրջանի կարևորագույն անցուդարձները, տվել են համակողմանի գնահատական, երբեմն կատարելով վերլուծություններ: Այդպիսի պարբերականներից են «Հայաստանի Հանրապետությունը»[32], «Ազգը»[33], «Առավոտը»[34] և այլն:

---

[25] Թորոսյան Տ., Ինքնության պահպանման խնդիրը տրանսֆորմացման գործընթացներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2006, № 1, էջ 3-21:

[26] Խաչատրյան Ա., Հայերի մասնակցությունը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին 19-րդ դարի երկրորդ կեսին, «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկուցների ժողովածու, նշվ. աշխ., էջ 17-28:

[27] Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2015, համար 3, էջ 33-39:

[28] Ղանալանյան Տ., «Հայերի արտագաղթը Բուլղարիայից (1950-1970-ական թթ.), «Հայագիտության հարցեր», թիվ 1, Եր., 2016, էջ 82-93:

[29] Մխոյան Հ., Բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար պայքարը Օսմանյան կայսրությունում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2016, էջ 155-164:

[30] Արթուր սրկ. Կարապետյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա և Բուլղարահայոց թեմ, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2002, համար Ձ-Է, էջ 3-17:

[31] Tchilingirian H., The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism, Armenian International Magazine (AIM), Vol. 12, Issue 3, April 2001, pp. 30-36.

[32] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սևդա Սևանը, բուլղարահայ գաղութը, բարեգործությունը և մենք», թիվ 84 (429), 30 ապրիլի 1992 թ., էջ 1-2: Նույնի՝ «Հայ համայնքների համաժողովը Բուխարեստում», թիվ 113 (458), 11 հունիսի 1992 թ., էջ 1: Նույնի՝ «Վահան Փափազյանի հանդիպումները Սոֆիայում և Պլովդիվում», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1: Նույնի՝ «Բուլղարիայի վարչապետը հայերի մասին», թիվ 16 (1136), 26 հունուար 1995 թ., էջ 1: Նույնի՝ «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1: Նույնի՝ «ՀՀ նախագահը մեկնեց Բուլղարիա», թիվ 81 (1201), 11 ապրիլի 1995 թ., էջ 1: Նույնի՝ «Նախագահի այցելությունը Սոֆիա», թիվ 82 (1202), 12 ապրիլի 1995 թ., էջ 1: Նույնի՝ ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995 թ., էջ 1: Նույնի՝ ««Հայաստան» հիմնադրամը Բուլղարիայում», թիվ 27 (1465), 13 փետրուարի 1996 թ., էջ 1: Նույնի՝ «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2: Նույնի՝ «Բուլղարիան Ամերիկա չէ, և հայերն այնտեղից կվերադառնան Հայաստան», թիվ 71 (2028), 14 ապրիլ 1998 թ., էջ 3: Նույնի՝ «Հայաստան-Վրաստան-Բուլղարիա երկաթուղային նոր միջանցք», թիվ 252 (2209), 24 հոկտեմբերի 1998 թ., էջ 1: Նույնի՝ «Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահն այցելեց Մայր աթոռ», թիվ 44 (2258), 9 մարտի 1999 թ., էջ 1: Նույնի՝ «Բացվեց «Էքսպո Բուլղարիա-99 երևանյան ցուցահանդեսը», թիվ 100 (2314), 26 մայիսի 1999 թ., էջ 3: Նույնի՝ «Հայ-բուլղարական հարաբերությունները», թիվ 234 (2448), 1 դեկտեմբերի 1999, էջ 2: Նույնի՝ «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 2: Նույնի՝ «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիայի Հանրապետություն», թիվ 166 (3299), 6 սեպտեմբերի 2003, էջ 1,4: Նույնի՝ «Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն», թիվ 175 (3554), 2 հոկտեմբերի 2004, էջ 3: Նույնի՝

Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք նաև հայերեն, բուլղարերեն, անգլերեն տարաբնույթ էլեկտրոնային աղբյուրներից ու հոդվածներից[35]: Այս բոլոր աղբյուրների,

---

«Մենք գտնվում ենք բուլղարա-հայկական հարաբերությունների աշխուժացման փուլում», թիվ 176 (3555), 5 հոկտեմբերի 2004, էջ 1,2: Նույնի՝ «Բուլղարիայի նախագահին այցելեց Ծիծեռնակաբերդ, ԵՊՀ…», թիվ 178 (3557), 7 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

[33] «Ազգ» օրաթերթ, «Նախագահ Պրվանովը Ռոբերտ Քոչարյանին հրավիրել է Բուլղարիա», թիվ 51 (2496), 20 մարտ 2002 թ., էջ 2: Նույնի՝ «Բարեկամանում են Հայաստանի և Բուլղարիայի խորհրդարանները», թիվ 120 (3042), 30 հունիս 2004 թ., էջ 1-2: Նույնի՝ «Մտնել Եվրոպաբարեկամների հետ», թիվ 122 (3044), 2 հուլիս 2004 թ., էջ 8: Նույնի՝ ««Սահակ-Մեսրոպ» երգչախմբի փայլուն ելույթները Բուլղարիայում», թիվ 200 (3366), 4 նոյեմբերի 2005 թ., էջ 6: Նույնի՝ «Հայ-բուլղարական համագործակցության ներուժն օգտագործված չէ», թիվ 209 (3861), 14 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

[34] «Առավոտ» օրաթերթ, «Գնալ զիջումների՝ ինքնությունը չկորցնելով», https://www.aravot.am/2004/10/07/318804/ , 16.01.2019: Նույնի՝ «Ատոմակայանի «սցենարի», միջազգային պայմանագրերի մասին», https://www.aravot.am/2000/07/12/788648/ , (14.01.2019): Նույնի՝ «Բոլորս գնում ենք նույն տեղը և նույն ճանապարհով», https://www.aravot.am/2004/07/01/802583/ , (07.08.2018): Նույնի՝ «Եվս մի համաձայնագիր», https://www.aravot.am/2001/04/12/791039/, (14.01.2019): Նույնի՝ «Բոլոր ճանապարհները տանելու են Եվրոպա», https://www.aravot.am/2004/07/02/802673/ , (10.09.2018):

[35] Անանեան Ա., Պետունց Ա., Մամեան Դ., «Ադրբեջանի բուլղարական թղթապանակը. Ձախողվել են Բուլղարիայում օրինական գործող ՀԲԸՄ միջոցառումը խոչընդոտելու դեսպանի քայլերը», https://armenpress.am/arm/news/898721.html , (07.01.2019): ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայք՝ http://www.minenergy.am/page/514 , (17.02.2019): «ՀՀ պաշտպանության նախարարը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր», http://www.mil.am/hy/news/4640 , (18.01.2019):
Հարությունյան Գ., «Վիգեն Սարգսյանը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է պաշտպանական գործակցությունը», https://razm.info/96408 , (15.02.2019): Հովհաննիսյան Տ., «Բուլղարիան Հայաստանում ռազմական կցորդի գրասենյակ է բացել», https://razm.info/109761 , (15.02.2019):
«Նախագահ Սերժ Սարգսյանի և Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադևի համատեղ մամուլի ասուլիսը», https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2018/02/12/President-Serzh-Sargsyan-and-President-Rumen-Radev-at-the-joint-conference-responded-to-the-questions/, (15.02.2019): Սարոյան Ն., «2017-ին Հայաստանը Բուլղարիայից գնել է ավելի քան 1000 միավոր ձեռքի գնդացիր», https://razm.info/126673, (15.02.2019): Дрехарски В., Нагорный Карабах на автомобиле глазами туриста из Болгарии, http://www.awaytravel.ru/content/%D0%BD%D0%B0%D0%B3%D0%BE%D1%80%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85-%D0%BD%D0%B0-%D0%B0%D0%B2%D1%82%D0%BE%D0%BC%D0%BE%D0%B1%D0%B8%D0%BB%D0%B5-%D0%B3%D0%BB%D0%B0%D0%B7%D0%B0%D0%BC%D0%B8-%D1%82%D1%83%D1%80%D0%B8%D1%81%D1%82%D0%B0-%D0%B8%D0%B7-%D0%B1%D0%BE%D0%BB%D0%B3%D0%B0%D1%80%D0%B8%D0%B8 , (2.22.2019) Население към 01.03.2001 г. по области и етническа група, http://www.nsi.bg/Census/Ethnos.htm, (12.08.2018). Bulgaria’s government strives to keep stability amid pay demands // EU-Business, 9 October 2007, https://www.eubusiness.com/europe/bulgaria/1191900721.97/ , (16.02.2019): Daniel J. Mitchell, Bulgaria Now an Official Member of the Flat Tax Club https://www.cato.org/blog/bulgaria-now-official-member-flat-tax-club , (16.02.2019): «Spiegel online» , Gas Shortage Fallout. Bulgaria Looks to Restart Soviet-Era Reactors, http://www.spiegel.de/international/europe/gas-shortage-fallout-bulgaria-looks-to-restart-soviet-era-reactors-a-602954.html , (17.02.2019): Parliament Passes Resolution on Armenians' Mass Extermination in Ottoman Empire in 1915-1922 Period, 24.04.2015, http://www.bta.bg/en/c/DF/id/1065011, (17.02.2019): https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/bu.html , (17.02.2019):
http://www.sgi-network.org/2014/Bulgaria/Key_Challenges , (17.02.2019): http://www.traceca-org.org/en/home/ , (17.02.2019): https://data.worldbank.org/country/bulgaria ,( 16.02.2019): https://www.unroca.org/bulgaria/report/2017/ , (14.02.2019):

մամուլի հրապարակումների և ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է լինում ամբողջացնել հայ-բուլղարական հարաբերությունների նշյալ ժամանակաշրջանը և կատարել ճիշտ վերլուծություններ ու եզրահանգումներ:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

## 1.1. ԵՐԿԿՈՂՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-1998)

Հայաստանի Հանրապետությունը անկախության վերականգնումից հետո ձեռնամուխ եղավ դիվանագիտական հարաբերությունների ձևավորմանը աշխարհի տարբեր երկրների հետ: ՀՀ անկախության հռչակագրի 6-րդ կետում նշվում էր. «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը»[36]: Ելնելով այս հիմնադրույթից ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը դարձավ Արևելյան Եվրոպայի երկրների հետ դիվանագիտական, քաղաքական, մշակութային կապերի հաստատումը: Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը ԽՍՀՄ տարիներին համարվել էին սոցիալիստական ճամբարի մի մասը և այդպիսով գտնվել էին միևնույն համակարգի մեջ: Այս առումով բացառություն չէր նաև Բուլղարիայի Հանրապետությունը:

Հայ-բուլղարական հարաբերությունները կարևորվում են ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցներում համագործակցության շրջանակներում: Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունը հարուստ է փոխադարձ օգնության ու համագործակցության բազմաթիվ փաստերով, հոգևոր-մշակութային արտահայտված ընդհանրություններով[37]: Երկու ժողովուրդների փոխհարաբերությունները չեն սահմանափակվում միայն մերձեցման ու ռազմական համագործակցության փաստերով: Դարեր շարունակ հայերն ու բուլղարները ապրել ու ստեղծագործել են պատմական գրեթե միանման պայմաններում:

ՀՀ և ԲՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. հունվարի 18-ին: Մինչ այդ 1991 թ. դեկտեմբերի 12-ին Բուլղարիան ճանաչեց ՀՀ անկախությունը: Այս առնչությամբ ՀՀ ԱԳ նախարարությունը հավաստում էր իր հարգանքը ԲՀ դեսպանությանը և իր խորին շնորհակալությունը հայտնում ԲՀ

---

36 Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, http://www.gov.am/am/independence/, (25.08.2018):
37 Տե՛ս Ճինգոզյան Կ., նշվ. աշխ., էջ 9:

կառավարության՝ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչելու և երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու ցանկություն արտահայտելու կապակցությամբ: ՀՀ կառավարությունը միաժամանակ համոզմունք էր հայտնում, որ ՀՀ-ի և ԲՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը համապատասխանում է երկու կողմերի շահերին և կնպաստի միջազգային համագործակցությանը ու համընդհանուր խաղաղության ամրապնդմանը[38]: ԲՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Մ. Լյուբոմիռսկայային հղված նոտայում ՀՀ իշխանությունները վերահաստատում էին իրենց տրամադրվածությունը աշխատել ԲՀ կառավարության հետ տարբեր ոլորտներում ներառելով անվտանգությունը, կայունությունը և վստահությունը, գոյություն ունեցող անվտանգությունը և համագործակցությունը Եվրոպայում: Վերջիններս ցանկություն էին հայտնում հաստատել միջազգային հարաբերություններ այնպիսի նորմերի վրա որտեղ ամենակարևորը օրենքի գերակայությունն է, մարդու իրավունքների պաշտպանությունը և հիմնական ազատությունները՝ հենվելով հումանիզմի և ժողովրդավարության սկզբունքների վրա: Դրա խորացումը երկու երկրներում նոր հնարավորությունների ասպարեզ էին ստեղծում և բացում էին համագործակցության լայն հեռանկարներ, հիմքում դնելով դարերի ավանդույթը և ընկերությունը բուլղար ու հայ ժողովուրդների միջև[39]:

Այս ամենը հաշվի առնելով ՀՀ կառավարությունը հայտարարում էր.

1. ԲՀ հարաբերությունները ՀՀ հետ հիմնավորվում են միջազգային ճանաչված նորմերի և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա. ավելի կոնկրետ անկախության սկզբունքի և տարածքային ամբողջականության, հավասարության, փոխադարձ չմիջամտելու ներքին գործերին և խնդիրների խաղաղ կարգավորմանը:
2. Երկրները կզարգացնեն երկարաժամկետ և կայուն հիմքով փոխշահավետ համագործակցություն քաղաքական, տնտեսական,

[38] АМВнР (Архив Министри на външните работи), д. 10, оп. 49-3, а. е. 230, л. 7.
[39] Նույն տեղում, թ. 11:

մշակութային, հումանիտար, տեղեկատվական և բնապահպանական, ինչպես նաև կրթության, առողջապահության, զբոսաշրջության և սպորտի ոլորտներում:

3. Կողմերը ցանկություն ունեին պահպանել կանոնավոր հարաբերություններ կառավարական մակարդակում, ինչպես նաև հարաբերություններ ձևավորել տարածքային միավորների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:
4. Կողմերը կաշխատեն զարգացնել միջխորհրդարանական հարաբերությունները և փոխանակումներ անել:
5. Կողմերը ակտիվ կգործեն նաև Սևծովյան համագործակցության ուղղությամբ, կողմերի համար կարևոր է անցումը շուկայական հարաբերություններին և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրումը:
6. Կողմերը կգործեն նաև շրջակա միջավայրի պահպանման և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ոլորտներում, կերաշխավորեն փոխադարձ էկոլոգիական անվտանգություն, խուսափեն անդրազգային աղտոտումներից և հատուկ ուշադրություն կդարձնեն Սև ծովի ջրերի մաքրությանը:
7. Կողմերը կունենան կանոնավոր քննարկումներ տարբեր մակարդակներում կապված երկողմ հարաբերություններին և միջազգային խնդիրներին, որոնք փոխադարձ հետաքրքրություն են առաջացնում, և միջազգային կազմակերպություններում կհամագործակցեն, որի անդամներն են կամ կդառնան[40]:

Հայտարարությունում նշվում էր նաև հայ-բուլղարական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ այլ խնդիրներ ու առաջնահերթություններ, որոնք կարևոր էին միջպետական հարաբերությունների զարգացման դիտանկյունից:

1992 թ. հունվարի 18-ին ստորագրվեց արձանագրություն Բուլղարիայի և Հայաստանի ԱԳ նախարարությունների միջև[41]: Սոֆիայում ՀՀ արտաքին գործերի նախարար Րաֆֆի Հովհաննիսյանը

[40] Նույն տեղում, թ. 12-13:

[41] ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 218, թ. 71:

և Բուլղարիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ստոյան Գանևը ստորագրեցին Հայաստանի և Բուլղարիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին և երկու երկրների արտգործնախարարությունների միջև կոնսուլտացիաներ անցկացնելու վերաբերյալ արձանագրություններ[42]: Փաստաթղթում նշվում էր, որ Բուլղարիայի ու Հայաստանի կառավարությունները ցանկանում են հաստատել ընկերական հարաբերություններ և զարգացնել փոխադարձ հավասար համագործակցություն, որոնք ուղղված են ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի և այլ փաստաթղթերի հիման վրա ամրապնդել Եվրոպայում անվտանգությունը և համագործակցությունը[43]:

ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար Գառնիկ Բադալյանի տեղեկությունների համաձայն, փաստաթղթերի ստորագրումից հետո տեղի ունեցած բանակցությունների ժամանակ էր, որ համաձայնություն ձեռք բերվեց երկու երկրների միջև բարեկամության և համագործակցության վերաբերյալ պայմանագիր մշակել, ինչպես նաև կնքել հյուպատոսական կոնվենցիա և Երևանում ու Սոֆիայում դեսպանատներ բացել[44]:

ՀՀ արտաքին գործերի նախարար Ռ. Հովհաննիսյանին, փոխնախարար Ա. Նավասարդյանին, եվրոպական երկրների բաժնի պատասխանատու Ք. Տեր-Ստեփանյանին և պատվիրակության մյուս անդամներին ընդունեց և զրույցներ ունեցավ նաև Բուլղարիայի նախագահ Ժելյու Ժելևը, վարչապետ Ֆիլիպ Դիմիտրովը, Բուլղարիայի խորհրդարանի արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Յորդանովը: Զրույցների ընթացքում շոշափվեցին հայ-բուլղարական պատմական կապերի ամրապնդման և զարգացման հեռանկարների, երկու երկրների միջև երկկողմ փոխշահավետ համագործակցության շրջանակների ընդլայնմանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ առևտրատնտեսական,

---

[42] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, թիվ 12 (357), 21 հունվարի 1992 թ., էջ 3:
[43] АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 230, л. 15.
[44] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, թիվ 12 (357), 21 հունվարի 1992 թ., էջ 3:

տրանսպորտի, գիտատեխնիկական, մշակութային և այլ բնագավառներում[45]:

Կողմերը պայմանավորվեցին համագործակցել ՄԱԿ-ի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի, սևծովյան երկրների համագործակցության և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Շոշափվեցին նաև Արցախի հիմնահարցի լուծման ուղիները, նշվեց դրանում միջազգային հանրության և խաղաղասիրական ուժերի մասնակցության անհրաժեշտությունը[46]:

Այսպիսով, սկսվեց ՀՀ և ԲՀ միջև երկկողմ դիվանագիտական ու քաղաքական հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործընթացը: Երկկողմ հարաբերությունները զարգանում էին ինչպես միջպետական, այնպես էլ միջազգային համագործակցության ճանապարհով: Հայ-բուլղարական հարաբերություններում 1991-1998 թթ. կարևոր էր իրավապայմանագրային դաշտի ձևավորումը, միջազգային կառույցներում համագործակցությունը, քանզի երկու երկրներն էլ գտնվում էին հետխորհրդային փոխակերպումների ժամանակաշրջանում: ԽՍՀՄ փլուզումից և սոցիալիստական ճամբարի անկումից հետո կարևոր էր ընտրել այն ճանապարհը որով կզարգանային ԽՍՀՄ և նախկին սոցիալիստական երկրները: Հետևաբար, այնպիսի գործընթացների ժամանակ, ինչպիսին է հետխորհրդային տրանսֆորմացիան, երբ նախընթաց ժամանակահատվածում մեկ միության մեջ միավորված են եղել բոլորովին տարբեր հետագիծ ունեցած և անգամ տարբեր քաղաքակրթությունների պատկանած երկրներ ու ժողովուրդներ, այդ միության քայքայումից հետո նորանկախ երկրների հետագա ընթացքը որոշող մեկնակետը պետք է լինի այն «տեղը», որտեղ նրանք գտնվել են մինչև միավորման գործընթացը[47]: Այս առումով Հայաստանի և Բուլղարիայի պատմական անցյալը շատ տեղերում է զուգորդվել դեռևս վաղ անցյալից սկսած: Ուստի

[45] Տե՛ս նույն տեղում:
[46] Տե՛ս նույն տեղում:
[47] Տե՛ս Թորոսյան Տ., Ինքնության պահպանման խնդիրը տրանսֆորմացման գործընթացներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2006, № 1, էջ 3-21:

հարաբերությունների ձևավորման արդի ժամանակաշրջանում դա ևս կարևորագույն տեղ էր զբաղեցնում:

Մինչև իրավապայմանագրային դաշտի ձևավորումը և նոր պայմանագրերի կնքումը երկու երկրները որոշեցին առաջնորդվել ԽՍՀՄ և Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության միջև 1976 թ. կնքված պայմանագրով[48]: Միաժամանակ ՀՀ Արդարադատության նախարարությունը իր պատրաստակամությունն էր հայտնում համագործակցել Բուլղարիայի կառավարության հետ և ակնկալում էր, որ այն կլինի բեղմնավոր և փոխշահավետ: ՀՀ Արդարադատության նախարար Վ. Ստեփանյանը հավաստում էր, որ կառավարությանը ներկայացվել է նոր պայմանագրի կնքման նպատակահարմարությունը[49]: Հարկ է նշել, որ նոր պայմանագրի մշակման գործընթացը բավական երկարատև էր:

1993 թ. սկսվել և շարունակվել են երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի ստեղծման աշխատանքները: ՀՀ և ԲՀ համագործակցության լայն հեռանկարներ ունեն նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Բուլղարիան թեև բնակչությամբ և տարածքով մեծ երկիր չէ, սակայն միջազգային հարաբերություններում ակտիվ ներկայության պատկառելի փորձ ունի[50]:

1993 թ. մայիսի 17-18-ը ՀՀ ԱԳ նախարարության պատվիրակության աշխատանքային խումբը եղավ Բուլղարիայում այդ երկրի արտգործնախարարության հրավերով: Բուլղարիա կատարած այցելության ընթացքում բանակցություններ տեղի ունեցան երկկողմ հարաբերություններ հաստատելու համար, քննարկվեցին միջպետական պայմանագրերի նախագծերը: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին նաև Սոֆիայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն բացելու հարցը: Նախատեսվեց մի շարք տնտեսական պայմանագրերի, ինչպես նաև

48 АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 227, л. 2.
49 Տե՛ս նույն տեղում:
50 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

մշակութային համագործակցության վերաբերյալ պայմանագրերի կնքում Հայաստանի և Բուլղարիայի միջև[51]:

1994 թ. հունիսին Սոֆիայում բացվեց ՀՀ դեսպանությունը՝ հայտնի գրող և հրապարակախոս Սևդա Սևանի գլխավորությամբ, որը բավական ակտիվ գործունեություն իրականացրեց հայկական համայնքի կյանքը կազմակերպելու և դժվար խնդիրները լուծելու համար[52]: Բուլղարիան, ինչպես և Հայաստանը այս տարիներին գտնվում էին բավական դժվարին սոցիալ-տնտեսական վիճակում և հայկական համայնքի գոյության պահպանության տեսանկյունից դեսպանության բացումը կարևորագույն իրողություն էր:

1994 թ. ապրիլի 25-26-ը ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը պաշտոնական այցով մեկնեց Բուլղարիա: Սոֆիայում վերջինս հանդիպումներ ունեցավ Բուլղարիայի արտաքին գործերի նախարար Ստանիսլավ Դասկալովի, Ազգային ասամբլեայի փոխնախագահ Յորդան Ծկոլագերսկու, Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Վալենտին Կարաբաշևի հետ[53]: Այցը նախապատրաստվել էր դեռևս 1993 թ. դեկտեմբերին, երբ Սոֆիայում էր գտնվում ՀՀ ԱԳՆ պատվիրակությունը Սևծովյան տնտեսական համագործակցության գագաթաժողովի աշխատանքներին մասնակցելու համար[54]: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, ընդգծվեց տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտությունը: Հանդիպումների ընթացքում նշվեց, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հայ-բուլղարական հարաբերությունները պետք է կառուցվեն նոր մակարդակով: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին զարգացնել համագործակցությունը ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի, ՍԾՏՀ շրջանակներում[55]: Քննարկման առարկա դարձավ նաև Բալկաններում

[51] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Բուլղարիայի և Հունաստանի հետ ավելի սերտ հարաբերություններ», թիվ 103 (354), 3 հունիսի 1993 թ., էջ 2:

[52] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

[53] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ արտգործնախարարի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1:

[54] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 218, թ. 71:

[55] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ արտգործնախարարի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1:

տիրող իրավիճակը և Բոսնիայի հակամարտությունը միջազգային հանրության մասնակցությամբ լուծելու ուղիները: ԲՀ ԱԳ նախարար Ս. Դասկալովին Վ. Փափազյանը հանձնեց «Համագործակցության և բարեկամության մասին» պայմանագրի հայկական նախագիծը: Ազգային ասամբլեայի փոխնախագահի հետ հանդիպման ժամանակ ընդգծվեց երկու երկրների օրենսդիր իշխանությունների շփումների և համագործակցության անհրաժեշտությունը: Այս հանդիպման ընթացքում հավանության արժանացավ նաև խորհրդարանական «Բարեկամության խմբերի» ստեղծման գաղափարը, կարևորվեց երկկողմ հարաբերությունների իրավական բազայի ստեղծումն արագացնելու անհրաժեշտությունը[56]:

Հայ-բուլղարական պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցերի շնորհիվ 1994 թ. սկսած՝ երկու երկրների միջև ստորագրվեցին երկու տասնյակից ավելի միջպետական համաձայնագրեր[57]: Այդ համաձայնագրերից առաջինը վերաբերում էր երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցությանը[58]:

1995 թ. կարևոր տարեթիվ էր հայ-բուլղարական հարաբերությունների զարգացման դիտանկյունից: Հայաստանի համար խիստ կարևորվեց Բուլղարիայի հետ համագործակցությունը, քանզի 1995 թ. դրությամբ նրա հետ դիվանագիտական հարաբերություններ ուներ 130 պետությունների հետ և մոտ 300 միջազգային կազմակերպությունների անդամ էր[59]: Սա լայն ասպարեզ էր բացում Հայաստանի համար Արևելյան Եվրոպայի երկրների միջոցով դեպի աշխարհի տարբեր վայրերի և միջազգային կազմակերպությունների հետ շփումներ հաստատելու համար:

1995 թ. փետրվարի 12-15-ը Երևան ժամանեց Բուլղարիայի արտաքին գործերի, ֆինանսների, էկոնոմիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության և արդարադատության նախարարությունների փորձագետների 13 հոգուց բաղկացած պատվիրակությունը: ՀՀ

---

[56] Տե՛ս նույն տեղում:
[57] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ ..., նշվ. աշխ., էջ 371:
[58] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 347-349:
[59] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

արտգործնախարարության մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը մամուլի ասուլիսում նշեց, որ հայ-բուլղարական հարաբերությունները ջերմ են ու բարեկամական և զարգացման մեծ ներուժ ունեն[60]:

ՀՀ նախագահի Բուլղարիա այցի նախապատրաստական աշխատանքների համար կարևոր էր 1995 թ. փետրվարի 23-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ս. Սևանին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին դեսպանատան աշխատանքները և ՀՀ նախագահի՝ Բուլղարիա պաշտոնական այցելության ծրագիրը[61]:

Ապրիլի 10-ին Բուլղարիա մեկնած ՀՀ պատվիրակությունը հանդիպեց Բուլղարիայի նախագահ Ժելյու Ժելևի, վարչապետ Ժան Վիդենովի, խորհրդարանի նախագահ Բլագովեստ Սենդեվի, ինչպես նաև բուլղարահայ համայնքի հետ: ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Վ. Փափազյանը, ներքինն գործերի նախարար Վանո Սիրադեղյանը, էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանը, տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը, Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Սևդա Սևանը, պաշտոնատար այլ անձինք[62]:

Երկու երկրների նախագահների բանակցությունների արդյունքում ստորագրվեց 10 փաստաթուղթ[63]: Գլխավոր փաստաթուղթը՝ երկու երկրների միջև բարեկամության և համագործակցության միջպետական պայմանագիրն էր, որը ստորագրեցին երկու երկրների ղեկավարները[64]: Պայմանագիրը ԲՀ խորհրդարանի կողմից վավերացվեց 1995 թ. հոկտեմբերի 26-ին[65]: Ըստ

---

60 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Բուլղարիայի և Հայաստանի միջև սերտ համագործակցություն», թիվ 28 (782), 16 փետրվարի 1995 թ., էջ 1:

61 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունելություն ՀՀ նախագահի մոտ», թիվ 37 (1157), 24 փետրվարի 1995 թ., էջ 1:

62 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահը մեկնեց Բուլղարիա», թիվ 81 (1201), 11 ապրիլի 1995 թ., էջ 1:

63 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Նախագահի այցելությունը Սոֆիա», թիվ 82 (1202), 12 ապրիլի 1995 թ., էջ 1:

64 Տե՛ս նույն տեղում:

65 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 220, թ. 123:

պայմանագրի կողմերը պայմանավորվում էին զարգացնել բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը ինքնիշխան հավասարության, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնամխելիության, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու, ժողովուրդների իրավահավասարության և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքի, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների հիման վրա[66]: Կողմերը պայմանավորվում էին նաև ընդլայնել համագործակցությունը տրասպորտի բնագավառում, ստորագրել միջկառավարական համաձայնագրեր տրանսպորտի առանձին տեսակների վերաբերյալ: Պայմանագրում ՀՀ և ԲՀ կառավարությունները պայմանավորվում էին նաև իրականացնել համագործակցություն շրջակա միջավայրի պաշտպանության և ներկա վիճակի բարելավման բնագավառում՝ մասնավորապես վերսահմանային աղտոտումների և թափոնների ու վտանգավոր նյութերի փոխադրումների կանխման, նվազեցման, վերացման և վերահսկողության նպատակով, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և կենսաբազմազանության պահպանության և պահպանվող բնական տարածքների գծով փորձի փոխանակման ինչպես նաև, էկոլոգիապես մաքուր արտադրությունների փոխանակման և կիրառման ընդլայնման և բարձրարդյունավետ բնապահպանական ու վերականգնողական միջոցառումների իրականացման համար[67]: Պայմանագրի 19-րդ հոդվածով սահմանվում էր, որ կողմերը կընդլայնեն և կխորացնեն համագործակցությունը ահաբեկչության, թմրամոլության, թմրանյութերի, զենքի և ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի բույսերի և կենդանիների տեսակների ապօրինի փոխադրումների, դրամանիշների և արժեթղթերի կեղծման, մաքսանենգության և արժութային ու մշակութային արժեքների անօրինական ներմուծման և արտահանման, անօրինական եկամուտների օրինականացման, ինչպես նաև

[66] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 480:
[67] Տե՛ս նույն տեղում:

քաղաքացիական ավիացիայի անվտանգության ուղղված գործողությունների դեմ պայքարում[68]: Այնուհետև ստորագրվեցին քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին, եկամուտների և ակցիզի կրկնակի հարկման վերաբերյալ, միջկառավարական օդային հաղորդակցության, կապիտալ ներդրումների շահագործման և փոխպաշտպանության, միջազգային ավտոմոբիլային փոխադրումների, բույսերի կարանտինի և պաշտպանության բնագավառում համագործակցության և անասնաբուժասանիտարական համագործակցության մասին պայմանագրեր ու համաձայնագրեր[69]:

Փաստաթղթերից հատկապես կարևոր էր ՀՀ և ԲՀ միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին պայմանագիրը: Ըստ պայմանագրի կողմերը պարտավորվում էին զարգացնել իրենց հարաբերությունները և համագործակցությունը հավասարության, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնամխելիության, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու, ժողովուրդների իրավահավասարության և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքի, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների հիման վրա[70]: Պայմանագիրը ուժի մեջ է մտել 1997 թ. նոյեմբերի 7-ից[71]:

Մյուս փաստաթղթերը հայկական կողմից ստորագրեցին ԱԳ նախարար Վ. Փափազյանը, ՆԳ նախարար Վ. Սիրադեղյանը, էկոնոմիկայի նախարար Ա. Եղիազարյանը և տրանսպորտի ու հաղորդակցության նախարար Հ. Քոչինյանը:

ՀՀ և ԲՀ միջև քրեական գործերով իրավական օգնության մասին պայմանագրով սահմանվեց, որ կողմերը պարտավորվում էին քրեական գործերով միմյանց իրավական օգնություն ցույց տալ մի շարք ուղղություններով, որոնք էին անձանց հետախուզումը և ճանաչումը, դատական ծանուցագրերի և դատական այլ փաստաթղթերի

---

[68] Տե՛ս նույն տեղում:
[69] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 485-551:
[70] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 480-484:
[71] Տե՛ս նույն տեղում, էջ 484:

հանձնումը, կասկածյալների, մեղադրյալների և ամբաստանյալների հարցաքննումը, ապացույցների առգրավումը և այլն[72]: Հետագայում կողմերը նպատակահարմար էին համարում նաև համագործակցությունը Հայաստանի և Բուլղարիայի արդարադատության նախարարությունների միջև, որի ընթացքում առաջնային էին համարվում փոխադարձության հիման վրա երկու երկրների դատական մարմինների փոխշփումների կազմակերպումը, փորձի փոխանակումը, համատեղ գիտագործնական սեմինարների և խորհրդակցությունների անցկացումը, դատական փորձաքննության ոլորտում շփումները, ինչպես նաև արդարադատության նախարարությունների իրավասությանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերով հարաբերությունների հաստատումը[73]:

Ապրիլի 11-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդիպում ունեցավ Բուլղարիայի վարչապետ Ժ. Վիդենովի հետ, որի ժամանակ մտքեր փոխանակվեցին երկու երկրներում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական վերափոխումների, տնտեսության ոլորտում փոխգործակցության հարցերի շուրջ[74]:

1995 թ. ապրիլին ՀՀ նախագահի այցելության վերջին օրը՝ ապրիլի 12-ին, Լ. Տեր-Պետրոսյանը այցելեց Բուլղարիայի խորհրդարան՝ ժողովրդական ժողով և հանդիպում ունեցավ նրա նախագահ, ակադեմիկոս Բլագովեստ Սենդովի հետ: Խորհրդարանում ելույթի ընթացքում ՀՀ նախագահը Բուլղարիայի խորհրդարանի պատգամավորներին ներկայացրեց Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը, տնտեսական բարեփոխումների ընթացքը, այն գործոնները, որոնք ազդում են մեր երկրի դրության վրա և որոնցով Հայաստանը տարբերվում է վարչահրամայական համակարգից՝ ազատ, քաղաքացիական, ժողովրդավարական

[72] Տե՛ս նույն տեղում, էջ 485:
[73] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 43:
[74] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Նախագահի այցելությունը Սոֆիա», թիվ 82 (1202), 12 ապրիլի 1995 թ., էջ 1:

հասարակագի անցնող մյուս երկրներից, այդ թվում Բուլղարիայից[75]:

Հայաստանում ստեղծված բարդ քաղաքական դրությունը, 1995 թ. Սահմանդրության ընդունում, խորհրդարանական, իսկ 1996 թ. նախագահական ընտրությունները, որոշակիորեն դանդաղեցրեցին ԲՀ հետ հարաբերությունների զարգացման արագ ընթացքը: Սակայն դա պայմանավորված չէր միայն ներհայաստանյան խնդիրներով, խնդիրներ կային նաև ԲՀ-ում, որտեղ անդադար կառավարությունների փոփոխություններ էին կատարվում, այդ տարիներին այնտեղ ուժեղացան թուրք քաղաքական գործիչները, իսկ որոշակի ժամանակահատվածում նույնիսկ վերջիններս ղեկավարեցին կառավարությունը: Այս դիտանկյունից կարևորվեց երկու երկրների հարաբերությունները Թուրքիայի հետ, քանզի երկուսն էլ ունեին հակասություններ այդ երկրի հետ և համագործակցությունը այս ճակատում բավական կարևոր էր: Սակայն այստեղ Բուլղարիան վարում էր զգուշավոր քաղաքականություն, քանզի Թուրքիան համարվում էր Բուլղարիայի խոշորագույն տնտեսական գործընկերներից մեկը: Բուլղարիայում էին ապրում շուրջ 800 000 էթնիկ թուրքեր, որոնք մեծապես ազդում էին ինչպես Բուլղարիայի տնտեսական, այնպես էլ քաղաքական գործունեության վրա: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ թուրքերը Բուլղարիայում երկրորդ էթնիկ խումբն են բուլղարներից հետո: Նրանք 8 տարի շարունակ Բուլղարիայի կառավարող կոալիցիայի անդամներ են եղել[76]: Բուլղարիայում կառավարական ճգնաժամի ժամանակահատվածում Ժելյու Ժելևը կառավարությունը կազմելու մանդատը հանձնեց Բուլղարիայում բավական կշիռ ունեցող թուրքական կուսակցությանը, որը խորհրդարանում 3-րդ ուժն էր համարվում և, հանդես էր գալիս իբրև հավասարակշռող ուժ[77]: Այս պայմաններում հայկական կողմը ստիպված էր հարաբերություններ հաստատել թուրք գործիչներ ընդգրկող բուլղարական կառավարության հետ: Սակայն հարկավոր է

---

[75] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահի պաշտոնական այցը Սոֆիա ավարտվեց», թիվ 83 (1203), 13 ապրիլի 1995 թ., էջ 1:
[76] Տե՛ս Նահապետյան Հ., նշվ. աշխ., էջ 93:
[77] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիան Ամերիկա չէ, և հայերն այնտեղից կվերադառնան Հայաստան», թիվ 71 (2028), 14 ապրիլ 1998 թ., էջ 3:

ընդգծել, որ թուրքերը այստեղ հանդես էին գալիս գլխավորապես Բուլղարիայի Հանրապետության և տեղի թուրքական համայնքի շահերից ու հայերի համար դժվարություններ չէին առաջացնում:

Այնուամենայնիվ, քաղաքական հարաբերությունները որոշակի դադարից հետո սկսեցին աստիճանաբար վերականգնվել և դրա լավագույն ապացույցն էր 1997 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ նախագահի կողմից Բուլղարիայի ԱԳ նախարար Նադեժդա Միխայիլովայի և նրա գլխավորած պատվիրակության մի խումբ անդամների ընդունելությունը: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Բուլղարիայում ՀՀ գործերի հավատարմատար Ս. Սևանը: Ն. Միխայլովան Հայաստանի նախագահին ներկայացրեց Բուլղարիայում անցկացվող բարեփոխումները և աջակողմյան կառավարության նվաճումներն անցած ժամանակաշրջանում: Անդրադառնալով տարածաշրջանային համագործակցությանը՝ Միխայլովան կարևորեց տրանսպորտային միջանցքի ծրագրին Հայաստանի մասնակցությունը[78]:

Լ. Տեր-Պետրոսյանը իր գոհունակությունը հայտնելով Միխայլովայի այցի առթիվ, նշեց, որ երկու երկրների խնդիրներն ընդհանուր են, ուստի՝ հասկանալի են միմյանց համար: Պատմության ընդհանրությունը, ինչպես նաև բուլղարահայ համայնքի առկայությունը մերձեցնում են երկու երկրներին: Զրույցի ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունները, տնտեսական կապերի խորացման, երկու երկրների գործարարների շփման հնարավորությունները, Սևծովյան համագործակցության շրջանակներում հարաբերությունների զարգացումը[79]:

Նույն օրը Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը ևս ընդունեց Բուլղարիայի արտաքին գործերի նախարարին: Բ. Արարքցյանը անդրադառնալով հայ-բուլղարական հարաբերություններին, նշեց, որ այդ փուլում նկատվում են փոխշահավետ համագործակցության ընդլայնման հեռանկարներ: Այդ առնչությամբ Բուլղարիայի արտգործնախարարը նշեց, որ ստորագրված շուրջ 15 միջպետական համաձայնագրերը ստեղծում են

[78] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահն ընդունեց Բուլղարիայի արտգործնախարարին», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:
[79] Տե՛ս նույն տեղում:

կայուն հիմք, որի վրա կխարսխվեն երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերությունները: Բ. Արարքցյանը նաև հույս հայտնեց, որ միջխորհրդարանական կապերի ընդլայնումը կօժանդակի միջպետական համագործակցության զարգացմանը, այդ թվում միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Բուլղարիայի արտգործնախարարը հավաստիացրեց, որ իր երկիրը կանի հնարավորը նպաստելու համար եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրմանը: Երկուստեք կարևորվեց նաև միջազգային և տարածաշրջանային անվտանգության և համագործակցության հարցերում փոխգործակցությունը, քննարկվող մի շարք հարցերի վերաբերյալ արձանագրվեց մոտեցումների ընդհանրություն[80]:

Խոսելով տարածաշրջանային հիմնախնդիրների, մասնավորապես, ղարաբաղյան հակամարտության մասին, ԱԺ նախագահ Բ. Արարքցյանը նշեց, որ ուժային լուծումները քաղաքական պարտադրանքի ձևով չեն կարող հանգեցնել հիմնախնդրի հանգուցալուծմանը, առանձին դեպքերում կարող են առաջ բերել հակազդեցություն: Նա կարևորեց հակամարտող կողմերի միջև անմիջական փոխշփումները՝ բանակցային գործընթացի շարունակությունը: Երկուստեք հույս հայտնվեց, որ արևելաեվրոպական և կովկասյան տարածաշրջաններում կայունության և խաղաղության ամրապնդմանը կնպաստեն տնտեսական համագործակցության զարգացումը և բարի կամքի դրսևորումը: Ընդունելությանը ներկա էին նաև ՀՀ ԱԳՆ փոխնախարար Վարդան Օսկանյանը, Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ս. Սևանը[81]:

Բուլղարիայի ԱԳ նախարարը իր այցի շրջանակներում հանդիպեց նաև ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանին: Ողջունելով հյուրերին, վարչապետն ընդգծեց, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև քաղաքական խնդիրներ գոյություն չունեն, ինչը հնարավորություն է տալիս առանց խոչընդոտների զարգացնել տնտեսական և մշակութային կապերը: Նրա խոսքերով, երկու ժողովուրդների միջև առկա է ջերմ համակրանք, և դա բարենպաստ

[80] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունելություն Ազգային ժողովի նախագահի մոտ», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:
[81] Տե՛ս նույն տեղում:

մթնոլորտ էր ստեղծում հարաբերությունների հետագա խորացման համար: Թեև Հայաստանի և Բուլղարիայի միջև ստորագրված են մի շարք համաձայնագրեր, որոնք որոշակի իրավական հիմք են ստեղծում երկկողմ հարաբերությունների զարգացման համար, սակայն, ըստ վարչապետի, դա դեռևս բավարար չէ, և անելիքները շատ են: Հանդիպման ընթացքում երկու երկրների միջև որպես հեռանկարային ոլորտներ նշվեցին տրանսպորտային անվտանգությունը, առողջապահությունը, մշակույթը: Կարևորվեց նաև Հայաստան-Վրաստան-Բուլղարիա եռակողմ համագործակցությունը[82]:

1997 թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի և Բուլղարիայի արտգործնախարարներ Ա. Արզումանյանը և Ն. Միխայլովան արձանագրություն ստորագրեցին մի շարք պայմանագրերի վավերացման և փոխանակման մասին: Երկու երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարները ընդգծեցին, որ պայմանագրերով ստեղծվում են իրավական հիմքեր Հայաստանի և Բուլղարիայի հարաբերությունների համար[83]: Բանակցությունների ընթացքում նշվել է, որ Հայաստանը և Բուլղարիան կարող են համագործակցել ինչպես ՄԾՏՀ շրջանականերում, այնպես էլ տուրիզմի, տրանսպորտի, հանցագործության դեմ պայքարի և այլ ոլորտներում[84]: Հանդիպման ընթացքում Ն. Միխայլովային տրվեց նաև հավաստում, որ Հայաստանը 2002-2005 թթ. Բուլղարիային կաջակցի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ դառնալու հարցում:

Վերը նշված հանդիպման ընթացքում ՀՀ արտգործնախարար Ա. Արզումանյանը ընդգծեց տարածաշրջանի երկրների միջև եռակողմ և քառակողմ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը: ԲՀ արտգործնախարարը նշել է, որ եվրոպական արժեքները լավ հիմք կարող են հանդիսանալ Հայաստանի և Բուլղարիայի համագործակցության համար: Կարևորելով իր՝ որպես Բուլղարիայի առաջին արտգործնախարարի այցը Հայաստան, Ն. Միխայլովան իրեն

---

[82] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Վարչապետն ընդունեց Բուլղարիայի դեսպանին», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1:
[83] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:
[84] Տե՛ս նույն տեղում:

անվանել է բարի կամքի դեսպան Հայաստանում: «Քաղաքականությունը նոր պահանջներ է դնում մեր առջև և, ի պատասխան այս պահանջների, ես անհրաժեշտ համարեցի այցելել Հայաստան»- նշել է Ն. Միխայլովան: «Հայաստանի և Բուլղարիայի շահերի ասպարեզը մեկն է և, ի շահ երկու կողմերի, այդ ասպարեզը պետք է օգտագործվի: Բուլղարիան կողջունի, եթե Հայաստանը համագործակցի իր հետ ահաբեկչության, կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, թմրանյութերի փոխադրման, կանխարգելման ոլորտներում»,- նշեց Բուլղարիայի արտգործնախարարը: Նախարարները կարևորեցին Ասիան Եվրոպային միացնող «Մետաքսի»՝ որպես վստահության և բարգավաճման ճանապարհի նշանակությունը: Հանդիպման վերջում նախարարները քննարկել են նաև Հայաստանի և Բուլղարիայի մոտեցումները հարևան պետությունների հետ հարաբերությունների կարգավորման խնդրում[85]:

Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության հարաբերություններում կարևոր էր արտաքին քաղաքական խնդիրների շուրջ մոտեցումները: Այդպիսի հարցերից էր Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որի շուրջ Բուլղարիան ուներ հստակ դիրքորոշում: 1991-1998 թթ. ընթացքում Բուլղարիան մի շարք անդրադարձներ կատարեց Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին, որոնք հիմնականում դիվանագիտական էթիկայի շրջանակներում էին և չէին տարբերվում այդ ժամանակաշրջանում աշխարհի մի շարք երկրների ունեցած հավասարակշիռ մոտեցումներից: Վերջինիս հիմնվում էր միջազգային հարթակներում ընդունված սկզբունքների վրա: Բուլղարիան բազմիցս հայտարարում էր, որ հարգում է Մինսկի խմբի աշխատանքները և վստահում էր եռանախագահների գործունեությանը: Երկու երկրների՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ հարաբերություններում այն հանդես էր գալիս խիստ հավասարակշռված և կողմերին այնպիսի աջակցություն չէր ցուցաբերում, որը կհակասեր մյուսի շահերին:

---

[85] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի շահերի ասպարեզը մեծ է», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

ԼՂ խնդիրը հայ-բուլղարական հարաբերություններում մշտական քննարկման առարկա էր ամենաբարձր հանդիպումների ժամանակ: Հայաստանի և Բուլղարիայի ղեկավարների հանդիպումներին հաջորդում կամ նախորդում էին բուլղարական կողմի հանդիպումները Ադրբեջանի ղեկավարության հետ, որը հիմնականում մեկնաբանվում էր տնտեսական գործոններով[86], իսկ Բուլղարիայի ղեկավարների այցերը կրում էին գլխավորապես տարածաշրջանային բնույթ: Այդ քայլով ԲՀ հավասարակշռում էր տարածաշրջանում իր քաղաքականությունը:

Հայաստանի համար կարևոր էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ Բուլղարիայի վերաբերմունքը, ինչը մշտապես արծարծվում էր տարբեր տեսակի հանդիպումների ժամանակ: Դեռևս Ղարաբաղյան հակամարտության տարիներին Բուլղարիան մի քանի անգամ իր վերաբերմունքը արտահայտեց կոնֆլիկտի լուծման շուրջ և դա շարունակվեց նաև զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո:

1997 թ. Հայաստանի և Բուլղարիայի արտգործնախարարներ Ա. Արզումանյանը և Ն. Միխայիլովան բանակցությունների ընթացքում քննարկեցին նաև ԼՂ խնդիրը: Այս առնչությամբ Ն. Միխայիլովան հայտնեց, որ Բուլղարիան ողջունում է 1994 թ. ի վեր ղարաբաղյան ռազմաճակատում պահպանվող զինադադարը, պատրաստ է աջակցել հակամարտության կարգավորմանն ուղղված Հայաստանի կառավարության ջանքերին և հանդես է գալիս հակամարտությունը բանակցությունների միջոցով կարգավորելու օգտին[87]:

Հարկ է նշել, Հայաստանի համար կարևոր էր նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ Բուլղարիայի վերաբերմունքը, ինչը մշտապես արծարծվում էր տարբեր տեսակի հանդիպումների ժամանակ: Դեռևս Ղարաբաղյան հակամարտության տարիներին Բուլղարիան մի քանի անգամ իր վերաբերմունքը արտահայտեց կոնֆլիկտի լուծման շուրջ և դա շարունակվեց նաև զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո: Դիվանագիտական

[86] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Զարգացումները վերածենք գործնական հարաբերությունների», թիվ 236 (2450), 3 դեկտեմբերի 1999, էջ 1:

[87] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը կխորանա», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

հարաբերությունների հաստատումից ընդամենը երկու ամիս անց ԲՀ ԱԳ նախարար Ստոյան Գանևը ՀՀ իր պաշտոնակից Ր. Հովհաննիսյանին հղած նամակում նշում էր, որ Բուլղարիան անհանգստացած է և հետևում է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող զարգացումներով և պատրաստ է իր ուժերի ներածի չափով գործողություններ ձեռնարկել որպիսի խնդիրը լուծվի քաղաքական երկխոսությունների ճանապարհով, հիմք ընդունելով Միջազգային իրավունքի սկզբունքները և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքային տեսանկյունից, Բուլղարիայի Հանրապետությունը հարգանքով և հասկանալով է մոտենում առանձին երկրների բնակչության ինքնորոշմանը: Միաժամանակ Ս. Գանևը խնդրի լուծման ամենաընդունելի տարբերակն էր համարում որպես հիմք Հելսինկյան եզրափակիչ ակտը և այլ փաստաթղթեր՝ ուղղված անվտանգությանը և համագործակցությանը Եվրոպայում: Այս ամենի հետ կապված բուլղարները աջակցում էին Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ կոնֆերանսին, որտեղ ուղիներ, ճանապարհներ էին փնտրվում ճգնաժամը խաղաղ պայմաններում լուծելու և հետագա փոխադարձ զարգացում ապահովելու համար: Բուլղարիայի կառավարությունը կոչ էր անում անհապաղ կրակի դադարեցում, որով հնարավորություն կլինի մարդկային կորուստներից զերծ մնալ և ստեղծել շահավետ պայմաններ խնդիրը քաղաքական միջավայրում լուծելու համար[88]: Բուլղարիայի կառավարությունը այսպիսով փաստում էր, որ մի շարք փաստաթղթերի հետ միասին իրենց համար ընդունելի է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Հետագա տարիներին Բուլղարիան որդեգրեց ԼՂ հարցում ավելի հավասարակշիռ մոտեցում, ստատուս քվոն չխախտելու և Ադրբեջանի հետ հարաբերությունները կայունության մեջ պահպանելու համար: Բուլղարիան Ադրբեջանի հետ ներգրավված էր մի շարք տարածաշրջանային ծրագրերում, որոնց վտանգումը խիստ անբարենպաստ ազդեցություն կունենար ԲՀ տնտեսական դրության վրա: Սակայն բուլղարական կողմը փորձում էր օգնություն ուղարկել ԼՂ, հատկապես հակամարտության օրերին:

[88] АМВнР, д. 10, оп. 49-3, а. е. 226, л. 3.

Մասնավորապես 1994 թ. Բուլղարական Կարմիր խաչի օգնությամբ Հայաստան փոխադրվեց դեղորայք, որը հատուկ ցուցումով պետք է ուղարկվեր Լեռնային Ղարաբաղ[89]:

Հետագայում ևս մի շարք հանդիպումների ընթացքում երկու երկրների ղեկավարները անդրադարձներ կատարեցին այդ հիմնախնդրի վերաբերյալ: Մասնավորապես անդրադառնալով ԼՂ խնդրին՝ Բուլղարիայի Հանրապետության նախագահ Պ. Ստոյանովը իր երկրի անունից պատրաստակամություն հայտնեց նպաստել հարցի խաղաղ կարգավորմանը: «Մինչև վերջերս Բալկանները որպես «վառոդի տակառ» էին դիտվում: Սակայն այս պահին մեր տարածաշրջանային հարևանների հետ այնպիսի հարաբերություններ ունենք, ինպիսիք չեն եղել շուրջ մեկ դար: Այժմ մենք հարաբերվում ենք փոխգործակցության ամենատարբեր ձևաչափերում. դրան ձգտում են մեր տարածաշրջանի գրեթե բոլոր երկրները»:

Այսպիսով, հայ-բուլղարական հարաբերությունները 1991-1998 թթ. բավական ակտիվ զարգացում ապրեցին: Դրանք ընգրկեցին կյանքի տարբեր ոլորտներ ներառելով, ինչպես արտաքին ու ներքին քաղաքականությունը, այնպես էլ տնտեսական, մշակութային, հասարակական գործընթացները: Հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների զարգացման համար խիստ կարևոր էր հայկական համայնքի և տեղի հայկական կառույցների առկայությունը, որոնք լրացուցիչ խթան էին ստեղծում երկկողմ հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում: Անշուշտ, երկկողմ հարաբերությունների մեջ կարևոր էր նաև ԼՂ հակամարտության նկատմամբ Բուլղարիայի ունեցած հավասարակշիռ մոտեցումը: Նույն կերպ Հայաստանը կարևորում էր նաև Բալկաններում կայունության պահպանմանը և այս հարցում իր աջակցությունն էր հայտնում Բուլղարիայի կառավարող շրջաններին: Սակայն, հարկ է նշել, որ երկկողմ հարաբերությունները այս տարիներին երբեմն դանդաղում էին,

---

89 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանք, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, գ. 1, գ. 218, թ. 123:

ինչը գլխավորապես պայմանավորված էր երկու երկրների քաղաքական ճգնաժամերով: Այնուամենայնիվ, 1991-1998 թթ. Բուլղարիայի և Հայաստանի միջև հարաբերությունների ձևավորումը և զարգացումը հիմք հանդիսացան հետագա շրջանում դրանց առավել ամրապնդմանն ու առաջընթացին:

## 1.2. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1998-2008 ԹԹ.)

Հայ-բուլղարական հարաբերությունները ձևավորվել ու կայացել են ՀՀ անկախության առաջին տարիներին: Երկու երկրներում կառավարման համակարգի փոփոխությունների արդյունքում սկսվեց նոր ժամանակաշրջան, որն իր արտահայտությունը գտավ նաև դիվանագիտական դաշտում:

1994 թ. սկսած երկու երկրների միջև ստորագրվեցին երկու տասնյակից ավելի միջպետական համաձայնագրեր[90]: Այդպիսով հիմք դրվեց հայ-բուլղարական ակտիվ դիվանագիտական ու քաղաքական հարաբերությունների զարգացմանը, որի համար կարևորագույն տարիներ էին 1998-2008 թթ.: Հարաբերությունները առավել ակտիվացան միջխորհրդարանական, միջկառավարական ոլորտներում, որն ազդեց երկկողմ տնտեսական կապերի ամրապնդման, մշակութային, կրթական համագործակցության զարգացման վրա: Հայ-բուլղարական հարաբերություններում այս փուլում կարևոր էր միջազգային կառույցներում միմյանց օժանդակելը:

Այս տարիներին հայ-բուլղարական հարաբերություններում մեծ ներդրում ունեցավ Բուլղարիայի Հանրապետությունում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, ապա ՀՀ դեսպան Սևադա Սևանը: Վերջինս 1998 թ. փետրվարի 16-ին հանդիպում ունեցավ ԲՀ խորհրդարանի նախագահի Յ. Սոկոլովի հետ, որի ընթացքում շոշափվեցին հայ-բուլղարական հարաբերություններին վերաբերող երեք կարևորագույն հարցեր:

Դրանցից առաջինը վերաբերում է ՀՀ ԱԺ-ում քաղաքական ուժերի նոր հարաբերակցությանը: Հաջորդ խնդիրը կապված էր Հայաստանի գործուն մասնակցությանը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի աշխատանքին, որի ժամանակ ցանկանում էին քննարկել «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» կոնվենցիայի վերաբերյալ բանաձևի նախագիծը: Ս. Սևանը առաջարկեց, որպեսզի ԲՀ խորհրդարանը ավելի մեծ ակտիվություն ցուցաբերի նշված հարցի վերաբերյալ, քանզի Բուլղարիան ստորագրել էր, սակայն չէր վավերացրել նշված կոնվենցիան:

Հաջորդ խնդիրը որ քննարկվեց հանդիպման ընթացքում վերաբերում էր մամուլում լույս տեսած տեղեկատվությանը, ըստ որի Բուլղարիայի կառավարությունը որոշում էր կայացրել Հարավային Կովկասում և Միջին Ասիայում դեսպանություններ

[90] Տե՛ս Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության ..., նշվ. աշխ., էջ 260:

բացել: Ս. Սևանը հույս հայտնեց, որ հարցը կլուծվի դրականորեն՝ առաջին հերթին Երևանում ԲՀ դեսպանության բացման խնդիրը[91]:

Յ. Սոկոլովը շնորհակալություն հայտնեց տրամադրած տեղեկատվության համար և գոհունակություն արտահայտեց, որ Հայաստանում վերջերս տեղի ունեցած փոփոխությունները ամրապնդում են ժողովրդավարության սկզբունքները: Նա գնահատեց Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը որպես երկրի ներքին քաղաքական իրավիճակի հնարավոր ապակայունացման կանխմանը ուղղված կարևորագույն քայլ:

Հանդիպման ընթացքում Յ. Սոկոլովը տեղեկացրեց Ս. Սևանին, որ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» կոնվենցիայի վերաբերյալ բանաձևի նախագիծը ԲՀ խորհրդարանի իրավասությունների սահմաններում աջակցություն կստանա ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի ընթացքում[92]:

Արդեն 1998 թ. փետրվարի 18-ին Ս. Սևանը հանդիպեց ԲՀ ԱԳ փոխնախարար Բոյկո Միրչևի հետ: Հանդիպմանը ներկա էր նաև ԲՀ ԱԳՆ «ԱՊՀ երկրներ»-ի վարչության փորձագետ Գ. Կարաստամատովը[93]: Այս հանդիպմանը ևս անդրադարձ կատարվեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» կոնվենցիային և վերահաստատվեց բանաձևին աջակցելու պատրաստակամությունը:

Փոխնախարարը գոհունակությամբ նշեց 1997 թ. երկկողմանի հարաբերությունների նոր թափը, որի գագաթնակետն էր ԲՀ ԱԳ նախարար Նադեժդա Միխայլովայի պաշտոնական այցելությունը Երևան: Որպես հարաբերությունների զարգացման անմիջական արդյունք Բ. Միչևը հայտարարեց ԲՀ կառավարության փետրվարի 16-ի որոշումը Երևանում ԲՀ դեսպանություն բացելու մասին: Հարկ է նշել, որ ԲՀ-ում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հաստատվելու առաջին իսկ օրից հետևողականորեն ջանքեր են

[91] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 22,23:
[92] Նույն տեղում:
[93] Նույն տեղում, թ. 25:

գործադրվել ՀՀ-ում ԲՀ դեսպանություն բացելու ուղղությամբ: 1992 թ. գոյություն ուներ կառավարության որոշումը, ըստ որի ԲՀ կբացի դեսպանություն միայն Վրաստանում, որը կսպասարկի և՛ Հայաստանը,՛ և Ադրբեջանը: Հաջորդող կառավարություններին հաջողվեց համոզել որպեսզի վերջիններս վերանայեն 1992 թ. որոշումը և դեսպանություն բացեն նաև Երևանում: Սակայն այդ նպատակը վերը նշված կառավարությունները չկարողացան իրականացնել: 1997 թ. իշխանության եկած նոր կառավարությունը Իվան Կոստովի գլխավորությամբ գտավ, որ տնտեսական ճգնաժամի պայմաններում անհրաժեշտ չէ պահել բազմաթիվ դեսպանություններ և որոշեց փակել 30-ից ավել դիվանագիտական ներկայացուցչությունները: Միաժամանակ կառավարությունը վերանայեց արտաքին և տնտեսական քաղաքականությունը և իր հայացքն ուղղեց բուլղարական հին շուկաներին՝ դեպի Մերձավոր Արևելք և նախկին խորհրդային հանրապետություններ: Այս նոր դիրքորոշումը համահունչ էր ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի մեծ պետությունների ենթակառուցվածքային ծրագրերին. այն է վերականգնել և նոր ճանապարհներ բացել Արևելք-Արևմուտք և Հարավ-Հյուսիս ուղղություններով: Մինչև ԲՀ ԱԳ նախարար Ն. Միխայլովայի պաշտոնական այցերը Հարավային Կովկաս և Միջին Ասիա բուլղարական կողմի տարբեր մակարդակի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում շեշտվում էր տարածաշրջանի երեք հանրապետություններում դեսպանություններ բացելու անհրաժեշտությունը: Իր ուղևորության ժամանակ Ն. Միխայլովան անձամբ համոզվեց դրանում և համապատասխան առաջակ ներկայացրեց ԲՀ կառավարությանը[94]: Քանի որ այդ տարածաշրջանի երկրներից Սոֆիայում դեսպանություն ուներ միայն Հայաստանը, ուստի որոշվեց առաջինը դեսպանություն բացել Երևանում:

[94] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 26:

Բ. Միրչը հանդիպման ժամանակ հույս հայտնեց նաև, որ ՀՀ-ում նախագահական ընտրությունների անցկացումից հետո երկկողմանի հարաբերությունների զարգացման թափը կշարունակվի[95]:

Հայաստանում իշխանության փոփոխությունից հետո կրկին ակտիվություն նկատվեց հայ-բուլղարական հարաբերություններում: Այս առումով կարևոր էր 1999 թ. մարտի 5-ին ԱԺ Ոսկեզօծ դահլիճում Բուլղարիայի ժողովրդական ժողովի պատվիրակության հետ հանդիպումը: ՀՀ ԱԺ նախագահը այս հանդիպումը համարեց դեռևս 1998 թ. սեպտեմբերին երկու երկրների խորհրդարանների միջև սկսված երկխոսության տրամաբանական շարունակությունը, որի արդյունքն էր ՀՀ Ազգային ժողովում հայ-բուլղարական պատգամավորական խմբի ստեղծումը[96]: Այսպիսով, սկիզբ դրվեց հայ-բուլղարական ակտիվ միջխորհրդարանական հանդիպումներին, որը որակական նոր մակարդակի բարձրացրեց երկկողմ հարաբերությունները:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԱԺ նախագահը կարևորեց ՍՏՀԿ-ում Հայաստանի և Բուլղարիայի արդյունավետ համագործակցությունը: Ընդգծվեց նաև դատաիրավական բարեփոխումների բնագավառում փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Կարևորվեց նաև երկու երկրներում կաշառակերության դեմ տարվող պայքարի մեխանիզմների մշակումը[97]:

Այցի շրջանակներում ԲՀ խորհրդարանական պատվիրակությունը ՀՀ Ազգային ժողովում մի շարք հանդիպումներ ունեցավ: ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Ռոբերտ Մնացականյանի կարծիքով Բուլղարիան կարող էր աջակցել Հայաստանի օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն: Վերջինիս կարծիքով երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ընդլայնումը հիմք կհանդիսանար Եվրոպայի Խորհրդի միջխորհրդրանական վեհաժողովի շրջանականերում համագործակցության համար: Բուլղարական պատվիրակությունը, ի

[95] Նույն տեղում, թ. 26, 27:
[96] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Միջպետական հարաբերությունների զարկերակը խորհրդարանական առնչություններն են», թիվ 43 (2257), 6 մարտի 1999 թ., էջ 1:
[97] Տե՛ս նույն տեղում:

դեմս խորհրդարանի անդամ Յուլիա Բերբերյանի, պատրաստակամություն հայտնեց օժանդակելու Հայաստանին ԵԽ լիիրավ անդամ դառնալու հարցում[98]:

Այցի շրջանակներում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ևս հանդիպեց Յ. Սոկոլովին: ՀՀ նախագահը նույնպես կարևորեց Բուլղարիայի աջակցությունը եվրոպական կառույցներում Հայաստանի անդամակցությանը: Յ. Սոկոլովը նշեց, որ բուլղարական կողմը կպաշտպանի Հայաստանին Եվրախորհրդին անդամակցության հարցում, և ավելացրեց, որ իրենց կարծիքով այդ հարցը չպետք է անմիջականորեն կապել Ղարաբաղյան խնդրի կարգավորման հետ[99]:

Անդրադառնալով Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման վերջին զարգացումներին, կողմերն ընդգծեցին փոխզիջման անհրաժեշտությունը նման հակամարտությունների կարգավորման գործում[100]:

1998 թ. հունիսի 4-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը և ԲՀ նախագահ Պ. Ստոյանովը հանդիպեցին միմյանց և ըստ ԲՀ ԱԳՆ ԱՊՀ վարչության պետ Վ. Ֆիլևի Պ. Ստոյանովը մեծ գոհունակություն էր հայտնել հանդիպման վերաբերյալ:[101] Այդ հանդիպման ընթացքում Ռ. Քոչարյանը հրավիրեց ԲՀ նախագահին ՀՀ: 1999 թ. Յ. Սոկոլովի այցով և տարբեր պաշտոնյաների հանդիպումներով սկսվեց նախապատրաստվել Բուլղարիայի նախագահի այցը Հայաստան, որը տեղի ունեցավ 1999 թ. դեկտեմբերի 1-ին: Պետր Ստոյանովը ԲՀ առաջին նախագահն էր, ով այցելում էր ՀՀ:[102] Հրավերը ուղարկել էր Ռ. Քոչարյանին դեռևս 1998 թ. հուլիսի 13-ին: Վերջինս հույս էր հայտնել, որ ԲՀ նախագահի այցելությունը ՀՀ նոր լիցք ու որակ

---

98 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի ժողովրդական ժողովի պատվիրակության հանդիպումները Ազգային ժողովում», թիվ 43 (2257), 6 մարտի 1999 թ., էջ 2:

99 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը մեծ նշանակություն է տալիս Բուլղարիայի հետ հարաբերություններին», թիվ 44 (2258), 9 մարտի 1999 թ., էջ 1:

100 Տե՛ս նույն տեղում:

101 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև` ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 107:

102 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը մեծ նշանակություն է տալիս Բուլղարիայի հետ հարաբերություններին», թիվ 44 (2258), 9 մարտ1999 թ., էջ 1:

կիաղորդի երկու երկրների միջև գոյություն ունեցող կապերին[103]: Անդրադառնալով երկկողմ հարաբերություններին՝ Պ. Ստոյանովը նշեց, որ հայ-բուլղարական հարաբերությունները միշտ փայլուն են եղել, նրանք կարող են ծառայել որպես լավ հարաբերությունների օրինակ[104]:

ԲՀ նախագահը անդրադարձավ նաև Ադրբեջան կատարելիք այցին և նշեց, որ այնտեղ քննարկվելու են նախ և առաջ երկկողմ հարաբերությունները, քանի որ Բուլղարիան ձգտում է առևտրատնտեսական հարաբերություններ զարգացնել նաև Ադրբեջանի հետ: Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում ԲՀ բավական հավասարակշիռ է գործում, ինչի վկայությունն է այն, որ գրեթե բոլոր պաշտոնական այցերը տեղի են ունենում տարածաշրջանային մակարդակով, իսկ հանդիպումների օրակարգը համանման է:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և ԲՀ նախագահ Պ. Ստոյանովի հանդիպման արդյունքում ստորագրվեց համատեղ հայտարարություն: Ընդունվեց ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում 2000-2002 թթ. ընթացքում համագործակցության ծրագիր,[105] որը պատրաստ էր ստորագրման դեռևս 1999 թ. նոյեմբերին[106]:

Հանդիպմանը ստորագրվեց վեց համաձայնագրեր ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև՝ մաքսային համատեղ փոխօգնության, փոստի և հեռահաղորդակցության, համակցված փոխադրումների, զբոսաշրջության բնագավառներում համագործակցության, ինչպես նաև ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման

---

[103] ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 126:
[104] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահը Երևանում», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 1:
[105] Տե՛ս նույն տեղում:
[106] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 39:

ոլորտներում համագործակցության, ՀՀ վիճակագրության ազգային ինստիտուտի միջև համագործակցության ընդլայնման մասին[107]:

Բուլղարիայի Հանրապետության նախագահ Պ. Ստոյանովի գլխավորած պատվիրակությունը հանդիպեց ՀՀ ԱԺ ղեկավարության, հանձնաժողովների և պատգամավորական խմբակցությունների ղեկավարների հետ: Կարևորվեց հայ-բուլղարական միջպետական համագործակցության զարգացումը: ՀՀ ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանը նշեց, որ Հայաստանը կարող է Բուլղարիայի համար դառնալ դարպաս դեպի Միջին Արևելք և այն պետք է օգտվի Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքից՝ Արևելքը Արևմուտքին կապելու առումով: Պ. Ստոյանովը նշեց, որ Բուլղարիայի շուկան բաց է Հայաստանի համար և հայ գործարարներն իրենց շնորհքով կարող են հրաշք գործել Բուլղարիայի շուկայում: Միաժամանակ հավաստիացրեց, որ Բուլղարիան պատրաստ է դառնալու Հայաստանի համար դարպաս դեպի Արևմուտք[108]:

Կողմերը կարևորեցին համագործակցությունը՝ Եվրոպայում վստահության մթնոլորտը ամրապնդելու, եվրոպական մայրցամաքում հակամարտությունները խաղաղ և հնարավորինս արագ կարգավորելու և հակամարտության նոր օջախների առաջացումը կանխելու նպատակով: Դրանով իսկ կորևոր նշանակություն էր տրվում երկկողմ և բազմակողմ համագործակցությանը ԵԱՀԿ շրջանակներում: Նրանք ողջունեցին ԵԱՀԿ 1999 թ. նոյեմբերի 18-19-ի Ստամբուլի գագաթնաժողովի արդյունքները: Դրանք կոչված էին 21-րդ դարում Եվրոպայում ապահովել անվտանգություն և կայունություն[109]:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցել ՄԱԿ-ի, եվրոպական տարածաշրջանային կազմակերպությունների, Սևծովյան տնտեսական համագործակցության, և տարածաշրջանային և

---

[107] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահը Երևանում», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 1:

[108] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը և Բուլղարիան ընդհանուր շահեր ունեն», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 1:

[109] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 2:

համաեվրոպական նշանակության ենթակառուցվածքային նախագծերի շրջանակներում[110]:

Բուլղարական կողմն իր պատրաստակամությունը հայտնեց նպաստել ՀՀ՝ ԵԽ անդամագրվելու գործընթացին: Կողմերը ընդգծեցին երկկողմ և բազմակողմ համագործակցության կարևորությունը Եվրատլանտյան գործընկերության խորհրդի և ՆԱՏՕ-ի՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ԲՀ նախագահի այցը ՀՀ բավական արդյունավետ էր: Այստեղ քննարկվեցին մի շարք կարևոր խնդիրներ, որոնց կարգավորումը անմիջականորեն բխում էր երկու երկրների շահերից: Այս առումով հատկապես կարևոր էր միջազգային համագործակցության ուղղված պայմանավորվածությունները:

Նույն 1999 թ. կրկին ակտիվացան ԲՀ և ՀՀ միջև ռազմական համագործակցության նախաձեռնությունները: Մասնավորապես սեպտեմբերին բուլղարական կողմի նախաձեռնությամբ վերսկսվում են դեռևս 1997 թ. ընդհատված բանակցությունները[111]: Համագործակցության սառեցման պատճառ էր հանդիսացել 1997 թ. Բուլղարիայում խորհրդարանական ընտրությունները և իշխանությունների փոփոխությունները[112]: Այս առումով դեռևս

[110] Տե՛ս նույն տեղում:

[111] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 40:

[112] Դեռևս 1996 թ. դեկտեմբերի 21-23 Բուլղարիայում տեղի ունեցավ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության հերթական կոնգրեսը: Ժան Վիդենովը հենց սկզբից հայտարարեց, որ հրաժարական է տալիս վարչապետի պաշտոնից, որի պատճառը խորը ճգնաժամն էր: Ընտրվեց կուսակցության նոր առաջնորդ, որից ևս Վիդենովը հրաժարվել էր և կուսակցության ղեկավարումը ստանձնեց Գեորգի Պրվանովը: Սակայն 1997 թ. հունվարի 10-ին ԲՀ նախագահ Ժելյու Ժելևը հակառակ սահմանադրության հրաժարվեց ընդունել Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության թեկնածուին վարչապետի պաշտոնում: Ընդ որում Ժելյու Ժելևի կառավարման ժամկետն ավարտվում էր 1997 թ. հունվարի 21-ին: Ազգային ժողովի մոտ սկսվում են բախումներ: Արդեն 1997 թ. հունվարի 28-ին նոր նախագահ Պետր Ստոյանովը թույլ է տալիս Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցությանը առաջադրել իր թեկնածուին: Նշանակվեցին նոր խորհրդարանական ընտրություններ, որտեղ ձայների մեծամասնությամբ (52.26%) հաղթեցին դեմոկրատական ուժերը Դեմոկրատական ուժերի միություն կուսակցության ղեկավարությամբ: 1997 թ. մայիսի 21-ին ձևավորվեց նոր կառավարություն Իվան Կոստովի ղեկավարությամբ: Մանրամասն տե՛ս Анатомия на прехода (Стопанската политика в България от 1989 до 2004 г. през погледа на Института за пазарна икономика), под. ред. Георги Ангелов, Лъчезар Богданов, Мартин Димитров и др., Сиела, 2004, ինչպես նաև Желев Ж., Въпреки всичко. Моята политическа биография. София, Колибри, 2010.

1996 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում ստորագրվել էր ՀՀ պաշտպանության նախարարության և ԲՀ պաշտպանության նախարարության միջև համագործակցության մասին Համաձայնագիրը[113]: Վերջինիս հիման վրա 1997 թ. պաշտպանության փոխնախարարի մակարդակով Սոֆիայում ստորագրվել էր երկկողմ համագործակցության 1997 թ. ընթացքում[114]: ՀՀ պաշտպանության նախարարությունը դրական գնահատեց ԲՀ պաշտպանության նախարարության հետ ռազմական համագործակցության զարգացման հեռանկարը[115]:

Հաջորդ տարիներին ևս ակտիվ գործունեություն ծավալվեց երկու երկրների դիվանագետների կողմից երկկողմ հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու առումով: 2002 թ. մարտին Բուլղարիայի Հանրապետության նորընտիր նախագահ Գեորգի Պրվանովը ընդունեց Բուլղարիայում ՀՀ դեսպան Սեդա Սեանին: Զրույցի ընթացքում երկրի նախագահը բարձր գնահատեց Բուլղարիայի ու Հայաստանի հարաբերությունների զարգացումը, ընդգծելով, որ բուլղար ու հայ ժողովուրդների ավանդական բարեկամական կապերը առանձնահատուկ և ամուր հիմք են հետագա վերընթացի համար[116]: Ս. Սեանը, իր հերթին բարձր գնահատելով երկկողմ կապերը, նշել է, որ դրանց զարգացումը վերջին տարիներին չունի անհրաժեշտ տեմպերը, հատկապես տնտեսության և մշակույթի ասպարեզում:

Նույն տարվա ընթացքում Հայաստանի դեսպանը մի շարք հանդիպումներ ունեցավ նաև երկրի վարչապետ Սիմեոն Սաքսկոբուրգոտսկու, խորհրդարանի նախագահ, պրոֆեսոր Օգնյան Գերջիկովի, արտաքին գործերի և պաշտպանության նախարարներ Սոլոմոն Պասիի ու Նիկոլայ Սվինարովի և այլ պետական պատասխանատու անձանց հետ[117]: Համանման հանդիպումները

---

113 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 40:

114 Նույն տեղում:

115 Նույն տեղում:

116 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Նախագահ Պարվանովը Ռոբերտ Քոչարյանին հրավիրել է Բուլղարիա», թիվ 51 (2496), 20 մարտ 2002 թ., էջ 2:

117 Տե՛ս նույն տեղում:

նպաստում էին ՀՀ և ԲՀ միջև միջպետական հարաբերությունների ամրապնդմանը և փոխադարձ շփումների ակտիվացմանը:

Նույն տարիներին բավական ակտիվ էր գործում նաև ՀՀ-ում Բուլղարիայի գործերի ժամանակավոր հավատարմատար, դոկտոր Ստեֆան Դիմիտրովը: Վերջինս իր ելույթներում փաստում էր, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև քաղաքական հարաբերությունները գերազանց են, ինչը նշանակում է, որ երկու երկրները չունեն ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ այլ բնույթի որևէ վիճահարույց խնդիր: Նրանց անվերապահորեն կարելի է բնորոշել որպես բարեկամական պետություններ[118]:

Ըստ դեսպանի, Հայաստանը և Բուլղարիան գտնվում են պատմական կոնֆլիկտային տարածաշրջաններում, ուստի ցանկալի կլիներ, որ դրանց միջև այնպիսի համագործակցություն կառուցվեր, որ տարածաշրջանների երկրները միմյանց առավել լավ հասկանային, օգնեին ինչպես ժողովուրդները, այնպես էլ պետական գործիչներն ու կառավարությունները: «Ես գիտակցում եմ, որ համաշխարհային թատերաբեմում Հայաստանը և Բուլղարիան համեմատելի չեն գերտերությունների նշանակության հետ, սակայն յուրաքանչյուրն իր տարածաշրջանում, առանց չափազանցության, խաղում է առանցքային դեր»- ընդգծում էր դեսպանը[119]:

2002 թ. ՀՀ և ԲՀ ԱԳ նախարարները հանդիպեցին Նյու Յորքում՝ ստորագրելով դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար առանց անցագրային ռեժիմ սահմանելու մասին համաձայնագիրը[120]: Հարկ է նշել, որ 2002 թ. բավական ակտիվացած դիվանագիտական շփումները, որոնք հիմնականում պայմանավորված էին 2003 թ. նախատեսված ՀՀ նախագահի այցով Բուլղարիա:

2003 թ. սեպտեմբերի 7-ին Սոֆիայի «Սուրբ Ալեքսանդր Նևսկի» հրապարակում տեղի ունեցած պաշտոնական դիմավորման արարողությամբ սկսվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի

[118] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունները գերազանց են», թիվ 164 (3297), 4 սեպտեմբերի 2003, էջ 5: Ինչպես նաև «Ազգ» օրաթերթ, «Ս.Դիմիտրով. «Հայաստանի եվ Բուլղարիայի հարաբերությունները գերազանց են»», թիվ 158, 4 սեպտեմբերի 2003 թ., էջ 5:
[119] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունները գերազանց են», թիվ 164 (3297), 4 սեպտեմբերի 2003, էջ 5:
[120] Մանրամասն տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2003, էջ 145-148:

գլխավորած պաշտոնական պատվիրակության այցը ԲՀ[121]: Հրապարակում ՀՀ նախագահին և նրա տիկնոջը դիմավորեց Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը տիկնոջ հետ[122]: Ս.Դիմիտրովի խոսքերով, Բուլղարիայի իշխանություններն այս այցին մեծ նշանակություն էին տալիս բոլոր ուղղություններով երկկողմ հարաբերությունների ակտիվացման և խորացման առումով[123]:

Երկու երկրների նախագահների առանձնազրույցը տեղի ունեցավ Բուլղարիայի նախագահի նստավայրում, որից հետո կայացավ երկկողմ հանդիպում ընդլայնված կազմով: Հայկական կողմից հանդիպմանը մասնակցում էին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Թամար Պողոսյանը, պատվիրակության մյուս անդամները[124]: Հայաստանի նախագահը նշեց, որ եվրոպական ինտեգրացիայի մի այնպիսի փուլում է Հայաստանը, որ Բուլղարիայի քայլերը և բարեփոխումները հետաքրքիր են Հայաստանի ու ողջ Հարավային Կովկասի համար[125]:

Բանակցություններին հաջորդեց փաստաթղթերի ստորագրումը: Նախագահներ Ռ. Քոչարյանը և Գ. Պրվանովը ստորագրեցին համատեղ հռչակագիր: Երկու երկրների արտգործնախարարները վավերացրին հյուպատոսական կոնվենցիա: Հայաստանի և Բուլղարիայի կառավարությունների միջև ստորագրվեցին համագործակցության համաձայնագրեր առողջապահության, կրթության և գիտության բնագավառներում, վավերացվեց նաև երկու երկրների մշակույթի

[121] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:
[122] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Սկսվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիա» թիվ 161(2846), 9 սեպտեմբերի 2003 թ., էջ 1:
[123] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Ս.Դիմիտրով. «Հայաստանի եվ Բուլղարիայի հարաբերությունները գերազանց են», թիվ 158, 4 սեպտեմբերի 2003 թ., էջ 5:
[124] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Սկսվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիա» թիվ 161(2846), 9 սեպտեմբերի 2003 թ., էջ 1:
[125] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:

նախարարությունների միջև 2003 և 2006 թթ. ժամանակահատվածում համագործակցության ծրագիրը[126]:

2003 թ. ՀՀ նախագահի այցը բավական կարևոր էր նաև ԼՂ խնդրում, քանզի 2004 թ. հենց Բուլղարիան ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: ԵԱՀԿ նախագահությունը Բուլղարիային հանձնելու թեկնածությունը պաշտպանել է ԵԱՀԿ անդամ պետությունների մեծ մասը, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը: Վերջինս աջակցել է Բուլղարիային նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ լիիրավ անդամ ընտրվելու հարցում[127]:

ՀՀ նախագահի մամլո քարտուղար Աշոտ Քոչարյանը Բուլղարիա այցն ամփոփելով նշեց, որ իրավապայմանագրային լուրջ հիմքեր են ստեղծվել երկու երկրների համագործակցության համար տնտեսական, գիտատեխնիկական, առևտրային ասպարեզներում: Առաջիկայում նախատեսվում է ստորագրել նաև տրանսպորտային եռակողմ համաձայնագիր՝ Հայաստանի, Բուլղարիայի և Վրաստանի միջև: Աշոտ Քոչարյանը Բուլղարիայի հետ բարեկամությունը կարևորեց հատկապես այն առումով, որ այս երկիրը ևս ապրում ու զարգանում է եվրոպականացման ճանապարհով[128]:

Թեև 1999 թ. ակտիվ հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների խորհրդարանների միջև և պայմանավորվածություններ ձեռք բերվեցին շարունակել ակտիվ հարաբերությունները, սակայն հաջորդող տարիներին դրանք խիստ պասիվ էին: 2004 թ. հունիսի 14-ին Բուլղարիայի դեսպան Ստեֆան Դիմիտրովը հանդիպեց ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանին: Նշվեց, որ 1999 թ. ի վեր միջխորհրդարանական բարձր մակարդակի այցեր չեն եղել: Կարևորվեց համագործակցությունը մարզերի և քաղաքների միջև, առողջապահության, գիտամշակութային ոլորտներում, ինչպես նաև՝ բուլղարական օրենսդրական փորձի օգտագործումը ու

[126] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Սկսվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիա» թիվ 161(2846), 9 սեպտեմբերի 2003 թ., էջ 1: Ինչպես նաև «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:

[127] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, թիվ 158 (2843), 4 սեպտեմբեր 2003 թ., էջ 8:

[128] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը ամփոփեց...», թիվ 172 (2857), 24 սեպտեմբերի 2003 թ., էջ 2:

համագործակցությունը միջխորհրդարանական կառույցներում[129]: Այս հանդիպումը նախապատրաստեց ՀՀ ԱԺ նախագահի այցը ԲՀ:

2004 թ. հունիսի 29-ին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը ԲՀ մայրաքաղաք Սոֆիայում սկսվեց ԲՀ խորհրդարանի նախագահ Օգնյան Գերջիկովի հետ հանդիպումով[130]: Հանդիպմանը մասնակցում էր բուլղարահայ պատգամավոր, «Բուլղարիա-Հայաստան» բարեկամության խմբի նախագահ Ռուբեն Գրիգորյանը: Նրանցից բացի, բուլղարական խորհրդարանում ևս մեկ հայ կար, և մեկ կին պատգամավոր, որի ամուսինն էր հայ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին տնտեսական ու մշակութային հարաբերությունները, միջխորհրդարանական կապերի զարգացման սկզբունքները: Այս խնդիրներում 2 երկրների խորհրդարանների նախագահները նույն մոտեցումներն արտահայտեցին: Ըստ ԱԺ պատգամավոր, պատվիրակության անդամ Սերգեյ Աբրահամյանի Հայաստանին առաջին հերթին հետաքրքրում էր Բուլղարիայի եվրոինտեգրման փորձը: ԱԺ պատգամավորը նշում էր, որ ուսումնասիրելով բուլղարների անցած ճանապարհը կարող ենք խուսափել որոշակի խնդիրներից և ավելի կարճ ժամկետում հասնել լիարժեք եվրոինտեգրման[131]: Երկրորդ կարևոր արդյունքը հայկական պատվիրակությունը համարում էր Հայաստանի և Բուլղարիայի մարզերի ու քաղաքների միջև բարեկամության հաստատումը: Ոչ միայն հայ խորհրդարանականները, այլև մեր երկիրն ընդհանրապես Բուլղարիայի խորհրդարանից, բնականաբար, պիտի ակնկալի նաև որոշակի դիրքորոշում՝ ցեղասպանության ճանաչման խնդրի վերաբերյալ: Բուլղարահայ պատգամավոր Ռ. Գրիգորյանը տեղեկացրեց, որ այս առթիվ իրենց խորհրդարանում որոշակի նախապատրաստական աշխատանքներ իրականացվում են, բայց գործը դյուրին չէ, և դեռևս անհայտ է, թե երբ պատրաստ կլինի

---

[129] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի դեսպանը խորհրդարանում», թիվ 108 (3487), 15 հունիսի 2004, էջ 1:

[130] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սկսվել է ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 119 (3498), 30 հունիսի 2004, էջ 1:

[131] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Բարեկամանում են Հայաստանի և Բուլղարիայի խորհրդարանները», թիվ 120 (3042), 30 հունիս 2004 թ., էջ 1-2:

օրինագիծն ու կմտնի խորհրդարան[132]: Խորհրդարանի կողմից այս օրինագծի վավերացման հետ կապված դժվարությունները պայմանավորված են առաջին հերթին ԲՀ խորհրդարանում բազմաթիվ թուրք պատգամավորների առկայությամբ:

Աժ նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպեց նաև բուլղարական խորհրդարանի արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի (նախագահ՝ Վենկո Ալեքսանդրով) ղեկավարության հետ: Հայկական պատվիրակության կազմում ընդդիմությունը ներկայացնում էր «Ազգային միաբանություն» կուսակցության փոխնախագահ Ալեքսան Կարապետյանը՝ իբրև հայ-բուլղարական միջխորհրդարանական հանձնաժողովի նախագահ[133]:

Հուլիսի 1-ին բուլղարական ժողովրդական ժողովում Արթուր Բաղդասարյանը հանդիպեց ԵԽ ԽՎ-ի նախագահի տեղակալ, ԵԽ ԽՎ-ում բուլղարական պատվիրակության ղեկավար, ազգությամբ թուրք Յունաչ Լյութֆիի հետ: «Հայաստանը և Բուլղարիան երկար տասնամյակներ նախկին խորհրդային համակարգի մեջ էին և երկար ճամփա պիտի անցնեն, մինչև հասնեն եվրոպական մակարդակի ժողովրդավարության: Ժողովրդավարությունն առաստաղ չունի, այն պետք է և կարող է անընդհատ զարգանալ մեր երկրներում, անկախ այն բանից, թե այսօր ինչ մակարդակում ենք», խոսքի սկզբում ասաց Յունալ Լյութֆին[134]: Սա բավական հետաքրքիր, հոգեբանական հանդիպում էր: Հարկ է նշել, որ Յ. Լյութֆին երկվության մեջ էր. մի կողմից՝ նա պարտավոր էր խոսել որպես ԵԽ ԽՎ նախագահի տեղակալ, բուլղարացի, մյուս կողմից՝ որպես թուրք ստիպված էր լսել, թե ինչպես է Արթուր Բաղդասարյանը խոսում հայոց ցեղասպանության, նրա ճանաչման, ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին: Արթուր Բաղդասարյանն նշեց, որ Հայաստանը հանդես է գալիս իր բոլոր հարևանների հետ նորմալ հարաբերություններ հաստատելու քաղաքականությամբ և վստահ է, որ բոլոր հակամարտությունները կարելի է լուծել

---

[132] Տե՛ս նույն տեղում:
[133] Տե՛ս նույն տեղում:
[134] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Մտնել եվրոպա բարեկամների հետ», թիվ 122 (3044), 2 հուլիս 2004թ., էջ 8:

քաղաքական երկխոսության ճանապարհով: Կարևորվեց Բուլղարիայի և Հայաստանի միջև տրանսպորտային համագործակցությունը[135]: Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը Արթուր Բաղդասարյանի հետ հանդիպման ժամանակ ընդգծված ձևով շեշտեց միջպետական հարաբերությունների շրջանակներում միջկուսակցական համագործակցության անհրաժեշտությունը[136]: Պաշտոնական այցի ավարտին ԱԺ նախագահը հանդիպեց Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Սիմեոն Սաքսկոբուրգգոտսկու հետ: Նա եղել է Բուլղարիայի վերջին թագավորը մինչխորհրդային շրջանում, իսկ այդ օրերին ղեկավարում էր ժողովրդական ժողովի ամենամեծ ընդգրկում ունեցող «Ազգային շարժում. Սիմեոն Երկրորդ» կուսակցությունը: Սիմեոն Սաքսկոբուրգգոտսկին պատրաստակամություն հայտնեց նպաստել այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարմանը: Ընդգծվեց «Երևան-Սոֆիա» օդուղու բացումը, առանց որի դժվար է պատկերացնել տնտեսական հարաբերությունների զարգացումը: Այս առթիվ նախնական պայմանավորվածություններ եղան[137]:

Հայ-բուլղարական հարաբերություններում բավական կարևոր առաջընթաց էր 2004 թ. հոկտեմբերի 5-ին Ռ. Քոչարյանի հրավերով ԲՀ նախագահ Գ. Պրվանովի այցը ՀՀ: Այն որակական նոր մակարդակի բարձրացրեց հայ-բուլղարական հարաբերությունները տարբեր բնագավառներում[138]: «Մեր ձեռք բերած պայմանավորվածությունները միջկառավարական հանձնաժողովները շատ հետևողական ձևով իրականացնում էին, և դրա շնորհիվ լուրջ աճ ունենք ապրանքաշրջանառության մեջ: Ես համոզված եմ, որ Բուլղարիայի նախագահի այցը լուրջ խթան է լինելու այս գործընթացը զարգացնելու համար»,- ասաց Ռ. Քոչարյանը[139]: Վերջին մեկ տարում սա նախագահների երկրորդ

---

135 Տե՛ս «Բոլոր ճանապարհները տանելու են Եվրոպա», https://www.aravot.am/2004/07/02/802673/, (10.09.2018):

136 Տե՛ս նույն տեղում:

137 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Մտնել եվրոպա բարեկամների հետ», թիվ 122 (3044), 2 հուլիս 2004թ., էջ 8:

138 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստան է ժամանել Գեորգի Պրվանովը», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 1:

139 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Երեք տարում հարյուրապատիկ աճ. Բուլղարիայի նախագահի այցը Հայաստան», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 1:

հանդիպումն էր, որը կորևորվել էր ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական իմաստով: «Շատ հետաքրքիր է մեզ համար Բուլղարիայի՝ Եվրամիության անդամակցության ժամկետների հստակեցումը, ինչը մեզ համար ևս որոշակի հստակեցում է» [140]: Քոչարյանն ու Պրվանովը գոհունակություն հայտնեցին վերջին տարիներին երկու երկրների միջև քաղաքական երկխոսության զարգացման առնչությամբ: Հանդիպման ընթացքում երկրների ղեկավարները կարծիքներ փոխանակեցին առևտրի և տնտեսական հարաբերությունների՝ այն ոլորտների վերաբերյալ, որոնք դեռևս բավարար մակարդակի վրա չեն քաղաքական համագործակցության համեմատ: Տնտեսական հարաբերությունների ոչ բավարար զարգացման պատճառներից մեկը նախագահները համարել են օդային հաղորդակցության անբավարար մակարդակը Հայաստանի և Բուլղարիայի մայրաքաղաքների միջև: Նրանք պատրաստակամություն են հայտնել նպաստելու երկրների գործադիր իշխանություններին այդ խնդրի լուծման հարցում[141]:

Վերջինս այցելեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդում Բուլղարիայի նախագահը ծաղիկներ դրեց հուշակոթողի անմար կրակի մոտ, Բարեկամության ծառուղում եղևնի տնկեց: Այնուհետև Գ. Պրվանովը հանդիպեց Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ[142]: Գ. Պրվանովը խոսեց երկու երկրների պատմության, մշակույթի, ինչպես հայ, այնպես էլ բուլղար երիտասարդների գիտելիքների կարևորության մասին: Համալսարանում Գ. Պրվանովը, պատմական էքսկուրս կատարելով, հասավ մինչև Ավարայրի ճակատամարտ ու շեշտեց, որ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ, Ավարայրի ճակատամարտի հատվածում հիշատակել է հայերին աջակցած բուլղարների մասին: Իր հերթին պատմական ակնարկ կատարելով՝ ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը հիշեց նաև Բալկանյան պատերազմը, որտեղ հայերը միացան բուլղարներին՝ թուրքերի դեմ կռվում: Այսուամենայնիվ,

[140] Տե՛ս նույն տեղում:
[141] Տե՛ս Եվրաինտեգրումը դարձել է Բուլղարիայի և Հայաստանի երկկողմ հարաբերությունների հենասյուներից մեկը, http://www.panarmenian.net/arm/world/news/14353/ , (20.10.2018):
[142] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հանուն Եվրոմիության պետք է որոշ արժեքներ նորովի գնահատենք», թիվ 176 (3107), 7 հոկտեմբերի 2004 թ., էջ 1,3:

Բուլղարիայի նախագահը կարծում է, որ պատմական փաստերի հանդեպ պետք է դրսևորել լոկ բարոյական վերաբերմունք և երբեք դրանք բանակցային գործընթացների նյութ չդարձնել: Գ. Պրվանովն իր այս կարծիքը հայտնեց ի պատասխան ուսանողներից մեկի այն հարցին, թե Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցելու պարագայում արդյոք չպե՞տք է իբրեւ նախապայման դրվի ցեղասպանության ճանաչման հարցը: «Մենք շահագրգիռ ենք, որ մեր բոլոր հարեւանները լինեն Եվրամիության անդամ եւ պահպանեն Եվրամիության ներկայացրած բոլոր պահանջները: Եվրամիությունը կորոշի՝ ինչպես վարվել, սակայն այս հարցը վերաբերում է անցյալին, եւ ես չէի համաձայնի, որ պատմական իրողությունները բանակցային գործընթացների սեղանին դրվեին»[143]: Եվ պրն Պրվանովը հիշեց, որ Բուլղարիան էլ շատ երկար ժամանակ ստրկություն է ապրել, բայց հարկ չկա բանակցություններում շահարկել պատմական փաստերը. «Մենք եւս ունենք հինգդարյա ստրկություն, մենք եւս ունենք մեր պահանջները»[144]: Բուլղարիայի նախագահը կարծում է, որ պետություններն անհրաժեշտության դեպքում պետք է զիջումների գնան, եթե պատրաստ են ընդունել Եվրամիության օրենքները: Իհարկե, ըստ նախագահի, նրանք դա պետք է անեն իրենց ինքնությունն ու ինքնուրույնությունը պահպանելով: Հաջորդ հարցին, թե ինչ կոնկրետ քայլեր կձեռնարկի Բուլղարիան ԼՂՀ հարցի կարգավորմանն աջակցելու ուղղությամբ, պրն Պրվանովը պատասխանեց. «Բուլղարիան, իբրեւ ԵԱՀԿ նախագահող երկիր, ամեն ինչ արել է՝ բանակցային գործընթացը խթանելու համար եւ բավարարված է վերջին շրջանում նախագահների եւ նախարարների մակարդակով հայ-ադրբեջանական հանդիպումներից»[145]: Բուլղարիայի նախագահը վստահ է, որ խնդիրը կարող է լուծվել միայն քաղաքական ու դիվանագիտական ճանապարհով՝ հանդուրժողականության եւ փոխգործակցության արդյունքում[146]:

ՀՀ նախագահի հետ հանդիպումից և երկու երկրների քաղաքական առօրյայի քննարկումից հետո, Գ. Պրվանովը հանդիպեց ՀՀ վարչապետ

---

[143] Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, «Գնալ զիջումների՝ ինքնությունը չկորցնելով», https://www.aravot.am/2004/10/07/318804/, (16.01.2019):
[144] Տե՛ս նույն տեղում:
[145] Տե՛ս նույն տեղում:
[146] Տե՛ս նույն տեղում:

Անդրանիկ Մարգարյանին: ՀՀ ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը և ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահները ևս հանդիպեցին Գ. Պրվանովին և նրան ուղեկցող պատվիրակությանը[147]: Այցը բավական արդյունավետ էր և նոր լիցք հաղորդեց հարաբերությունների հետագա ընթացքին:

2005 թ. երկկողմ հարաբերություններում նշանավորվեց 1995 թ. ապրիլի 10-ին ստորագրված պայմանագրի տասնամյա հոբելյանին անդրադարձ կատարելով: Երկու երկրների կառավարությունները մշտապես կարևորել են ՀՀ և ԲՀ միջև ստորագրված պայմանագիրը, որը հիմնականում կարգավորում է հայ-բուլղարական հարաբերությունների տարբեր ոլորտներ: Պայմանագրի 10-ամյա հոբելյանի առթիվ ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը շնորհավորելով ԲՀ ԱԳ նախարար Սոլոմոն Պասիին նշում էր, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև ստորագրված այս պայմանագիրը 10 տարիների ընթացքում ապացուցել է իր կենսունակությունը և հիմք ծառայել երկկողմ համագործակցության տարբեր բնագավառներում չորս տասնյակից ավելի իրավական փաստաթղթերի ստորագրման համար[148]:

2006 թ. փետրվարի 13-ին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանն առանձնազրույց ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ԲՀ ԺԺ նախագահ Գեորգի Պիրինսկու հետ: Հայ-բուլղարական միջխորհրդարանական հարաբերությունների դիտանկյունից բավական կարևոր այս հանդիպմանը քննարկվեցին քաղաքական, միջխորհրդարանական, օրենսդրական փորձի փոխանակման շուրջ համագործակցության խնդիրները: Փոխադարձաբար կարևորվեցին հատկապես տրանսպորտային համագործակցության խնդիրները, որոնց լուծումներին կարող էին մասնակցել նաև երկու խորհրդարանները: Այս հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաև միջկուսակցական կապերի ձևավորման անհրաժեշտությանը[149]:

---

[147] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հանդիպել են Բուլղարիայի նախագահի հետ», թիվ 177 (3556), հոկտեմբերի 2004, էջ 1:

[148] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 11, գ. 29, թ. 25:

[149] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայաստանը և Բուլղարիան՝ ընդհանրական շահերի շրջագծում», թիվ 25 (3430), 14 փետրվարի 2006 թ., էջ 3:

Հանդիպմանը շեշտվեց նաև Սոֆիայում և Երևանում մշակութային կենտրոնների ստեղծման անհրաժեշտությանը[150]:

Խորհրդարանների նախագահների առանձնազրույցից հետո Գեորգի Պիրինսկու գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը հանդիպեց Ազգային ժողովի հանձնաժողովների նախագահների, խումբ-խմբակցությունների ղեկավարների հետ: Հանդիպումից առաջ Բուլղարիայի խորհրդարանը վավերացրել էր «ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև հյուպատոսական կոնվենցիան»: Հայաստանի խորհրդարանը այն վավերացրել էր 2004 թ. ապրիլի 26-ին: Կոնվենցիան հեշտացնում էր քաղաքացիների որոշ խմբերի ելքն ու մուտքը[151]:

ԲՀ ԺԺ նախագահ Գ. Պրիանսկուն ընդունեց նաև ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը: Հատուկ կարևորվեց երկու երկրների համագործակցությունը եվրաինտեգրման ուղղությամբ: Այդ առումով կողմերն ընգծեցին Հայաստանի և Բուլղարիայի միջև եվրոպական ինտեգրացիայի և եվրատլանտյան կառույցների բնագավառներում համագործակցության մասին 2005 թ. ստորագրված Հուշագրի նշանակությունը: Մտքերի փոխանակում տեղի ունեցավ նաև Հարավային Կովկասի և Բալկանների տարածաշրջանային հարցերի վերաբերյալ, որոնց մեջ հայ-թուրքական հարաբերությունների շուրջ: Վ. Օսկանյանը ԲՀ ԺԺ նախագահին ներկայացրեց ԼՂ հակամարտության կարգավորման հարցով Փարիզում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունների արդյունքները[152]:

ԲՀ ԺԺ նախագահ Գ. Պրինիսնկու այցի շրջանակներում, վերջինս հանդիպեց նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ: Քննարկվեցին եվրոինտեգրման խնդիրները, փոխադարձաբար կարևորվեցին նաև Հայաստանին և Բուլղարիային կապող տրանսպորտային

[150] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել է Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին», թիվ 26 (3882), 14 փետրվար, 2006 թ., էջ 1,2:
[151] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայաստանը և Բուլղարիան՝ ընդհանրական շահերի շրջագծում», թիվ 25 (3430), 14 փետրվարի 2006 թ., էջ 3:
[152] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին», թիվ 26 (3882), 14 փետրվարի 2006 թ., էջ 1,2:

ենթակառուցվածքների դերը, համատեղ լաստանավային փոխադրումների իրականացումը[153]:

ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի հետ քննարկումների օրակարգը ևս նույնն էր: Զրույցի ընթացքում կողմերը կարևորել են Հայաստանի և Բուլղարիայի համագործակցությունը եվրաինտեգրման շրջանակներում, որի համար, ըստ նրանց, լավ հնարավորություններ են ստեղծվել, մասնավորապես, 2005 թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում երկու երկրների արտգործնախարարների կողմից «ՀՀ կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև եվրոպական ինտեգրացիայի և եվրատլանտյան կառույցների բնագավառներում համագործակցության մասին» հուշագրի ստորագրումից հետո[154]:

2006 թ. սեպտեմբերի 11-13-ը ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնեց Բուլղարիա: Այցի շրջանակներում Ս.Սարգսյանը հանդիպեց Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովին, ԲՀ պաշտպանության նախարար Վեսելին Բլիզնակովի, ինչպես նաև ժողովրդական ժողովի փոխնախագահ պրն. Պետր Բերոնի եւ ԺԺ Պաշտպանության հանձնաժողովի ղեկավարության հետ[155]: Հանդիպումը կարևոր էր երկկողմ ռազմական համագործակցության տեսանկյունից, հատկապես երկկողմ ռազմական ծրագրերում:

2007թ. նոյեմբերի 13-ին եռօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Սերգեյ Ստանիշևը: ԲՀ վարչապետի պատվիրակության կազմում էին ՀՀ-ում ԲՀ դեսպան Ստեֆան Դիմիտրովը, «Կոալիցիա հանուն Բուլղարիայի» խորհրդարանական խմբի նախագահ Միխայիլ Միկովը, պաշտոնատար այլ անձինք:

Պաշտոնական այցի ընթացքում Սերգեյ Ստանիշևը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի,

---

[153] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել է ՀՀ նախագահը», թիվ 27 (3883), 15 փետրվար, 2006 թ., էջ 1:
[154] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին», թիվ 26 (3882), 14 փետրվար, 2006 թ., էջ 1,2:
[155] Տե՛ս «Հայաստանի պաշտպանության նախարարն այսօր մեկնում է Բուլղարիա», http://www.panarmenian.net/arm/politics/news/19123/, (15.01.2019):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ[156]: Ըստ Ս. Ստանիշևի հայ-բուլղարական հարաբերություններն ակտիվանում են: Բոլոր ոլորտներում առկա են բարենպաստ նախադրյալներ դրանց զարգացման համար: Բացի խոր պատմական արմատներից, երկու երկրները կապված են նաև եվրոպական և եվրատլանտյան կառույցներին ինտեգրման ընդհանուր նպատակով: Այդ համագործակցությունն ամրագրվել է եվրոպական ինտեգրացիայի և եվրատլանտյան կառույցներում համագործակցության 2005թ. ստորագրված հուշագրով:

Ս. Ստանիշևի այցը ևս մեկ հնարավորություն էր ընդգծելու երկու երկրների պատրաստակամությունը՝ խորացնելու և առավել առանձնահատուկ դարձնելու քաղաքական կապերը բոլոր մակարդակներում, ինչպես նաև առանձին նախարարությունների և ինստիտուտների միջև համագործակցությունը: Լավ օրինակ է կրթության և գիտության, գյուղատնտեսության, առողջապահության, տրանսպորտի, տարածքային կառավարման նախարարությունների միջև ծավալված երկխոսությունը:

Ստանիշևը փաստեց, որ Բուլղարիան ողջունում է Եվրամիությանն ավելի մերձենալու Հայաստանի ջանքերը Եվրոպական նոր հարևանության քաղաքականության ծրագրում ընդգրկվելուց հետո: Ես գտնում եմ, որ մեր երկրի լիակատար անդամակցությունից և Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ Եվրամիության հետ կապերի խորացումը գերակայություն ճանաչելուց հետո մեզ համար համագործակցության նոր հեռանկարներ են բացվում: Այս ուղղությունը կդառնա երկկողմ հարաբերությունների առաջնայնությունը[157]:

Դեռևս 2005 թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև ստորագրվեց հուշագիր եվրոպական ինտեգրացիայի բնագավառում և եվրատլանտյան կառույցներում

[156] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստան կժամանի Բուլղարիայի Հանրապետության վարչապետը», թիվ 208 (4304), 13 նոյեմբերի 2007 թ., էջ 1:

[157] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սերգեյ Ստանիշև. ԵՄ-ին միանալու ձգտումներում Հայաստանը կարող է աջակցություն ստանալ Բուլղարիայից», թիվ 208 (4304), 13 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

համագործակցության մասին: Հուշագիրը նախատեսվում էր երեք տարվա համար, սակայն կարող էր հետագայում երկարաձգվել:

Ըստ հուշագրի, Հայաստանը և Բուլղարիան հաստատում էին իրենց պատրաստակամությունը շարունակել ակտիվ համագործակցությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում և ամրապնդել ԵԱՀԿ-ի դերը, որպես հակամարտությունների խաղաղ կարգավորման միջոցի, ԵԱՀԿ տարածաշրջանում (ներառյալ Հարավային Կովկասը)[158]:

Կողմերը պարտավորվում էին խթանել փոխադարձ համագործակցությունը ինտեգրացիայի բնագավառում՝ ուղղված ՀՀ և Եվրոպայի միության միջև գործընկերության հաջող զարգացմանը, և աջակցել ՀՀ ձգտմանը՝ զարգացնել համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ[159]:

Կողմերը պարտավորվում էին համագործակցել եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ հնարավորությունների լիարժեք օգտագործմանը ուղղված գործողությունները զարգացնելու նպատակով[160]:

Միաժամանակ ՀՀ և ԲՀ իշխանությունները պատրաստակամություն էին հայտնում համագործակցել եվրոպական ինտեգրացիայի բնագավառում՝

1. Ամրապնդել ինստիտուցիոնալ համակարգը համապատասխան մեխանիզմ ստեղծելու միջոցով, այսինքն՝ ապահովելով օրենքի կիրառումը, ինչպես նաև պատրաստելով պետական ծառայողներ և զարգացնելով պետական ծառայողների մասնագիտական ունակությունները Եվրոպական ինտեգրացիայի բնագավառում,

2. Տեղեկացնել հասարակությանը այն գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում ԵՄ և եվրոպական ինտեգրացիայի շրջանակներում:

---

[158] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 11, գ. 29, թ. 128:
[159] Նույն տեղում:
[160] Նույն տեղում, թ. 129:

3. Մատչելի դարձնել երկու Կողմերի ձեռքբերումները եվրոպական ինտեգրացիայի բնագավառում՝ համատեղ խորհրդակցությունների, համաժողովների, նախաձեռնությունների և այլ միջոցառումների միջոցով:

4. Խրախուսելով համագործակցությունը համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջև[161]:

Պայմանագրի 5-րդ հոդվածում Կողմերը պարտավորվում էին աշխատել համատեղ՝ նպատակ ունենալով օժանդակել եվրատլանտյան գործընկերությունը ամրապնդելուն, զարգացնել և իրականացնել ՆԱՏՕ-ի հետ ՀՀ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: ՀՀ և ԲՀ կառավարությունները հանձն էին առնում համագործակցությունը իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. Եվրոպական ինտեգրանցիայի և եվրատլանտյան գործընկերության շրջանակներում համագործակցությունը վերաբերող խնդիրների և եվրատլանտյան և տարածաշրջանային անվտանգության բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ խնդիրների շուրջ կանոնավոր համատեղ խորհրդակցություններ.

2. Եվրատլանտյան համագործակցության հարցերով ազգային կամակարգման համար ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդում

3. Վարչական ունակությունների զարգացում և պետական աշխատողների վերապատրաստում եվրատլանտյան համագործակցության նպատակների համար.

4. Հասարակության իրազեկում միջազգային անվտանգության և եվրատլանտյան համագործակցության հարցերի վերաբերյալ.

5. Վերոնշյալ բնագավառներում գործող համապատասխան ոչ կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսում[162]:

Որպես ԵՄ լիակատար անդամ, Բուլղարիան վերահաստատում էր իր պատրաստակամությունն ապագայում ևս շարունակել աջակցել

[161] Նույն տեղում:
[162] Նույն տեղում, 129,130:

Հայաստանին Եվրամիության հետ հարաբերությունների զարգացման գործում:

Ի դեմս Բուլղարիայի և բուլղարական ինստիտուտների, Հայաստանը մշտապես կունենա աջակցություն ԵՄ-ին առավել մերձենալու իր ձգտումներում: Բուլղարական պետությունն ակտիվ դեր կխաղա եվրոպական նոր հարևանության քաղաքականության իրականացման գործում և Հայաստանի ու տարածաշրջանի երկրների հետ բարեկամական հարաբերությունների պահպանման հարցում կարող է լինել առաջատար: Այս հուշագիրը ուժի մեջ մտավ 2006 թ. ապրիլի 21-ից[163]:

Նույն՝ 2006 թվականին ՀՀ և ԲՀ միջև կնքվեց հյուպատոսական կոնվենցիա, որի նպատակն էր նպաստել երկկողմ բարեկամական հարաբերությունների զարգացմանը և փոխշահավետ համագործակցության խորացմանը[164]:

2007 թ.-ից Հայաստանը ներառված է այն առաջնային երկրների շարքում, որոնց Բուլղարիան միջոցներ կուղղի զարգացման ծրագրերի պաշտոնական աջակցության շրջանակներում: Ըստ Ստանիշևի գործողությունների ծրագրի մի շարք առաջնահերթություններ կարող են ծառայել որպես սկզբնակետ ծրագրերի նախապատրաստման և հարևանության ու գործընկերության ծրագրի շրջանակներում համագործակցության խորացման համար[165]: Երկու երկրների հարաբերությունների զարգացմանը նոր խթան հաղորդեց այն հանգամանքը, որ 2007 թ. հունվարի 1-ից Բուլղարիան դառնալով Եվրոմիության անդամ երկիր, նախատեսել էր գումարներ հատկացնել ՀՀ-ին՝ համապատասխան ծրագրերի առկայության պարագայում[166]:

Բուլղարիան աջակցում էր եվրաինտեգրման գործընթացներին Հարավ-արևելյան Եվրոպայում, ներառյալ Թուրքիայում: Այս դիրքորոշումը հիմնված է այն գնահատականի վրա, որ

---

[163] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Երևան, 2006, էջ 54-58:

[164] Տե՛ս նույն տեղում, էջ 54-59:

[165] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սերգեյ Ստանիշև. ԵՄ-ին միանալու ձգտումներում Հայաստանը կարող է աջակցություն ստանալ Բուլղարիայից», թիվ 208 (4304), 13 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

[166] Տե՛ս Մինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ., «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 48-62:

անվտանգությունը, կայունությունը և բարգավաճումը տարածաշրջանի երկրների համար կարող է իրականանալ համընդհանուր արժեքների միջավայրում: Բուլղարիայի Հանրապետության մոտեցումն է՝ կառուցել բարիդրացիական հարաբերություններ Թուրքիայի հետ՝ հիմնված կայուն ազգային շահի վրա և սահմանել ակտիվ տարածաշրջանային քաղաքականություն[167]:

ԲՀ վարչապետ Ս. Ստանիշևը հանդիպումների արդյունքում ընդգծեց, որ իրենց՝ Հայաստան ժամանելու նպատակը երկկողմ հարաբերություններին նոր շարժ հաղորդելն է:

Աժ նախագահը գոհունակություն հայտնեց երկու պետությունների միջև արդեն ստորագրված համաձայնագրերի առումով՝ դա գնահատելով իբրև ապրանքաշրջանառության մեծացման հնարավորություն: Տ. Թորոսյանը գոհունակություն հայտնեց նաև միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման մակարդակից՝ իրազեկելով, որ Ազգային ժողովում արդեն ստեղծվել է Բուլղարիայի խորհրդարանի հետ պատգամավորական բարեկամության խումբ: Նշելով, որ Հայաստանը եվրաինտեգրումը հռչակել է իր արտաքին քաղաքական գերակայություն, պարոն Թորոսյանը կարևորեց բուլղարական փորձի օգտագործումը: Հաստատելով, որ այդ ուղղությամբ Բուլղարիան քայլ առաջ է, Տ. Թորոսյանը նշեց, որ համագործակցության հնարավորությունները մեծացել են նաև եվրոպական նոր հարևանության ծրագրի շնորհիվ:

Ս. Ստանիշևը կարևորեց միջկառավարական հանձնաժողովի աշխատանքը, համագործակցությունը նախարարությունների միջև, բիզնես-ֆորումների անցկացումը: Կառավարությունները ստեղծում են բիզնեսի համար բարենպաստ միջավայր, որը զարգացնելը արդեն ձեռներեցների գործն է: Նրա կարծիքով՝ Թուրքիայի հետ փակ սահմանը, աշխարհագրական դիրքը որոշ օբյեկտիվ դժվարություններ ստեղծում են, բայց կոնկրետ

---

[167] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սերգեյ Ստանիշև. ԵՄ-ին միանալու ձգտումներում Հայաստանը կարող է աջակցություն ստանալ Բուլղարիայից», թիվ 208 (4304), 13 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

ծրագրերի իրականացումը թույլ կտա հաղթահարել դրանք[168]: Քանի որ Բուլղարիան խորհրդարանական հանրապետություն է, երկրում մեծ է խորհրդարանի դերը ուստի Ստանիշևը կարևորեց Հայաստանի հետ խորհրդարանական կապերի զարգացումը: Նա անդրադարձավ նաև Սևծովյան տարածաշրջանային փոխգործակցության ծրագրերին՝ առաջարկելով Հայաստանի սերտ մասնակցությունը[169]: ԲՀ համար կարևոր է Սևծովյան տարածաշրջանում ԵՄ ռազմավարության իրականացումը, որը կոչվում է «Սևծովյան համատեղ ջանքեր» և ընդունվել է Բուլղարիայի ակտիվ մասնակցությամբ 2007 թ. ապրիլին: Այս ոլորտում նույնպես որպես գործընկերներ հատուկ ծրագրի մշակմամբ զարգանում են երկու երկրների փոխհարաբերությունները[170]:

2007 թ. փետրվարի 20-ից ուժի մեջ մտավ ՀՀ քաղաքաշինության նախարարության և ԲՀ տարածաշրջանային զարգացման և բարեկարգման նախարարությունների միջև ճարտարապետության, տարածքների կառուցապատման և շինարարության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը[171]: Ըստ այդ համաձայնագրի կողմերը պետք է իրականացնեին փոխշահավետ և իրավահավասար համագործակցություն ճարտարապետության, տարածքների կառուցապատման, տեխնիկական ենթակառուցվածքների և տարածաչափական պլանավորման բնագավառում: Այդ ուղղություններով կողմերը պետք է իրականացնեին հետևյալ քայլերը.

- Տեղեկատվություն՝ երկկողմ կանոնավոր փոխանակման ապահովում և օրենսդրական ու իրավական հարցերի վերաբերյալ համատեղ հետազոտությունների կատարում,
- Միջազգային չափանիշներին համապատասխանող գիտատեխնիկական նորմատիվների և քաղաքաշինական ծրագրերի ու փաստաթղթերի համատեղ մշակում,

[168] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի Հանրապետության վարչապետին», թիվ 210 (4306), 15 նոյեմբերի 2007 թ., էջ 1,2:
[169] Տե՛ս նույն տեղում:
[170] Տե՛ս Մինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ., «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 48-62:
[171] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, նշվ. աշխ., էջ 43-46:

- Կայուն տարածաչափական պլանավորման սկզբունքների ներդրմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում,
- Փորձի և տեղեկատվության փոխանակում բնական միջավայրի ճարտարապետական-տարածաչափական որակի մակարդակի բարձրացման, պատմական կենտրոնների ճարտարապետական ժառանգության պահպանման և վերականգնման, տեխնիկական ենթակառուցվածքների կատարելագործման, քաղաքաշինական գործունեության կառավարման սկզբունքների մշակման, ինչպես նաև տարածքների և բնապահպանական կայունության բարձրացմանը նպաստող այլ միջոցառումների իրականացման բնագավառում,
- Համագործակցություն սողանքներ ունեցող շրջանների գրանցման ու մոնիտորինգի գործունեություն իրականացնելիս և սողանքային, էռոզիոն գործընթացների սահմանափակման միջոցառումների իրականացում,
- Համագործակցություն և տեղեկատվության փոխանակում լանդշաֆտի կառուցապատման բնագավառում[172]:

Ըստ պայմանագրի, որը բավական բազմաշերտ ու բազմավեկտոր էր ՀՀ և ԲՀ կառավարությունները պարտավորվում էին նաև համագործակցություն իրականացնել շինարարության բնագավառում: Նախատեսում էին իրականացնել համատեղ հետազոտությունների և փորձի փոխանակում բնակարանային քաղաքականության ուղղությամբ: Կողմերը համագործակցելու էին նաև համատեղ ցուցահանդեսների և բիզնես ֆորումների, գիտական հետազոտությունների և հրատարակությունների կազմակերպման գործում՝ պատմական և ճարտարապետական ժառանգության, ժամանակակից ճարտարապետության, տարածքների կառուցապատման ու տեխնիկական ենթակառուցվածքների օբյեկտների, ինչպես նաև Հայաստանի և Բուլղարիայի շինարարական շուկաների ներկայացման նպատակով[173]:

[172] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, նշվ. աշխ., էջ 43-44:
[173] Տե՛ս նույն տեղում, էջ 45:

1998-2008 թթ. հայ-բուլղարական հարաբերություններում մերթընդմերթ քննարկվում էր ԼՂ հակամարտությունը: Այս տարիներին ևս Բուլղարիայի դիրքորոշումը չտարբերվեց նախորդ ծրջաններում նրա որդեգրած քաղաքական գծից: Այն հատկապես ակտիվորեն արծարծվում էր 2004 թվականից, երբ Բուլղարիան ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: Այս առումով կարևոր էր Ռ. Քոչարյանի այցը Բուլղարիա: Այցի ընթացքում ՀՀ նախագահը նշեց, որ Բուլղարիային բաժին է ընկնելու անմիջապես Արդբեջանում նախագահական ընտրություններին հաջորդող ժամանակահատվածը, երբ բոլորը ակնկալում են ակտիվ բանակցային գործընթաց՝ Լեռնային Ղարաբաղի կարգավորման շուրջ: Ռ. Քոչարյանը հույս հայտնեց, որ ԵԱՀԿ-ում Բուլղարիայի նախագահության շրջանում հարցը տեղից կշարժվի: Ի պատասխան՝ Բուլղարիայի նախագահը վստահեցրեց, որ իր երկիրը օրակարգի հարց կդարձնի Ղարաբաղի թեման[174]:

Բուլղարիայի նախագահ Գ. Պրվանովը խոստովանում էր, որ բալկանյան հակամարտությունների լուծման մոդելը ամբողջությամբ կիրառելի չէ հայ-ադրբեջանական հարաբերությունների համար, քանի որ հակամարտությունները տարբեր են, սակայն բալկանյան փորձից ուսանելի օրինակներ կարելի էր գտնել[175]:

«Ղարաբաղյան հարցի կարգավորումը, ինչպես հայտնի է, իրականացվում է ԵԱՀԿ շրջանակներում՝ Մինսկի խմբի միջնորդությամբ, և ԵԱՀԿ նախագահող երկիրը բավական լուրջ դերակատարություն է ունենում»,- 2003 թ. սեպտեմբերի 8-ին Սոֆիայում Բուլղարիայի նախագահի հետ համատեղ ասուլիսում հայտարարեց Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանը:

2003 թ. ՀՀ նախագահի այցը բավական կարևոր էր նաև ԼՂ խնդրում, քանզի 2004 թ. հենց Բուլղարիան ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: ԵԱՀԿ նախագահությունը Բուլղարիային հանձնելու թեկնածությունը պաշտպանել էր ԵԱՀԿ անդամ պետությունների մեծ

---

174 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:

175 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Երեք տարում հարյուրապատիկ աճ. Բուլղարիայի նախագահի այցը Հայաստան», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 1:

մասը, այդ թվում՝ Հայաստանը: Վերջինս աջակցել էր Բուլղարիային նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ լիիրավ անդամ ընտրվելու հարցում,[176] ուստի այս մարմիններում վերջինից ակնկալում էր հայանպաստ դիրքորոշումներ:

Բուլղարիայի ԵԱՀԿ նախագահությունը ստանձնելու առումով ՀՀ նախագահը նշեց, որ Բուլղարիային բաժին էր ընկնելու անմիջապես Ադրբեջանում նախագահական ընտրություններին հաջորդող ժամանակահատվածը, երբ բոլորը ակնկալում էին ակտիվ բանակցային գործընթաց՝ Լեռնային Ղարաբաղի կարգավորման շուրջ: Ռ. Քոչարյանը նշեց. «Միգուցե ձեր նախագահության ընթացքում հարցը տեղից շարժվի»: Ի պատասխան՝ Բուլղարիայի նախագահը վստահեցրեց, որ իր երկիրը օրակարգի հարց կդարձնի Ղարաբաղի թեման[177]: Այս առումով թեև Բուլղարիան որոշ քայլեր կատարեց սակայն, դրանք միայն բարի ցանկությունների դաշտից էին և մեծ հաջողությունների հասնել չհաջողվեց, ինչը որոշ առումով օրինաչափ էր:

Բուլղարիան՝ որպես ԵԱՀԿ-ի նախագահ, դրականորեն էր գնահատում և պաշտպանում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերն ու պատրաստ էր աջակցել Ադրբեջանին և Հայաստանին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարաժամկետ փոխընդունելի լուծում գտնելու նրանց փորձերում: 2004-ի դրությամբ հարկավոր էր, ըստ Բուլղարիայի դեսպանի, ջանքերն կենտրոնացնել «շփման գծի» իրադրության վատթարացումը կանխելու և Հայաստանի ու Ադրբեջանի միջև առավել կառուցողական ու արդյունավետ երկխոսություն հաստատելու վրա: Այսպես կոչված «Պրահայի գործընթացի»[178] շրջանակներում երկու երկրների արտաքին

---

[176] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, թիվ 158 (2843), 4 սեպտեմբեր 2003 թ., էջ 8:

[177] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Սկսվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիա»
թիվ 161(2846), 9 սեպտեմբերի 2003 թ., էջ 1: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:

[178] 2005 թ. Ադրբեջանի եւ Հայաստանի իշխանությունները հայտարարեցին հակամարտության լուծման հնարավորության մասին: Եվ նույնիսկ ներկայացրեցին լուծման ընդհանուր ուրվագիծը, որի քննարկումը սկսվել էր դեռեւս 2004 թվականի ամռանը Պրահայում, ինչի համար էլ այն սկսեց կրել «Պրահայի գործընթաց» անունը: Այդ առաջարկությունների իմաստը հետևյալն էր. հայերը դուրս են գալիս Լեռնային Ղարաբաղի շուրջը ազատագրված տարածքներից, որտեղ վերադառնում են ադրբեջանցի փախստականները, վերականգնվում են հաղորդակցություններն ու երկու ժողովուրդների միջեւ այլ

գործերի նախարարների հանդիպումները, ինչպես նաև 2004 թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ Վարշավայում և Աստանայում նախագահներ Քոչարյանի և Ալիևի հանդիպումները կարևոր քայլեր էին այդ ուղղությամբ[179]:

Ըստ բուլղարական կողմի Լեռնային Ղարաբաղի հակամարտության պետք էր կարգավորել բացառապես խաղաղ ճանապարհով: Դա պետք էր իրականացնել Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցությունների միջոցով՝ երկրների նախագահների մակարդակով: Որպես ԵԱՀԿ և ԵՄ անդամ, Բուլղարիան աջակցում էր ԵԱՀԿ Մինսկի համանախագահների և Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի ջանքերը հակամարտության կարգավորման ուղղությամբ: Նրանց գործունեությունը երկու կազմակերպությունների անդամ-երկրների, ներառյալ Բուլղարիայի, խաղաղ ջանքերի արտահայտումն էր: Բուլղարիան կոչեր էր հնչեցրել երկու երկրներին զերծ մնալ ռազմատենչ հայտարարություններից և շահարկումներից: «Մենք կարծում ենք, որ հակամարտության ռազմական կարգավորման փորձերն ավելի կբարդացնեն իրավիճակը Հարավային Կովկասում և կունենան բավական բացասական հետևանքներ տարածաշրջանի կայունության համար, ինչպես նաև Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների համար»: Ըստ Բուլղարիայի տեսակետի հակամարտության յուրաքանչյուր կողմ պետք է աներ հնարավոր զիջումները հակամարտության խաղաղ կարգավորման համար[180]:

Արժևորելով տարածաշրջանում խաղաղության և համագործակցության մթնոլորտի առկայությունը՝ ԲՀ վարչապետ Ս. Ստանիշևը նշում էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման բարդությունը Բուլղարիան շատ լավ գիտակցում է և գիտի, որ դա բաց վերք է Հայաստանի ու Ադրբեջանի համար՝ բազում զոհեր էին եղել պատերազմում, մեծ թվով փախստականներ կային: Բայց որքան

---

կապերը, դրանով վերականգնվում է կողմերի միջև վստահությունը: Եվ այս գործընթացի ավարտին հանրաքվեի միջոցով որոշվում էր հակամարտության ամենաբարդ խնդիրը և վիճահարույց հարցը՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը:

179 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մենք գտնվում ենք բուլղարա-հայկական հարաբերությունների աշխուժացման փուլում», թիվ 176 (3555), 5 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

180 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սերգեյ Ստանիշև. ԵՄ-ին միանալու ձգտումներում Հայաստանը կարող է աջակցություն ստանալ Բուլղարիայից», թիվ 208 (4304), 13 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

էլ բարդ լինեն բանակցությունները՝ Բալկանների փորձը վկայում էր, որ ավելի լավ էր տարին 365 օր բանակցել, քան մեկ օր պատերազմել: 2004 թվականին լինելով ԵԱՀԿ նախագահող երկիր և մասնակցելով Պրահայի գործընթացին՝ Բուլղարիան հարցի լուծումը տեսնում էր խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով՝ այդ նպատակով աջակցելով ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին: Ստանիշևի գնահատմամբ՝ այդ գործընթացում կան որոշակի ռիսկեր՝ մասնավորապես, ելնելով տնտեսական զարգացումից՝ Ադրբեջանը ռազմական լուծումներ էր որոնում: Ստանիշևը նաև օրինակ էր բերում Բուլղարիայի և Հունաստանի դարավոր պատերազմները Էգեյան ծով ելք ունենալու նպատակով: Երկու երկները լինելով ԵՄ անդամ, բնավ խնդիրներ չունեն սահմանների առումով, և դա լավագույն ելքն էր իրական համագործակցությամբ խնդիրները լուծելու:

Ս. Ստանիշևի հետ հանդիպման ժամանակ ՀՀ ԱԺ նախագահ Տ. Թորոսյանը անդրադարձ կատարելով ԼՂ հակամարտությանը ներկայացրեց դրա կարգավորման հիմնական սկզբունքները և Հայաստանի դիրքորոշումը[181]: Արդեն 2006 թ. փետրվարին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող ԲՀ ԺԺ նախագահ Գ. Պրիանսկուն: Հատուկ կարևորվեց երկու երկրների համագործակցությունը եվրաինտեգրման ուղղությամբ: Այդ առումով կողմերն ընգծեցին Հայաստանի և Բուլղարիայի միջև եվրոպական ինտեգրացիայի և եվրատլանտյան կառույցների բնագավառներում կամագործակցության մասին 2005 թ. ստորագրված Հուշագրի նշանակությունը: Մտքերի փոխանակում տեղի ունեցավ նաև Հարավային Կովկասի և Բալկանների տարածաշրջանային հարցերի, որոնց մեջ հայ-թուրքական հարաբերությունների շուրջ: Վ. Օսկանյանը ԲՀ ԺԺ նախագահին ներկայացրեց ԼՂ հակամարտության կարգավորման հարցով Փարիզում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև բանակցությունների արդյունքները[182]:

---

[181] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի Հանրապետության վարչապետին», թիվ 210 (4306), 15 նոյեմբերի 2007 թ., էջ 1,2:
[182] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին», թիվ 26 (3882), 14 փետրվար, 2006 թ., էջ 1,2:

Ադրբեջանը մշտապես փորձում էր դիվանագիտական խողովակներով սահմանափակել հայ գործիչների ազդեցությունը Բուլղարիայում: Այդպիսի իրադարձություն էր Ադրբեջանի՝ ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճյուղի երիտասարդական միության նախագահ Հայկ Կարապետյանի Պլովդիվի ազգային և ինտեգրման հարցերով զբաղվող խորհրդի անդամի պաշտոնը թողնելը[183]: Ադրբեջանի ԱԳՆ ուղարկված հերթական զեկուցագրերից մեկում Ադրբեջանի դեսպան Գուրբանովան տեղեկացնում էր, որ Բուլղարիայի Էկոնոմիկայի նախարար Էմիլ Կարանիկոլովի հետ 2017-ի մայիսի 17-ին տեղի ունեցած հանդիպմանը նշել էր, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուլղարիայի մասնաճյուղը 2017թ. հունիսի 20-ին ժամը 17:30-ին Սոֆիայի Հայկական հանրային տանը կազմակերպում էր «Հայացք Ղարաբաղին- պատմություն և լուսանկարներ» միջոցառումը: Նա դժգոհել էր այն փաստից, որ միջոցառմանը մասնակցելու էր նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Պլովդիվի երիտասարդական կազմակերպության նախագահ, Պլովդիվում բնակվող և Արցախ այցելած Բուլղարիայի քաղաքացի Հայկ Կարապետյանը:

«Միջոցառման ժամանակ Հայկ Կարապետյանը կիսվել էր Ղարաբաղ կատարած այցից ունեցած տպավորություններով: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ Կարապետյանը հանդիսանում էր Պլովդիվի մարզպետարանին կից ազգային և ինտեգրման հարցերով զբաղվող խորհրդի անդամ»,- նշել էր Գուրբանովան բուլղարացի նախարարի հետ հանդիպմանը:

Գուրբանովան դիմել է Բուլղարիայի Էկոնոմիկայի նախարարին՝ միջնորդելու, որպեսզի բուլղարական կառավարությունը չեղարկի միջոցառումը: Թեև միջոցառումը չէր չեղարկվել, սակայն հիմք էր հանդիսացել Հ. Կարապետյանին պաշտոնից ազատելու համար[184]: Ըստ Հայկ Կարապետյանի,

---

[183] Տե՛ս Անանեան Ա., Պետունց Ա., Մամեան Դ., «Ադրբեջանի բուլղարական թղթապանակ. ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճիւղի դէմ Ադրբեջանի ճնշումների բացայայտումը նոր սկանդալային մանրամասներ է ստանում», https://armenpress.am/arm/news/901192/bolgarskoe--dose--azerbaiydzhana-noviye--skandalniye-podrobnosti.html, (07.01.2019):

[184] Տե՛ս Անանեան Ա., Պետունց Ա., Մամեան Դ., «Ադրբեջանի բուլղարական թղթապանակը. Ձախողվել են Բուլղարիայում օրինական գործող ՀԲԸՄ

բուլղարական իշխանությունները թույլ էին տալիս այլ պետության դեսպանատան խառնվել երկրի ներքին գործերին: «Բուլղարիայի հայ համայնքը մեծապես ինտեգրված է և համատեղ կեցության հարյուրամյակների ընթացքում լուրջ ներդրում է բերել Բուլղարիայի զարգացման գործում, կյանքի բոլոր ոլորտներում»-նշում էր Կարապետյանը[185]: Վերջինիս հնչեցրած դիրքորոշումը հիմք էր տալիս ենթադրելու, որ իր պաշտոնաթողությունը կապված էր եղել ադրբեջանական դեսպանատան գործունեության հետ և Բուլղարիայի պատկան մարմինները, երկրի քաղաքացու իրավունքները պաշտպանելու փոխարեն տեղի էին տվել տարատեսակ ճնշումների[186]: Բաքվի գործելաոճը հայկական կազմակերպությունների համար նորություն չէր: Հայ բարեգործական ընդհանուր միութունը համարում էր, որ իրենց կազմակերպության դեմ Բաքվի պաշտոնական ներկայացուցիչների նախաձեռնած արշավը առանձին միջադեպ չէր, այլ հանդիսանում էր հայկական սփյուռքի կազմակերպությունների դեմ ուղղված Ադրբեջանի պետական քաղաքականության մաս: ՀԲԸՄ Եվրոպայի պատասխանատու Նիկոլա Դավիդյանը նշում էր, որ դա ամենայն հավանականությամբ առաջին դեպքը չէ: Ըստ Նրա, եղել էին նաև այլ դեպքեր, ուղղակի հայ տնի չի դարձել այդ մասին: «Եվրոպական մի շարք երկրների ու հաստատութիւնների վրայ ազդելու համար ադրբեջանական դիւանագիտութիւնն օգտագործում է նաւթային լծակներն ու «խաւիարային դիւանագիտութեան» գործիքակազմը»-շեշտում էր Ն. Դավիդյանը[187]:

Վերջինս հավելում էր նաև, որ իրենց նպատակն էր, որ եվրոպական կառավարությունները հասկանան Արցախի և տարածաշրջանի նկատմամբ ազնիվ քաղաքականություն որդեգրելու անհրաժեշտությունը:

---

միջոցառումը խոչընդոտելու դեսպանի քայլերը», https://armenpress.am/arm/news/898721.html , (07.01.2019):

[185] Տե՛ս Անանեան Ա., Պետունց Ա., Մամեան Դ., «Ադրբեջանի բուլղարական թղթապանակ. ՀԲԸՄ Բուլղարիայի մասնաճիւղի դէմ Ադրբեջանի ճնշումների բացայայտումը նոր սկանդալային մանրամասներ է ստանում», https://armenpress.am/arm/news/901192/bolgarskoe--dose--azerbaiydzhana-noviye--skandalniye-podrobnosti.html, (07.01.2019):

[186] Տե՛ս նույն տեղում:

[187] Տե՛ս նույն տեղում:

Ըստ Ա. Քոյումջյանի, ով ՀԲԸՄ մեկ այլ մասնաճյուղի ղեկավար էր, նշում էր, որ ադրբեջանական կողմը մշտապես փորձում էր ճնշումներ բանեցնել բուլղարական իշխանությունների դեմ՝ օգտագործելով իր տնտեսական ռեսուրսները և համատեղ նախագծերը[188]:

Քոյումջյանն ընդգծում էր, որ Բուլղարիայի իշխանությունները շատ մեծ դեր էին տալիս տեղի հայ համայնքի հետ հարաբերություններին, քանի որ տեղի հայերն ակտիվ գործունեություն էին ծավալում ինչպես մշակութային, այնպես էլ տնտեսական, հասարակական շատ այլ բնագավառներում[189]:

2010-ական թթ. Բուլղարիայում հայտնվել էին մի շարք գործիչներ, որոնք ակտիվ քարոզչություն էին անում Ադրբեջանի օգտին և փորձում վնասել ինչպես հայ-բուլղարական կապերը, այնպես էլ խախտում հավասարակշռությունը, որը վարում էին Բուլղարիայի բարձրագույն իշխանությունները տարածաշրջանում: Այդպիսի գործիչներ էին Լյուբոմիր Միխայլովան, Իրինա Բոկովան, Եվգենի Կիրիլովը, Կարլին Միտրևը և այլն[190]: Սակայն այս գործընթացներին հակադրվում էր այն հանգամանքը, որ Բուլղարիան թեև փոքր քանակությամբ զենք էր վաճառում ՀՀ-ին, ինչը չենք կարող ասել Ադրբեջանի պարագայում: Դրա մասին էր վկայում ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ռեգիստրում հրապարակված զեկույցը[191], ըստ որի Հայաստանը 1094 միավոր ձեռքի գնդացիր (Light machine guns) էր ձեռք բերել[192]:

ՀՀ-ն և ԲՀ-ն 2004 թ. սկսած ակտիվացրեցին պաշտպանական բնագավառում իրենց համագործակցությունը և դրա վկայությունն էր Հայաստանի և Բուլղարիայի պաշտպանության նախարարությունների միջև հոկտեմբերի 23-ին ստորագրված համագործակցության ծրագիր: Փաստաթուղթը ստորագրեցին Հայաստանի պաշտպանության նախարարության արտաքին

---

[188] Տե՛ս նույն տեղում:
[189] Տե՛ս նույն տեղում:
[190] Մանրամասն տե՛ս Կոլարով Գ., ««Ադրբեջանական լվացքատունը» և բուլղարական ավանդական ձախ կուսակցության քաղաքական մահը», «Գլոբուս» վերլուծական հանդես, համար 9, 2017, էջ 41-50:
[191] Տե՛ս https://www.unroca.org/bulgaria/report/2017/ , (14.02.2019):
[192] Տե՛ս Սարոյան Ն., «2017-ին Հայաստանը Բուլղարիայից գնել է ավելի քան 1000 միավոր ձեռքի գնդացիր», https://razm.info/126673, (15.02.2019):

հարաբերությունների և ռազմական համագործակցության վարչության պետ Միխայիլ Մելքոնյանը և Բուլղարիայի պաշտպանական գերատեսչության համապատասխան ստորաբաժանման ղեկավար Նիկոլայ Միխայլովը[193]: Համաձայնություններ ձեռք բերվեցին զինվորականների ուսուցման և երկու երկրների պաշտպանության նախարարությունների համապատասխան վարչությունների միջև[194]:

ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը իր գոհունակությունն արտահայտեց բուլղարացի գործընկեր Նիկոլայ Սվինարովի Հայաստան այցի կապակցությամբ՝ այն համարելով շատ օգտակար: «Մենք ունենք համագործակցության բազմաթիվ եզրեր, ընդհանուր հետաքրքրություններ, և դրանց վավերացմանն էր ուղղված այս օրվա փաստաթղթի ստորագրումը»,-նշեց նա[195]:

Նիկոլայ Սվինարովը հույս հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունը և՛ պաշտպանության, և այլ ոլորտներում ավելի մեծ ծավալ կստանա և կօգնի լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Նրա խոսքերով, եթե «միջազգային քաղաքական մթնոլորտը» թույլ տա, ապա Բուլղարիան Հայաստանին կտրամադրի ամեն տեսակի սպառազինություն և տեխնիկա հայկական համեմատաբար երիտասարդ բանակը վերազինելու համար: «Մենք ուրախանում ենք, որ հայ-բուլղարական հարաբերությունները հաջող ներկաունեն, և հուսով ենք, որ ապագայում դրանք է՛լ ավելի կզարգանան»,-հայտարարեց նա[196]:

Սերժ Սարգսյանի խոսքերով, Հայաստանը չի ակնկալում որևէ սպառազինության անհատույց տրամադրում, քանի որ աշխարհի բազմաթիվ երկրներից փոխշահավետ պայմանագրերով էր ձեռք բերում զենք և զինամթերք: «Հայաստանն իրոք հնարավորություն ունի Բուլղարիայից ձեռք բերելու իր համար անհրաժեշտ տեխնիկան»,-ընդգծեց նա[197]:

---

193 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Ստորագրվեց Հայաստան-Բուլղարիա 2004թ. համագործակցության ծրագիր», թիվ 194 (2879), 24 հոկտեմբերի 2003 թ., էջ 2:
194 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Երևան ժամանեց Բուլղարիայի պաշտպանության նախարարը», թիվ 194 (2879), 24 հոկտեմբերի 2003 թ., էջ 2:
195 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Ստորագրվեց Հայաստան-Բուլղարիա 2004թ. համագործակցության ծրագիր», թիվ 194 (2879), 24 հոկտեմբերի 2003 թ., էջ 2:
196 Տե՛ս նույն տեղում:
197 Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի պաշտպանության նախարարը նշեց, որ հայ-բուլղարական ռազմական համագործակցության հիմքը դրվել էր 1998 թ. Սոֆիայում երկու երկրների նախագահների ստորագրած բարեկամության և համագործակցության համաձայնագրով: Ըստ նրա, պաշտպանության բնագավառում նույնպես պայմանագիր էր ստորագրվել, սակայն ինչ-ինչ պատճառներով այն ժամանակ համագործակցությունը գրեթե չզարգացավ: Դրական տեղաշարժը սկսվել էր 2003 թ. Սերժ Սարգսյանի՝ Նիկոլայ Սվինարովի հրավերով Սոֆիա կատարած այցելությամբ[198]:

Ն. Սվինարովն հանդիպման ընթացքում շեշտեց, որ 2004 թ. Բուլղարիայի արտգործնախարարն էր ստանձնելու ԵԱՀԿ-ի ղեկավարությունը և իր հիմնական խնդիրն էր համարելու ներդրումը ղարաբաղյան խնդրի կարգավորման մեջ: Նա համոզմունք հայտնեց, որ ՄԱԿ-ը նույնպես աջակցելու էր այդ գործընթացին, և այդ հարցն ակտիվորեն քննարկվելու էր նաև ՆԱՏՕ-ում, որի անդամ Բուլղարիան կդառնա նույն՝ 2004 թվականին[199]:

ՀՀ պաշտպանության նախարարը նշեց, որ Հայաստանին հետաքրքրում էր Բուլղարիայի պաշտպանության նախարարության անցած ճանապարհը, եվրոպական կառույցներին ինտեգրվելու նրա փորձն ու ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների հետ կապված հարցերը[200]:

2017 թ. օգոստոսի 17-ին Բուլղարիան Հայաստանում նշանակեց ռազմական կցորդ[201]: Կցորդի հետ հանդիպմանը բարձր գնահատվեցին պաշտպանության ոլորտում հայ-բուլղարական հարաբերությունների մակարդակը և վստահություն հայտնեցին, որ ռազմական կցորդի գրասենյակի բացումը կնպաստի պաշտպանական համագործակցության հետագա զարգացմանն ու խորացմանը[202]: Բուլղարիայի հետ կային նաև ձևավորված կայուն ռազմական հարաբերություններ: Բուլղարիան պաշտպանության բնագավառում

---

198 Տե՛ս նույն տեղում:

199 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Երևան ժամանեց Բուլղարիայի պաշտպանության նախարարը», թիվ 194 (2879), 24 հոկտեմբերի 2003 թ., էջ 2:

200 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, թիվ 193 (2878), 23 հոկտեմբերի 2003 թ., էջ 1:

201 Տե՛ս «Հանդիպում ՀՀ ՊՆ վարչական համալիրում», http://www.mil.am/hy/news/4905 , (18.01.2019):

202 Տե՛ս Հովհաննիսյան Տ., «Բուլղարիան Հայաստանում ռազմական կցորդի գրասենյակ է բացել», https://razm.info/109761 , (15.02.2019):

Հայաստանի հետ համագործակցող առաջին եվրոպական երկրներից էր, ուստի պատահական չէ, որ ՀՀ ՊՆ Վիգեն Սարգսյանն ընդգծել էր համագործակցության զարգացման հնարավորությունները մի շարք ոլորտներում և կարևորել մասնավորապես ռազմական ոստիկանության, ռազմական կրթության, մարդկային ռեսուրսների կառավարման և այլ բնագավառներում փորձի փոխանակումը[203]: Կարևորվել էր նաև հայ-բուլղարական ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը[204]:

2018 թ. ԲՀ նախագահ Ռումեն Ռադևի այցի ընթացքում ևս անդրադարձ կատարվեց ԼՂ հակամարտությանը և նշվեց, որ ՀՀ համար չափազանց կարևոր էր մեր գործընկերների աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով ընթացող գործընթացին, ինչը համահունչ էր նաև ԵՄ ընդհանուր դիրքորոշմանը: Բուլղարական կողմը հավելեց, որ ԼՂ հարցը կարևոր էր ոչ միայն հակամարտող կողմերի այլ և ողջ տարածաշրջանի համար[205]:

Այնուամենայնիվ, Բուլղարիան խրախուսում էր տնտեսական գործընթացները Լեռնային Ղարաբաղում: Հիմնական գործոնը տուրիզմն էր, որով Բուլղարիան փորձում էր նաև բուլղարներին տեղեկացնել հակամարտության խնդիրներին և տեղի ժողովրդի պատմությանն ու մշակույթին: Տուրիստական այս ուղղությունը գովազդվում էր բուլղարական տուրիստական կազմակերպությունների կողմից[206]:

Հատկանշական է, որ համաձայնագրով նախատեսվում էր ստեղծել աշխատանքային խումբ, որի նպատակն էր լինելու համաձայնագրի համապատասխան համագործակցության թեմատիկայի և

[203] Տե՛ս «ՀՀ պաշտպանության նախարարը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր», http://www.mil.am/hy/news/4640 , (18.01.2019):
[204] Տե՛ս Հարությունյան Գ., «Վիգեն Սարգսյանը Բուլղարիայի դեսպանի հետ քննարկել է պաշտպանական գործակցությունը», https://razm.info/96408 , (15.02.2019):
[205] Տե՛ս «Նախագահ Սերժ Սարգսյանի և Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադևի համատեղ մամուլի ասուլիսը», https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2018/02/12/President-Serzh-Sargsyan-and-President-Rumen-Radev-at-the-joint-conference-responded-to-the-questions/ , 15.02.2019
[206] Տե՛ս Дрехарски В., Нагорный Карабах на автомобиле глазами туриста из Болгарии, http://www.awaytravel.ru/content/%D0%BD%D0%B0%D0%B3%D0%BE%D1%80%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85-%D0%BD%D0%B0-%D0%B0%D0%B2%D1%82%D0%BE%D0%BC%D0%BE%D0%B1%D0%B8%D0%BB%D0%B5-%D0%B3%D0%BB%D0%B0%D0%B7%D0%B0%D0%BC%D0%B8-%D1%82%D1%83%D1%80%D0%B8%D1%81%D1%82%D0%B0-%D0%B8%D0%B7-%D0%B1%D0%BE%D0%BB%D0%B3%D0%B0%D1%80%D0%B8%D0%B8

համատեղ մշակված ծրագրի հետ կապված ուսումնասիրությունը, աշխատանքների համակարգումը և իրականացումը՝ դրա համար ներգրավելով իրավասու պետական մարմինները, ինստիտուտները և կազմակերպությունները[207]:

## 1.3. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2008 ԹԹ.)

Հայ և բուլղար ժողովուրդները ունեցել են բազմադարյան հարուստ եկեղեցական փոխառնչություններ: Հայ-բուլղարական եկեղեցական հարաբերություններն ամրապնդում են երկու երկրների միջև հաստատված միջպետական կապերը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Բուլղարիայի թեմը կազմավորվել է ԺԹ. դարում: Առաջնորդանիստը Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցին է: Միջնադարյան Բուլղարիայի մի շարք քաղաքներում ձևավորվել են քաղկեդոնական և առաքելական հայերի համայնքներ՝ իրենց եկեղեցիներով, վանքերով ու հոգևոր սպասավորներով[208]: Հիշյալ դարում Բուլղարիայում գործող հայկական եկեղեցիների թիվը 15-ից ավելի էր: Բուլղարիայի թեմը մինչև 20-րդ դարի սկիզբը գլխավորել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի առաջադրած առաջնորդական տեղապահը[209]:

---

[207] Տե՛ս նույն տեղում:

[208] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 131:

[209] 1903 թ. Բուլղարիայի թեմի առաջնորդ է ընտրվել Վահան վարդապետ Տեր-Հակոբյանը: Առաջին համաշխարհային (1914-1918 թթ.) և հույն-թուրքական (1919-1922 թթ.) պատերազմների տարիներին Բուլղարիայում գործել է ժամանակավոր

Խորհրդային իշխանության տարիներին, երբ Հայաստանը գտնվում էր ԽՍՀՄ կազմում, իսկ Բուլղարիայում կոմունիստական վարչակարգ էր հոգևոր կյանքի համար ծանր ժամանակներ էին: Այդ ընթացքում հաճախ էին անտեսվում երկու երկրներում գտնվող եկեղեցական կառույցների իրավունքները: Թերևս նաև այդ էր պատճառը, որ 1980-ական թթ. Բուլղարիայում գոյություն ուներ ընդամենը 5 հայկական եկեղեցի[210]:

Հայ և բուլղար եկեղեցիների բարձր հարաբերությունների մասին է վկայում դեռևս 19-րդ դարում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մկրտիչ Խրիմյանի կողմից բուլղարների նորընտիր էկզարխին առաջինը ողջունելը: Պատրիարքը ճանաչեց նաև բուլղարական եկեղեցու ինքնուրույնությունը[211]՝ «բուլղարական էկզարխությունը»[212]:

ՀՀ անկախության հռչակումից և Բուլղարիայում կոմունիստական վարչակարգի տապալումից հետո երկու եկեղեցիները քայլեր ձեռնարկեցին հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների և Բուլղարիայում Հայկական եկեղեցու դիրքերի ամրապնդման ուղղությամբ:

1994 թվականից Հայ Առաքելական Եկեղեցու Բուլղարիայի թեմական խորհուրդը (ատենապետ՝ Օ. Քիրազյան) ձեռնամուխ եղավ

---

թեմական խորհուրդ: 1922 թ. թեմի առաջնորդ է ընտրվել Ստեփանոս արք. Հովակիմյանը: 1954-1956 թթ. թեմը գլխավորել է Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, որը միաժամանակ Ռումինիայի թեմի առաջնորդներ էր: 1956 թ. վերջինս ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, իսկ բուլղարահայ թեմի աթոռը միառժամանակ մնացել է թափուր: 1968 թ. Հայաստանյայց առաքելական եկեղեցու Բուլղարիայի թեմի առաջնորդ է ընտրվել Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը: Տե՛ս նույն տեղում:

[210] Նույն տեղում:

[211] Տե՛ս «Արաքս», Սոֆիա, 1929, թիվ 110:

[212] Բարձր դուռը 1870 թ. փետրվարի 28-ին հրապարակեց ֆերման, որով ստեղծվում էր ինքնուրույն «բուլղարական էկզարխություն»: Բուլղարական եկեղեցու ղեկավար էկզարխը պետք է ընտրվեր և հաստատվեր բուլղարական Սինոդի ու պատրիարքի կողմից: Էզարխության տարածքը սահմանվում էր ավելի լայն, քան Գրիգոր 6-րդի սահմանածն էր: Բացի Մերձդանուբյան Բուլղարիայից, նրա կազմի մեջ մտնում էին նաև երկու թեմեր, որոնք ներառում էին ոչ միայն բուլղարական, այլև սերբական բնակչություն (Նիշում և Պիրոտում), ինչպես նաև Հարավային Բուլղարիան և Մակեդոնիայի մի մասը: Սահմանվում էր նաև, որ այդ սահմաններից դուրս մնացած տարածքները բնակչության 2/3-ի ցանկությամբ հնարավոր էր ևս միացնել էկզարխությանը: Այս ամենը ժողովրդի մեջ հարուցեց բերեց մեծ ոգևորություն: Կ. Պոլսում, որպես Բուլղարական եկեղեցու վերականգման բարձրագույն մարմին, ստեղծվեց ժամանակավոր եկեղեցական խորհուրդ՝ կազմված բուլղար արքեպիսկոպոսներից և աշխարհիկ գործիչներից: Տե՛ս Մխոյան Հ., Բուլղարական ինքնուրույն եկեղեցու համար պայքարը Օսմանյան կայսրությունում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2016, էջ 155-164:

հայկական եկեղեցիների վերաբացմանը, իսկ Պազարջիկի, Ստարա Զագորայի և Սոֆիայի քաղաքային իշխանությունները տեղի հայ համայնքներին տարածքներ հատկացրեցին նոր եկեղեցիների կառուցման համար[213]: Բուլղարահայ համայնքի ներկայացուցիչ՝ գործարար Մարգար Ծիրինյանն հանձն առավ հոգալ Սոֆիայում եկեղեցու կառուցման ծախսերը: Դեռևս 2006 թ. դեկտեմբերին կատարվեց եկեղեցու հիմնաքարերի օրհնության կարգը[214]: Դա նշանակում էր, որ երկարամյա դադարից հետո[215] Սոֆիայում կրկին գործելու էր հայկական եկեղեցի:

Ներկայումս գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, որտեղ գործում են հայկական եկեղեցիներ, կազմավորվել են նաև եկեղեցական հոգաբարձություններ: Բուլղարիայի հայկական համայնքներում գերիշխողը Հայ Առաքելական Եկեղեցին է, բայց կան նաև փոքրաքանակ ավետարանական համայնքներ, մասնավորապես՝ Սոֆիայում, Պլովդիվում և Վառնայում[216]:

Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես իր մասնակցությունն է ունեցել հայ-բուլղարական երկկողմ միջպետական հարաբերությունների ձևավորման ու զարգացման վրա և 1990-ական թթ. սկսած գրեթե բոլոր միջպետական հարաբերություններում Հայ Առաքելական Եկեղեցին կարևոր մասնակցություն է ունեցել: Ընդ որում՝ դա վերաբերում է և՛ Հայաստանում, և՛ Բուլղարիայում տեղի ունեցող հանդիպումներին: Հայ Առաքելական Եկեղեցին երկկողմ միջպետական հարաբերություններում փորձել է կարգավորել գլխավորապես մշակութային, կրթական, հայկական համայնքին, հայկական եկեղեցիներին և մշակութային ժառանգությանը վերաբերող խնդիրները, որոնք բավական մեծ հաջողությամբ կարողացել է իրականացնել: Հայ-բուլղարական եկեղեցական հարաբերություններում հատուկ տեղ է հատկացվում նաև աղանդների խնդրին երկու երկրներում:

---

213 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 131:

214 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայ եկեղեցու զանգերը կղողանջեն Սոֆիայում», թիվ 10 (3662), 20 հունվարի 2007 թ., էջ 2:

215 1934 թ. Սոֆիայում գործող հայկական եկեղեցին քանդվել էր այդ ժամանակվա տեղի իշխանությունների կողմից:

216 Տե՛ս «Հայ-բուլղարական կապեր ՀՀ նախագահի Բուլղարիա կատարելիք պաշտոնական այցի առթիվ», https://armenpress.am/arm/news/394021/.html, (19.08.2018):

1999 թ. մարտի 6-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահ Յ. Սոկոլովի գլխավորած պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ նախագահ Խ. Հարությունյանի ուղեկցությամբ: Հանդիպման ընթացքում կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը նշեց, որ հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունը դարավոր պատմություն ունի, իսկ Հայ Առաքելական եկեղեցին սերտ հարաբերություններ է վարում բուլղար ուղղափառ եկեղեցու հետ: Խոսվեց նաև երկու երկրներում հոգևոր-եկեղեցական կյանքի, հոգևոր վերազարթոնքի մասին, կարևորվեց եկեղեցի-պետություն սերտ հարաբերությունների անհրաժեշտությունն ու եկեղեցու դերը ազգի միասնականության պահպանման գործում: Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև աղանդների տարածման խնդրին[217]:

Հայ-բուլղարական եկեղեցական հարաբերությունների կարևորագույն հանգրվաններից էր 2002 թ. հունիսի 24-ին Գարեգին Բ կաթողիկոսի այցը Բուլղարիա: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բուլղարիա էր մեկնել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մաքսիմ պատրիարքի և Բուլղարիայի հայ համայնքի հրավերով: Վեցօրյա այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ երկրի պետական ու հոգևոր իշխանությունների, ինչպես նաև բուլղարահայ համայնքի հետ[218]:

Սուրբ Ալեքսանդր Նևսկու մայր տաճարում նրան դիմավորել է Բուլղարիայի պատրիարք Մաքսիմը: Կաթողիկոսը երախտագիտության խոսքեր ուղղեց Բուլղարիայի ժողովրդին և Ուղղափառ եկեղեցուն հայերի նկատմամբ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի համար: Ի նշան գթասրտության, այդ պատմական ակտի համար երախտագիտության և համերաշխության, Հայ Առաքելական Եկեղեցու

[217] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին այցելեց Մայր աթոռ», թիվ 44 (2258), 9 մարտ 1999 թ., էջ 1:

[218] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը մեկնեց Բուլղարիա», թիվ 117 (2562), 25 հունիսի 2002 թ., էջ 1:

ղեկավարը ոսկե խաչ և հովվապետական այլ պարգևներ շնորհեց պատրիարք Մաքսիմին[219]:

Պաշտոնական այցով Բուլղարիայում գտնվող Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին Բ. Կաթողիկոսը հայտարարեց, որ Հայաստանի և Բուլղարիայի ու նրանց ժողովուրդների փոխհարաբերությունները խոր արմատներ ունեն և աչքի են ընկնում «եղբայրությամբ և սիրով»:

Այցի ընթացքում Գարեգին Բ. Կաթողիկոսին ընդունեցին Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը և խորհրդարանի նախագահ Օգնյան Գեչիկովը: Հայոց հոգևոր առաջնորդը գոհունակություն հայտնեց այն հեռանկարի առթիվ, որ բացվում է Սոֆիայի և Երևանի փոխհարաբերություններում: Բուլղարիա ձեռնարկած իր այցը նա գնահատել է որպես Հայ առաքելական և Բուլղարական ուղղափառ եկեղեցիների «էկումենիկ հարաբերությունների ապացույց»:

Հայոց Հայրապետը ուրախությամբ փաստեց հայ և բուլղար ժողովուրդների ու եկեղեցիների դարավոր ու ջերմ կապերը, նշելով. «Մենք հավատում ենք, որ այս այցը պիտի զորացնի մեզ, որպեսզի մեկտեղումով մեր ջանքերը զորացնեն նաև մեր եկեղեցիները»[220]:

Երկրի տարբեր պաշտոնատար անձանց հետ Հայոց Հայրապետի հանդիպումների ընթացքում շեշտվեց այն կարևոր ներդրումը, որ ունեցել է Բուլղարիայի հասարակական կյանքում հայ համայնքը, ինչպես նաև դարերի ընթացքում ձևավորված հայ և բուլղար եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամությունը, Հայ եկեղեցու նշանակալի դերը Բուլղարիայի հայ համայնքի կյանքում: Գարեգին Բ-ն եղավ Վառնայի և Տռնովոյի մետրոպոլիտություններում, գիշերեց Բաչկովոյի վանքում, այցելեց Րիլայի վանք, որը մեծ նշանակություն ունի բուլղար ժողովրդի հոգևոր կյանքում[221]:

---

[219] Տե՛ս Արթուր սրկ. Կարապետյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա և Բուլղարահայոց թեմ, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2002, համար Զ-Է, էջ 3-17:

[220] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Գարեգին Բ կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 120 (3013), 4 հուլիսի 2002, էջ 2:

[221] Տե՛ս Արթուր սրկ. Կարապետյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա և Բուլղարահայոց թեմ, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2002, համար Զ-Է, էջ 3-17:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը եղավ առավել հայաշատ քաղաքներում՝ Վառնայում և Պլովդիվում, այցելեց տեղի հայկական եկեղեցիներ: Այդ օրերին վերանորոգվել էր նաև Վառնայի Սբ. Սարգիս հայկական եկեղեցին, իսկ Վեհափառ Հայրապետի այցի առիթով Վառնայում քաղաքային հոգևոր ու պետական իշխանությունների և հայ համայնքի մասնակցությամբ բացվեց խաչքար-հուշարձան՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի[222]: Դիմավորումից հետո շատ մեծ համերգ էր կազմակերպվել, որին մասնակցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ կաթողիկոսը: Համերգին մասնակցեց Սուրբ Գևորգ եկեղեու եկեղեցական երգչախումբը[223]:

2003 թ. հոկտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ԲՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ստեֆան Դիմիտրովին: «Մենք անհուն գոհունակություն ենք ապրում, որ մեր երկու պետությունների միջև հարաբերությունները զորանում և առաջընթաց են ապրում, որը արդյունավետ անդրադարձներ պիտի ունենա մեր երկու ժողովուրդների կյանքի վրա»,- ասել է Գարեգին Բ-ն:

Ստեփան Դիմիտրովը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ վստահեցնելով, որ Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալուց հետո առավել ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ պիտի կատարի իր պարտականությունները՝ հանուն մեր երկրների և երկու եկեղեցիների զորացման[224]:

Փոխադարձ հանդիպումները շարունակվեցին նաև հետագայում, որի վկայությունն էր 2004 թ. Հայաստան ժամանած Բուլղարիայի նախագահի հանդիպումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գոհունակությունն է հայտնել երկու երկրների ջերմ հարաբերությունների առթիվ: «Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ այն հոգատար վերաբերմունքի համար, որ տածում եք Բուլղարիայում բնակվող մեր ժողովրդի զավակաց նկատմամբ,

---

222 Նույն տեղում:

223 Տե՛ս «Հայեր» (ամսագիր), «Համազգային հայ-բուլղարական տուն», թիվ 173, 1-15 հուլիս 2002, էջ 4:

224 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց Ստեփան Դիմիտրովին», թիվ 199 (3332), 25 հոկտեմբերի 2003, էջ 1:

ովքեր իրենց կարևոր ներդրումն ունեն Բուլղարիայի պետության մեջ՝ որպես արժանավոր և հավատարիմ քաղաքացիներն այդ պետության»,- ասել է Գարեգին Բ. Կաթողիկոսը[225]: Հանդիպման ընթացքում Վեհափառ հայրապետն անդրադարձավ նաև Առաքելական եկեղեցու անցած ուղուն:

Բուլղարիայի նախագահը ուրախությամբ նշել է, որ տարեցտարի սերտանում են երկու երկրների հարաբերությունները և շեշտել հասարակության մեջ քրիստոնեական բարձր արժեքների տարածման անհրաժեշտությունը՝ նշելով, որ բուլղար ժողովուրդը կարողացավ տոկալ և դիմանալ դժվարություններին իր հավատքի և եկեղեցու շնորհիվ[226]:

Բուլղար պատվիրակության կազմում էր նաև Բուլղար Ուղղափառ եկեղեցու Վիդինսկի Դոմետիան միտրոպոլիտը: Միտրոպոլիտը, Բուլղար եկեղեցու գահակալի և Ս. Սինոդի անդամների ողջույնը փոխանցելով Հայոց Հայրապետին, նշեց, որ իր համար մեծ ուրախություն է լինել Ս. Էջմիածնում և արժանանալ Հայոց Հայրապետի ընդունելությանը: Դոմետիան միտրոպոլիտը կարևորեց երկու եկեղեցիների միջև ստեղծված ջերմ հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ դրանք էլ ավելի պիտի զորանան ու ամրապնդվեն ի շահ երկու քրիստոնյա ժողովուրդների[227]:

2005 թ. հունվարի 11-ին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության կրթության և գիտության նախարար պրոֆ. Իգոր Դամյանովի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով երկու բարեկամ երկրների կրթության և գիտության նախարարների այցը Հայ եկեղեցու հոգևոր կենտրոն՝ Ամենայն հայոց հայրապետը գոհունակությամբ արձանագրեց երկու երկրների հարաբերությունների զարգացումը, որոնք տարեցտարի

---

[225] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդ, ԵՊՀ ...», թիվ 178 (3557), 7 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

[226] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Ջերմ հարաբերություններ երկու երկրների եկեղեցիների միջև»
թիվ 176 (3107), 7 հոկտեմբերի 2004 թ., էջ 3:

[227] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, «»Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովը Մայր Աթոռում», Էջմիածին, 2004, համար Թ-Ժ, էջ 4:

նոր ծավալ են ստանում՝ լինելով բնական արտահայտությունը երկու քրիստոնյա ժողովուրդների դարավոր բարեկամության:

Վեհափառ հայրապետը նախարարի միջոցով իր շնորհակալությունը հայտնեց նաև Բուլղարիայի իշխանություններին իրենց հոգատար վերաբերմունքի համար Բուլղարիայում ապրող հայ ժողովրդի զավակների նկատմամբ:

Խոսելով 2005 թ. նշվող Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի մասին՝ Ամենայն հայոց կաթողիկոսը հորդորեց, որ բուլղար ժողովուրդը, որ ժամանակին ևս զգացել է ծանրությունը յաթաղանի, հնչեղություն տա այդ իրողությանը և դատապարտի կատարվածը[228]:

2004 թ. հունիսին Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը և ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը Պլովդիվի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում հանդիպեցին հայ համայնքի հետ: Հայաստանից եկած հյուրերի համար հայկական երգեր երգեցին ու պարեցին բուլղարահայ համայնքի երեխաները: Սուրբ Գևորգ եկեղեցու վանահայր, հայկական համայնքի հովիվ տեր Դանիել Քալաջյանն ասաց. «Մենք հպարտանում ենք, որ այսօր վերջապես Հայաստանը անկախ է եւ հայի աչքերը ուղղված են դեպի Հայաստան աշխարհ: Մենք ուզում ենք, որ մեր հայրենիքը կրկին վայելի այն ոսկեշատ օրերը, որ մենք ունեինք մեր պատմության ընթացքում: Եվ մենք էլ մեր սեփական ուժերով այստեղ փորձում ենք պահպանել հայ ազգը, հայ մշակույթը, հայ լեզուն՝ մեր եկեղեցու արարողությունների և ծրագրերի շնորհիվ: Փրկության ճանապարհը արդեն գիտենք, որ սա է»[229]:

Թեև հայ և բուլղար եկեղեցիները ունեն բազմադարյան պատմություն և սերտ հարաբերություններ, այնուամենայնիվ առաջին անգամ հայոց ցեղասպանության առթիվ Բուլղարիայի եկեղեցական Սինոդը ցավակցական նամակ հղեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին լոկ 2007 թվականին: Սինոդը իր խորին ցավակցությունն էր հայտնում 1915 թ. տեղի ունեցած Հայոց

---

228 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի կրթության եվ գիտության նախարարին» թիվ 2 (3168), 12 հունվարի 2005 թ., էջ 1:

229 Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, «Բոլորս գնում ենք նույն տեղը և նույն ճանապարհով», https://www.aravot.am/2004/07/01/802583/ , (07.08.2018)

Ցեղասպանության կապակցությամբ: Սա առաջին անգամն էր, որ Բուլղարիայի եկեղեցական Սինոդի կողմից ընդունված փաստաթղթում Հայոց Եղեռնին վերաբերող փաստաթղթում օգտագործվում է «ցեղասպանություն» բառը: «Բուլղար ժողովուրդն ու եկեղեցին ոչ քիչ տանջանք ու հալածանք են ապրել հինգդարյա օսմանյան լծի ներքո: Բուլղարիայում ապրում են շուրջ 70.000 հայեր, որոնք հանդիսանում են Բուլղարիայում եղբայրական ընդունելություն գտած տուժվածների ժառանգները: Հավերժ լինի բազմաթիվ զոհերի հիշատակը, որոնք տուժեցին թուրքերի սրից»,- ասվում էր ուղերձում[230]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ հայ և բուլղար եկեղեցական հարաբերությունները ունեն բավական ամուր հիմքեր և զարգացման մեծ տեսլական: Եկեղեցական հարաբերությունները ներառում են մի շարք հոգևոր և քաղաքական բնագավառներ և մեծապես նպաստում են երկու երկրների հոգևոր, դիվանագիտական, քաղաքական հարաբերությունների զարգացմանը: Հայ-բուլղարական եկեղեցական հարաբերությունների կարևորագույն կողմերից է նաև Բուլղարիայի հայկական համայնքի պահպանման խնդիրը, որը հիմնականում իրականացվում է Հայ առաքելական եկեղեցու, տեղի հայկական եկեղեցական հաստատությունների միջոցով:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:
## ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

---

230 Տե՛ս «Բուլղարիայի եկեղեցական Սինոդն առաջին անգամ Ցեղասպանություն անվանեց 1915 թվականի իրադարձությունները», http://www.panarmenian.net/arm/news/24214/, (05.08.2018):

1990-ական թթ. սկզբին պայմանավորված Հայաստանի և Բուլղարիայի ծանր սոցիալ-տնտեսական վիճակով երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները բավական փոքր էին: Դա պայմանավորված էր տնտեսությունների անցումային իրավիճակով, որը բնականաբար իր անդրադարձն է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների վրա: 1990-ական թթ. առաջին տարիներին բավական ցածր էին տնտեսական գրեթե բոլոր ցուցանիշները:

Սոցիալիստական համակարգի (Տնտեսական փոխօգնության խորհրդի և Վարշավյան պայմանագրի) փլուզումը շատ ընդհանուր խնդիրներ դրեց Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական պետությունների առջև: Խորհրդային Միության փլուզումով այդ խնդիրներն ընդհանուր դարձան նաև նորանկախ պետությունների համար:

Հայաստանը և Բուլղարիան շատ նման էին լուծման սպասող իրենց խնդիրներով. անցում շուկայական տնտեսության, անմրցունակ արդյունաբերության ճյուղերի արդիականացում և վերապրոֆիլավորում, արտասահմանյան ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծման ձգտում, արտաքին առևտրի մեջ անմիջական հարևանների և նախկին ԽՍՀՄ պետությունների մասնաբաժինների հավասարակշռման փորձեր, ֆինանսավարկային խիստ քաղաքականություն վարելու անհրաժեշտություն և այլն[231]: 1990-ական թթ. սկզբին Բուլղարիայում իրականացված տնտեսական փոփոխությունների արդյունքում տեղի ունեցավ ինֆլյացիա[232], ինչը խիստ բացասական ազդեց երկրի տնտեսական աճի վրա: ՀՀ-ն և ԲՀ-ը տարբեր կերպ և տարբեր մարտավարություններով փորձեցին լուծել այդ խնդիրները: Սակայն նրանց միավորում էր ոչ միայն սոցիալիստական անցյալը, այլև միմյանց տարածաշրջաններում տնտեսական բարենպաստ դիրքեր ստանալու ձգտումը: Դա էր պատճառը, որ հետխորհրդային առաջին տարիներից սկսած ՀՀ-ն և ԲՀ-ն սկսեցին ակտիվացնել առևտրի ծավալները: Սկսած 1992 թ. այդ ցուցանիշները տարեցտարի ավելի էին մեծանում:

[231] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:
[232] Տե՛ս The New Encyclopedia Britannica. 15th edition. Micropedia. Vol.14. Chicago, 1994. p.625.

Հայաստանից 1992 թ. Բուլղարիա է արտահանվել 0.4 միլիոն ռուբլու ապրանք, որը նախկին խորհրդային երկրների ցուցանիշները չհաշված 7-րդ էր այդ արդյունքով: Բուլղարիայից այս ցուցանիշով աշխարհում առաջ էին միայն ԱՄՆ-ը, Իրանը, Հարավսլավիան, Նիդեռլանդները, Վենեսուելան, Սիրիան և Չինաստանը[233]:

**Աղյուսակ 1: ՀՀ արտաքին առևտուրն ըստ առանձին երկրների (հազար ԱՄՆ դոլարով)1994-1996 թթ.** [234]

| Երկրի անվանումը | Ապրանքների արտահանումը | | | Ապրանքների ներմուծումը | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1994 | 1995 | 1996 | 1994 | 1995 | 1996 |
| Բուլղարիա | 24.3 | 93.2 | 198.4 | 910 | 4639.8 | 14294.7 |
| Չեխիա | 112.1 | 239.3 | 0.0 | 121.2 | 6274.5 | 765.4 |
| Սլովակիա | 0.0 | 0.0 | 38.3 | 0.0 | 10 | 49.3 |
| Սլովենիա | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 134.5 |
| Լեհաստան | 417.6 | 9.3 | 0.0 | 186 | 426.5 | 759.2 |
| Ռումինիա | 0.0 | 0.0 | 70.8 | 0.0 | 1410.5 | 4750.0 |
| Հունգարիա | 0.0 | 0.1 | 16.8 | 0.0 | 206.9 | 1183.9 |
| Հարավսլավիա | 0.0 | 0.0 | 101.7 | 247.9 | 189.2 | 426.7 |

1993 թ. հրապարակված Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մեջ հատուկ տեղ էր հատկացվում Արևելաեվրոպական երկրներից Սլովակիային և Բուլղարիային: Մասնավորապես այդ երկրների հետ առաջարկվում էր առևտրատնտեսական, կապիտալ ներդրումներ փոխադարձ պաշտպանության, երկակի հարկումից խուսափելու վերաբերյալ,[235] որոնք հետագայում ստացան իրավապայմանագրային կարգավորում:

---

[233] Տե՛ս Հայաստանը թվերով, 1992, Վիճակագրական համառոտ ժողովածու, Եր., 1994, էջ 16:

[234] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, Վիճակագրական ժողովածու, Եր., 1998, էջ 180:

[235] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության 1993 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը», թիվ 59 (663), 27 մարտի 1993 թ., էջ 7: Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 218, թ. 62:

Սկսած 1994 թ. հայ-բուլղարական փոխադարձ առևտրաշրջանառությունը կայունացման ուղի բռնեց: Դա հիմնականում պայմանավորված էր ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի կնքմամբ: Ըստ պայմանագրի կողմերը միմյանց տրամադրում էին առավել բարենպաստ կարգավիճակ բոլոր հարցերում, որոնք վերաբերում էին արտահանման և ներմուծման նկատմամբ կիրառվող ցանկացած տեսակի մաքսատուրքերին և գանձումներին: Համաձայնագրի երկրորդ հոդվածով սահմանվում էր, որ ապրանքների մատակարարումները և ծառայությունների մատուցումները իրականացվելու են արտաքին տնտեսական գործունեության իրավունք ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Կողմերը այլ հոդվածներով պարտավորվում էին միմյանց աջակցել տեղեկատվությանության փոխանակման գործում, մասնավորապես երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը նպաստող օրենքների ու նորմատիվ ակտերի բնագավառում: Յուրաքանչյուր կողմ պարտավորվում էր իր օրենսդրության շրջանակներում աջակցել իր տարածքում մյուս կողմի արտաքին տնտեսական կազմակերպությունների ներկայացուցչությունների ստեղծմանը և գործունեությանը, ինչպես նաև առևտրական պատվիրակությունների փոխանակմանը: Կողմերը պայմանավորվում էին նպաստել արտադրության կոոպերացման ընդլայնմանը, համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը: Միաժամանակ համաձայնագրում ամրագրվում էր, որ կողմերի տարածքով բեռների և ուղևորների փոխադրման և տարանցման կարգը կսահմանվի առանձին համաձայնագրով[236]: Սույն համաձայնագիրը կնքվել էր Սոֆիայում 1994 թ. ապրիլի 25-ին: Սակայն երկու երկրներում առկա քաղաքական ու տնտեսական վերափոխումների արդյունքում այն ուժի մեջ մտավ միայն չորս տարի անց 1998 թ. դեկտեմբերի 16-ին:

1994 թվականից տնտեսական հարաբերություններում սկսվեց նկատվել դրական տեղաշարժ, որը գլխավորապես պայմանավորված էր նաև երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ

[236] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 347-349:

և համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծմամբ: Ապրանքաշրջանառության ծավալները թեև սկզբնական շրջանում բավական փոքր էին և նույնիսկ չէին գերազանցում մեկ միլիոն դոլարը, սակայն հետագայում դրանք ավելացան և սկսեցին մեծ թափով զարգանալ: Հայ-բուլղարական տնտեսական հարաբերություններում մշտապես մեծ է եղել Բուլղարիայից ներկրվող ապրանքների թիվը և այդ անհավասարությունը շտկել երբևէ չի հաջողվել: Այդ ամենով հանդերձ Արևելյան Եվրոպայի երկրների շարքում Բուլղարիան ուներ առաջատար դեր և՛ արտահանման, և՛ ներմուծման բնագավառում: Ու եթե 1994 թ. Հայաստանից Արևելյան Եվրոպա արտահանման ծավալով Բուլղարիան հետ էր մնում Լեհաստանից և Չեխիայից, ապա հաջորդող տարիներին իրավիճակը փոխվեց և Բուլղարիան դարձավ առաջատարը այս ուղղությամբ: Հայաստան ներմուծվող ապրանքների ծավալով Բուլղարիան 1994-1996 թթ. շարունակեց մնալ առաջատար, իսկ դրանց ծավալները մի քանի անգամ ավելացան 1996 թ. դրությամբ հասնելով 14 294 700 դոլարի: Այս ցուցանիշով վերջինս երկու անգամ գերազանցում էր բոլոր Արևելաեվրոպական երկրներին միասին վերցրած[237]:

Նույն թվականի դրությամբ Բուլղարիան գերազանցում էր նաև Ֆրանսիային, Նիդեռլանդներին, Մերձբալթյան երկրներին միասին վերցրած, Շվեյցարիային, Հնդկաստանին, Չինաստանին: ԱՊՀ երկրներից այդ ցուցանիշով Բուլղարիան հետ էր մնում միայն Ռուսաստանից, Վրաստանից և Թուրքմենստանից:

1990-ական թթ. Բուլղարիան շարունակում էր մարդասիրական օգնություն ուղարկել Հայաստան: Եվ այս ամենն այն դեպքում, երբ Բուլղարիան ինքը լրջագույն սոցիալ-տնտեսական ճգնաժամի առաջ էր կանգնած: 1994-1995 թթ. վերջինս արևելաեվրոպական երկրների շարքում միակ երկիրն էր, որ մարդասիրական օգնություն էր ցուցաբերում Հայաստանին, իսկ արդեն 1996 թ. Արևելյան Եվրոպայից եկած մարդասիրական օգնության շուրջ 95 տոկոսը բաժին էր ընկնում Բուլղարիային: Աշխարհում Բուլղարիան այս ցուցանիշով

---

[237] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, Վիճակագրական ժողովածու, Եր., 1998, էջ 180:

նույն թվականի դրությամբ 15-րդն էր[238]: Հայաստանին Բուլղարիան դեռ Սպիտակի երկրաշարժին էր մեծ օգնություն ցուցաբերել, որի համար ՀՀ նախագահը 1998 թ. շնորհակալություն հայտնեց ԲՀ նախագահ Ն. Գ. Ստոյանովին[239]:

**Աղյուսակ 2:**

**Մարդասիրական օգնությամբ ստացված ապրանքների ծավալը (հազար ԱՄՆ դոլարով)1994-1996 թթ.**[240]

| Երկրի անվանումը | 1994 | 1995 | 1996 |
|---|---|---|---|
| Բուլղարիա | 25.57 | 134.1 | 143.9 |

1994 թ. առաջին եռամսյակում ՀՀ արտաքին առևտրի շրջանառության ծավալները Բուլղարիա արտահանվող և այնտեղից ներկրվող ապրանքների մեջ զգալի աճ գրանցվեց: Դա պայմանավորված էր երկկողմ հարաբերությունների կայունացմամբ և փոխադարձ բարձր մակարդակի հանդիպումներով: Նշված ժամանակամիջոցում Հայաստանից Բուլղարիա էր արտահանվել 3,3 մլն. դոլարի, իսկ ներմուծվել էր 8,9 միլիոն դոլարի ապրանք[241]: Այս ցուցանիշով Բուլղարիան առաջինն էր Արևելյան Եվրոպայի այն երկրների շարքում, որոնք չեն եղել ԽՍՀՄ կազմում:

1995 թ. արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը երկու երկրների միջև կազմել է 4733.0 հազար դոլար, որից արտահանման ծավալն է 93.2 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 1.9%-ը), ներմուծմանը՝ 4639.8 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 98.1%-ը)[242]:

1990-ական թթ. առաջին տարիներին Բուլղարիայից Հայաստան էր ներմուծվում գարեջուր, օղի, թեթև արդյունաբերության

---

[238] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 181:
[239] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, գ. 3, գ. 212, թ. 52:
[240] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1995, 1996, նշվ. աշխ.:
[241] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ տնտեսությունը 1994 թ. հունվար-մարտին», թիվ 87 (951), 10 մայիսի 1994 թ., էջ 2-3:
[242] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, գ. 5, գ. 55, թ. 47:

արտադրանք: Այդ տարիներին անհրաժեշտ էր համարվում ակտիվացնել նաև արտահանումը Հայաստանից Բուլղարիա: Հնարավորություններ կային էլեկտրոնիկայի բնագավառում[243]:

1990-ական թթ. առաջին կեսին ՀՀ-ում և ԲՀ-ում տեղի ունեցան կարևորագույն փոփոխություններ տնտեսական վերափոխումների բնագավառում: Թեև ակնհայտ էին, որ այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերի մի մասը երկու երկրներում ձախողվել և հաջողության չէին հասել, այնուամենայնիվ իրականացված փոփոխությունները որոշակիորեն դրական տեղաշարժեր առաջացրեցին փոխադարձ տնտեսական հարաբերություններում:

1990-ական թթ. սկզբին Բուլղարիայում բարեփոխումները դանդաղ էին ընթանում, եթե համեմատենք Լեհաստանի, Չեխիայի և Հունգարիայի հետ: Զարգացման առումով Արևելյան Եվրոպայում տեմպերը գրեթե համահավասար էին Ռումինիային և Սլովակիային: Նույն ժամանակամիջոցում Բուլղարիան մոտ 1,5 միլիարդ դոլար ստացավ Միջազգային արժույթի հիմնադրամից և Համաշխարհային բանկից, սակայն կառավարությունների արագ փոփոխությունների պատճառով բարեփոխումները դանդաղում էին: 1993 թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում սոցիալիստների հաղթանակից և Ժան Վիդենովի գլխավորությամբ նոր կառավարություն կազմելուց հետո երկրի նախագահ Ժ. Ժելևը, ով ժողովրդական ուժերի դաշինքի ներկայացուցիչն էր, զգույշ ներքին քաղաքականություն էր վարում՝ հավասարակշռող դեր խաղալով խորհրդարանի, կառավարության և ընդդիմության միջև[244]:

Բուլղարիայի ներքին տնտեսական կյանքում 1995 թ. դրությամբ ամենամեծ և տարածայնությունների տեղիք տվող հարցը հողային բարեփոխումն էր: Ժողովրդավարական ուժերի դաշինքի առաջնորդ՝ Ֆիլիպ Դիմիտրովի կառավարության կողմից այդ հարցով հանձնաժողովներ ստեղծվեցին, գումարներ ծախսվեցին, սակայն հաջորդ՝ պրոֆեսոր Բերովի կառավարությունը 2,5 տարի այդ ուղղությամբ համարյա ոչինչ չարեց: Այդ ընթացքում հիմնական բանավեճը հետևյալն էր. ու՞մ պետք է սեփականաշնորհել հողը.

[243] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995 թ., էջ 1:
[244] Տե՛ս նույն տեղում:

նրանց ովքեր աշխատում էին գյուղում (սոցիալիստների տեսակետ), թե նրանց, ում պապերի սեփականությունն էր եղել այն (ժողովրդավարների տեսակետ)[245]: Սա էր պատճառը, որ երբ Բուլղարիայի խորհրդարանում իր ելույթի ժամանակ Լ. Տեր-Պետրոսյանն ասաց, թե Հայաստանում հողի լիակատար սեփականաշնորհում է իրականացվել, բուռն ծափողջյուններ հնչեցին. ծափահարում էին ժողովրդավարական ուժերի դաշինքի պատգամավորներն: Իսկ երբ նախագահն ասաց, թե այն իրականացվեց շատ պարզ մեխանիզմով՝ հողը տրվեց նրանց, ովքեր այսօր մշակում են այն, նույնպես բուռն արձագանք եղավ դահլիճի մյուս թևից՝ սկսեցին ծափահարել սոցիալիստները[246]:

1990-ական թթ. կեսերից Բուլղարիան սկսեց մեծ ուշադրություն դարձնել եվրոպական տարբեր շրջանների հետ ակտիվ տնտեսական փոխգործությանը և այդ առումով Հայաստանը մեծ հետաքրքրություն էր ներկայացնում: Դա էր պատճառը, որ 1995 թ. ապրիլի 20-ին ԲՀ ԱԳՆ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների վարչության պետի տեղակալ Ստեֆան Դիմիտրովը ՀՀ պետական պաշտոնյաներին և հայ ձեռներեցներին ու առևտրականներին հրավիրեց մասնակցելու նոյեմբերի 15-17-ը կայանալիք ԵԱՀԿ շրջանակներում բուլղարական կառավարության կողմից կազմակերպված «Անդրեվրոպական ինֆրաստրուկտուրայի դերը Սևծովյան տարածաշրջանի կայունության և համագործակցության համար» թեմայով սեմինարին[247]: Ըստ Դիմիտրովի, Բուլղարիան համոզված էր այն բանում, որ տնտեսության զարգացումն ու սերտ համագործակցությունը Եվրոպայի բոլոր մասերի միջև հիմք էր հանդիսանում նրա անվտանգության համար: Այդ առումով Բուլղարիան անհրաժեշտ էր համարում արդիականացնել գոյություն ունեցող եվրոպական ենթակառուցվածքները[248]: Այս

---

[245] Տե՛ս նույն տեղում:
[246] Տե՛ս նույն տեղում:
[247] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 1, գ. 220, թ. 100:
[248] Նույն տեղում:

նպատակով սեմինարի մասնակիցները քննարկեցին երեք բնագավառ՝ էներգետիկա, տրանսպորտ և հեռահաղորդակցություն[249]:

Բուլղարիայում 1991-1995 թթ. բարեփոխումների արդյունքները ամփոփելով կարելի էր եզրակացնել, որ հետևողականորեն քայլեր էին արվում ապապետականացման և ապամենաշնորհման ուղղությամբ: Բալկանյան երկրները (նախ և առաջ՝ Հունաստանը) Բուլղարիայի գլխավոր տնտեսական գործընկերները դարձան: Սոֆիայում 1990-ական թթ. սկզբին ակնհայտորեն շահագրգռված էին Սևծովյան տնտեսական համագործակցության կայացմամբ և լուրջ աշխատանք էին տանում տարածաշրջանային այդ կազմակերպության անդամ պետությունների հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու և խորացնելու ուղղությամբ[250]: Այս առումով հատկանշական էր, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև կնքված բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին պայմանագրում շեշտվում էր Սևծովյան տնտեսական համագործակցության դերի և արդյունավետության բարձրացման կարևորությունը[251]:

1994 թ. ՀՀ-ի և ԲՀ-ի միջև ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը (կնքվել էր 5 տարով, իսկ հնգամյա ժամկետը լրանալուց հետո գործողությունը երկարաձգվելու էր ինքնաբերաբար), որը և տեղի է ունեցել: Ըստ համաձայնագրի, ՀՀ-ն և ԲՀ-ն միմիանց տրամադրում են առավել բարենպաստ ռեժիմ այն ամենում ինչ վերաբերում է՝

- ապրանքների արտահանմանը և ներմուծմանը,
- մաքսային գանձումներին,
- մաքսային արարողակարգերին,
- ուղակի և անուղակի ներքին հարկերին,
- դրամական փոխանցումներին[252]:

---

[249] Նույն տեղում:
[250] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:
[251] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 482:
[252] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն, տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 47:

Ինչպես տեսնում ենք 1994 թ. սկսած Հայաստանի և Բուլղարիայի միջև ստեղծվում էր բարենպաստ իրավապայմանագրային միջավայր առևտրատնտեսական գործունեության համար:

Արդեն 1995 թ. ՀՀ նախագահի այցը նախապատրաստելու համար Հայաստան եկած պատվիրակությունը հստակ փոխանցեց իրենց գործարարների ցանկությունը. Այն է այցի շրջանակներում հանդիպել Հայաստանցի գործարարներին: Վերջիններիս հետ բուլղարները ցանկանում էին քննարկել ԽՍՀՄ փլուզման և ազգամիջյան հակամարտությունների պատճառով խափանված հաղորդակցությունը վերականգնելու և առևտրատնտեսական համագործակցությունը զարգացնելու հնարավորությունները: Այդ նույն ժամանակահատվածում համաձայնեցվեց նաև «Անդրկովկաս-Բալկաններ» հաղորդակցության մի նոր ձևի առաջին համաձայնությունը: Դա վերաբերում էր Փոթի-Բուրգաս նավթամուղի անցկացման պայմանավորվածությանը[253]: Տնտեսական համանման գործակցությանը նպաստելու էր միտված «Բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին» պայմանագիրը, որով կողմերը պայմանավորվում էին նպաստել փոխշահավետ և իրավահավասար տնտեսական ու առևտրական համագործակցության զարգացմանը: Պայմանավորվածություն էր ձեռք բերվում իրականացնել տեղեկության փոխանակում իրենց երկրներում իրագործվող տնտեսական բարեփոխումների ընթացքի և ուղղությունների մասին: Կողմերը պայմանավորվում էին նաև իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան ապահովել իրավական, տնտեսական և ֆինանսական պայմաններ՝ միմյանց տարածքում մյուս կողմի ֆիզիկական և իրավաբանական անձանց ձեռնարկատիրական ու տնտեսական այլ գործունեության համար, այդ թվում՝ համատեղ ձեռնարկությունների, բանկերի և նաև այլ կազմակերպությունների ստեղծման գործում: Պայմանավորվող կողմերը խրախուսելու էին փոխադարձ ներդրումներն ու ապահովելու էին դրանց պաշտպանությունը այդ նպատակներով

[253] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

կնքված համաձայնագրերի հիման վրա[254]: Պայմանագրի 11-րդ հոդվածը սահմանում էր, որ կողմերը կզարգացնեն փոխշահավետ լայն համագործակցություն արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ու մեքենաշինության, էլեկտրոնիկայի, հեռուստահաղորդակցության, թեթև, սննդի և քիմիական արդյունաբերության, հատուկ սարքավորումների և շինարարական արդյունաբերության համար սարքավորումների արտադրության բնագավառներում[255]:

1992 թ. սկսված երկկողմ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ փոխադարձ լուրջ և հետևողական քայլեր կատարվեցին: Այդ տարիներին անխափան գործում էր Երևան-Սոֆիա ու Երևան-Բուրգաս չվերթները: Օդային այս ճանապարհով քաղաքացիները ոչ միայն Բուլղարիա էին հասնում, այլև նրա տարածքով Հունաստան, Թուրքիա, Ռումինիա, Եվրոպայի այլ երկրներ: Բուլղարիան այդ տարիներին պահպանում էր մուտքի արտոնյալ կարգը ԱՊՀ պետությունների քաղաքացիների համար[256]: 1995 թ. ապրիլի 10-ի օդային փոխադրումների մասին համաձայնագիրը իրավական հիմք տվեց Երևան-Սոֆիա ուղիղ չվերթին: Ըստ այդ համաձայնագրի յուրաքանչյուր պայմանավորվող կողմ մյուսին տրամադրում էր համաձայնագրում նախատեսված իրավունքները միջազգային կանոնավոր երթուղիներում պայմանագրային չվագծերի հաստատման և շահագործման նպատակով[257]: Համաձայնագրի հավելվածում սահմանվում էին ՀՀ և ԲՀ երթուղիների ուղղությունները: Մասնավորապես սահմանվում էր, որ Հայաստանում թռիչքները կարող են կատարվել Երևանում, Գյումրիում և ևս երկու ուղղություն թողնվում էր հետագա քննարկումներում որոշելու համար, իսկ բուլղարական ուղղություններն էին Սոֆիան, Բուրգասը, Վառնան, Պլովդիվը[258]: Համաձայնագիրը ուժի մեջ մտավ 1996 թ. մարտի 6-ից և անցավ

---

[254] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 481:
[255] Տե՛ս նույն տեղում:
[256] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:
[257] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 527:
[258] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 527-537:

վավերացման բավական արագ փուլեր, ինչը այդ ժամանակվա համար հազվադեպգործընթաց էր:

Նույն ժամանակ կնքված ավտոմոբիլային փոխադրումների համաձայնագիրը հնարավորություն տվեց բեռների և ուղևորների փոխադրումը կազմակերպել նաև ցամաքով, այսինքն ավտոմոբիլային տրանսպորտով: Այս համաձայնագրով առաջանում էին նաև ծովային փոխադրումների հնարավորություններ[259]: Ըստ համաձայնագրի, փոխադրողները թույլտվություն էին ստանում դիմելով այն երկրի իրավասու մարմնին, որի տարածքում գրանցված էին: Թույլատվություն չէր պահանջվում զբոսաշրջային կամ պատահական փոխադրումների համար՝ ինչպես երկու երկրների միջև, այնպես էլ նրանց տարածքով տարանցիկ փոխադրումներ կատարելիս[260]: Այս համաձայնագիրը լայն հնարավուրություններ ընձեռեց երկու երկրների քաղաքացիների շփումների համար, ինչը կարող էր ազդել և խթան հանդիսանալ տնտեսական շփումների ակտիվացման համար:

Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ միջպետական կոնվենցիան պարզեցրեց երկկողմ հարկային խնդիրները: Կոնվենցիան տարածվում էր Հայաստանում հետևյալ հարկատեսակների վրա.

1. շահութահարկ,
2. ֆիզիկական անձանցից եկամտահարկ,
3. գույքահարկ,
4. հողի հարկ:

Բուլղարիայում համաձայնագիրը տարածվում էր հետևյալ հարկատեսակների վրա.

1. հարկ ընդհանուր եկամտից,
2. շահութահարկ,
3. շինությունների հարկ[261]:

Կոնվենցիան, ըստ էության, կարգավորեց երկկողմ հարաբերությունները տնտեսական ոլորտում և հիմք հանդիսացավ

---

[259] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995 թ., էջ 1:
[260] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 510-526:
[261] Տե՛ս նույն տեղում:

հետագա համագործակցության համար: Հարկ է նշել, որ այս կոնվենցիայի կնքման աշխատանքները մշակված էին դեռևս երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո:

Այն կիրառվում էր նաև նույնական կամ բնույթով նույն ցանկացած այլ հարկերի նկատմամբ, որոնք նշանակվելու էին ի լրումն նշված հարկատեսակների կամ դրանց փոխարեն[262]: Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1995թ. նոյեմբերի 3-ից:

Կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագիրը, ինչպես նաև նախագահների ստորագրած բարեկամության և համագործակցության մասին պայմանագրերը անհրաժեշտ իրավական հիմք էին ստեղծում տնտեսական հարաբերությունները զարգացնելու համար[263]: ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձաբար պաշտպանության մասին համաձայնագիրը նոր հիմքեր ստեղծեց երկկողմ տնտեսական ակտիվության աճի համար: Համաձայնագրում սահմանվում էր, որ երկու կողմերը ցանկանալով ամրապնդել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը, ձգտում են խրախուսել և ստեղծել բարենպաստ պայմաններ մի պայմանավորվող կողմի ներդրողի կապիտալ ներդրումների համար մյուս պայմնավորվող կողմի տարածքում փոխշահավետության և հավասարության հիման վրա: Կողմերն ընդունում էին, որ կապիտալ ներդրումների խրախուսումը և փոխադարձաբար պաշտպանությունը նպաստում էին այդ բնագավառում գործնական քայլերին[264]:

Կնքված առաջին տնտեսական բնույթի համաձայնագրերն հիմք հանդիսացան հետագա գործակցության համար, թեև ըստ էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանի տնտեսական կապերը լրիվ վերականգնելու մասին խոսք չէր կարող լինել, սակայն դրանք որոշակիորեն կարելի էր ակտիվացնել[265]: Դրա պատճառը այն էր, որ Բուլղարիան խիստ ինտեգրված էր նախկին ՏՓԽ-ում և հիմնականում այդ պատճառով մեծ դժվարություններ ուներ:

---

[262] Տե՛ս նույն տեղում, էջ 538-543:

[263] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995թ., էջ 1:

[264] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ. աշխ., էջ 505-509:

[265] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995թ., էջ 1:

Հաշվի առնելով Բուլղարիայի տնտեսական հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի ու Եվրոպայի միջև առևտրատնտեսական համագործակցության համար այդ երկրի ունեցած կարևոր աշխարհաքաղաքական դիրքը ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը 1996 թ. արտաքին քաղաքական գերակա ուղղություններից էր համարում համագործակցությունը Բուլղարիայի և արևելաեվրոպական երկրներից Ռումինիայի հետ, որոնց հետ արդեն կային կայուն դիվանագիտական հարաբերություններ[266]:

1996 թ. արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը երկու երկրների միջև մեծ աճ արձանագրեց՝ կազմելով 14493.1 հազար դոլար, որից արտահանման ծավալն է 198,4 հազար դոլար (Բուլղարիայի հետ կատարվող արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 1.4%-ը), ներմուծմանը՝ 14294.7 հազար դոլար (Բուլղարիայի հետ կատարվող արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 98.6%-ը)[267]:

Ինչպես տեսնում ենք Բուլղարիայի հետ արտահանման և ներկրման բալանսը խիստ խախտված էր: Ներմուծումը մի քանի տասնյակ անգամ գերազանցում էր արտահանմանը: Սա այս և հետագա շրջաններում Հայաստանի արտաքին առևտրի համար խիստ բնութագրական էր և Բուլղարիան այս առումով բացառություն չէր:

Տնտեսական գործունեության ակտիվացումը 2 երկրների համապատասխան ոլորտները կարգավորող պաշտոնյաների հանդիպումների պատճառ դարձան: Մասնավորապես 1996 թ. ապրիլի 6-ին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը ընդունեց ԲՀ արդյունաբերության նախարար Կլիմենտ Վուչևին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ-բուլղարական կապերի, հատկապես արդյունաբերության բնագավառում համագործակցության հետագա ընդարձակման հարցեր: ՀՀ արդյունաբերության նախարար Ա. Սաֆարյանը և Կ. Վուչևը ստորագրեցին բուլղարական

---

266 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները», թիվ 186-187 (1626), 18 սեպտեմբերի, 1996 թ., էջ 3:

267 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 47:

պատվիրակության Հայաստանում գտնվելու և համագործակցության մասին արձանագրություն[268]։

1996 թ. ակտիվ էր ընթանում նաև Բուլղարիայում հայության տնտեսական ներուժի հավաքագրման գործընթացը։ Արևելյան Եվրոպայի երկրներից առաջինը Բուլղարիայում սկսեց գործել «Հայաստան» հիմնադրամի տեղական հանձնախումբը։ Այն սկսել էր իր գործունեությունը ծավալել 1996 թ. ՀՀ դեսպանության և Բուլղարիայի Հայ առաքելական եկեղեցու համատեղ ջանքերով[269]։

Նախորդ տարիների համեմատ տնտեսական շփումները սկսեցին ավելի ակտիվանալ հաջորդ ժամանակաշրջանում։ 1997 թ. ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը և ԲՀ արտաքին գործերի նախարար Ն. Միխայլովան մեծ նշանակություն տվեցին գործարար շրջանակների միջև կապերի աշխուժացմանը, զրուցակիցները ընդգծեցին, որ բիզնեսի շահավետության տեսակետից Հայաստանը և Բուլղարիան կարող են լավ գործընկերներ դառնալ և շատ գործարարներ արդեն իսկ ստեղծել են ուղղակի կապեր[270]։

Գործարար կապերն ակտիվացնելու նպատակով այցի ընթացքում ԲՀ ԱԳ նախարարի հետ Հայաստան էին ժամանել նաև գործարարների պատվիրակություն։ Արտգործնախարարը տեղեկացրեց, որ Բուլղարիայի զբոսաշրջության և առևտրի նախարարությունը մտադիր էր Երևանում հիմնել առևտրատնտեսական ներկայացուցչություն[271]։

Այսպիսով 1991-1998 թթ. սկսեցին ձևավորվել և աստիճանաբար զարգանալ հայ-բուլղարական առևտրատնտեսական կապերը։ Սկզբնական շրջանում այն փոքր չափերի էր և չէր արտահայտում երկու երկրների տնտեսական ներուժը։ Դա պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով։ Մասնավորապես Հայաստանի անկախ հանրապետությունը նոր էր ձևավորվում, իսկ Բուլղարիան նոր կառավարման համակարգի էր անցնում։ Երկու

---

[268] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հրանտ Բագրատյանը ընդունեց Բուլղարիայի արդյունաբերության նախարարին», թիվ 67 (1506), 9 ապրիլի 1996 թ., էջ 1։

[269] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Հայաստան» հիմնադրամը Բուլղարիայում», թիվ 27 (1465), 13 փետրվարի 1996 թ., էջ 1։

[270] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Վարչապետն ընդունեց Բուլղարիայի դեսպանին», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 1։

[271] Տե՛ս նույն տեղում։

երկրները գտնվում էին ծանր տնտեսական իրավիճակում, տնտեսության բազմաթիվ ճյուղեր չէին աշխատում, չկային հաղորդակցության համար անհրաժեշտ ճանապարհներ, որի հիմնական պատճառը ՀՀ շրջափակումն էր: Երկու երկրների տնտեսություններում առկա էին համանման մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ էր լուծել տնտեսական և հատկապես առևտրի ծավալները մեծացնելու միջոցով: Բուլղարիայում և Հայաստանում անդադար տեղի էին ունենում կառավարությունների փոփոխություններ, որոնք չէին կարողանում լուծել ծառացած տնտեսական խնդիրները: Իրականացված փոփոխությունները ամբողջությամբ չէին լուծում տնտեսական անկումը, իսկ երբեմն էլ բացասական ազդեցություն էին ունենում: Սակայն սկսած 1994 թ. երբ Հայաստանի և Բուլղարիայի միջև հաստատվեցին կայուն դիվանագիտական հարաբերություններ տնտեսական համագործակցությունը սկսեց ակտիվանալ: Սրան հատկապես նպաստեցին միջպետական պայմանագրերը, համաձայնագրերն ու կոնվենցիաները, որոնք իսկական դեր ունեցան առևտրաշրջանառության աճի վրա: Այս տարիներին Բուլղարիան Հայաստանի համար դարձավ Արևելյան Եվրոպայում համար մեկ առևտրային գործընկերը՝ առաջ անցնելով նույնիսկ տարածաշրջանի ԱՊՀ երկրներից: Բուլղարիան կայուն գործընկեր էր Հայաստանի համար Արևելյան Եվրոպայում, իսկ Հայաստանը Բուլղարիայի համար Կովկասում: Առևտրին խոչընդոտող իրավական խնդիրների լուծումը սկսած 1994 թ. հնարավորություն տվեց մեծացնել առևտրի աճի տեմպերը: Այդ համաձայնագրերի կնքումը, տնտեսությունը կարգավորող պաշտոնյաների հանդիպումները անմիջապես զգացնել տվեցին իրենց տնտեսական ցուցանիշներում: Սակայն առևտրաշրջանառության մեջ կար և հետագայում էլ պահպանվեց արտահանման ու ներկրման հավասարակշռության խախտումը: Հայաստանը մի քանի անգամ ավելի պակաս էր արտահանում Բուլղարիա, քան ներկրում էր: Դա հիմնականում պայմանավորված էր Հայաստանի տնտեսական ներուժի թուլությամբ և այն հանգամանքով, որ Հայաստանում արտադրվող ապրանքներից նույն հաջողությամբ արտադրվում էին նաև Բուլղարիայում:

Այնուամենայնիվ, հաղորդակցության ուղիների կարգավորումը, բարձր մակարդակի մի շարք հանդիպումները կայուն զարգացման հնարավորություններ ընձեռեցին երկու երկրներին և հիմք հանդիսացան առևտրատնտեսական նոր մարմինների ստեղծման ու դրանց գործունեության համար:

## 2.2. ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն Հայաստանի, Բուլղարիան ուշ հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ, թեև ուներ բավական հաջող աշխարհագրական դիրք: 1990-ական թթ. վերջին Բուլղարիան ղեկավարվում էր միջազգային վալյուտային ֆոնդի կողմից, որը հսկում էր ամեն ինչ և նույնիսկ հաստատում գները: Երկրի տնտեսությունը մեծ կախվածություն ուներ արտաքին շուկաներից և դա հատկապես վերաբերում էր էներգետիկ ոլորտին: Մասնավորապես Բուլղարիայում 2008 թ. թանկացավ Ռուսաստանից ներկրվող գազը[272]: Դա ամենայն հավանականությամբ կապված էր երկրի Եվրոմիության անդամ դառնալու հետ: Դեռևս 1990-ական թթ. վերջերից երկիրը ուներ հսկայական արտաքին պարտք, որը հասնում էր 20 միլիարդ դոլարի[273] և դա հաջորդ տարիներին աճի տեմպեր դրսևորեց: Այսպիսով կարող ենք տեսնել, որ Բուլղարիայի տնտեսության մեջ առկա խնդիրները բավական նման էին Հայաստանի խնդիրներին:

1990-ական թթ. վերջին և դրան հաջորդող շրջանում Բուլղարական տնտեսության մեջ գերակա դարձան լեռնահանքային արդյունաբերությունը, էներգետիկան, մետալուրգիան, մեքենաշինությունը, գյուղատնտեսությունը, տուրիզմը:

---

[272] Տե՛ս «Spiegel online», Gas Shortage Fallout. Bulgaria Looks to Restart Soviet-Era Reactors, http://www.spiegel.de/international/europe/gas-shortage-fallout-bulgaria-looks-to-restart-soviet-era-reactors-a-602954.html, (17.02.2019):

[273] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիան Ամերիկա չէ, և հայերն այնտեղից կվերադառնան Հայաստան», թիվ 71 (2028), 14 ապրիլ 1998 թ., էջ 3:

Արդյունաբերական արտադրանքի հիմնական ապրանքներն էին հագուստը, երկաթը, մեքենաները և վառելանյութերը[274]: Սակայն երկրի տնտեսության մեջ չկար ներդրումներ իրականացնելու համապատասխան միջավայր[275]:

Երկու երկրների տնտեսության մեջ առկա բացասական միտումները զգալիորեն բարդացնում էին երկկողմ տնտեսական հարաբերությունները: Առկա խնդիրները համագործակցության բացասական ֆոն էին ստեղծում տնտեսական փոխառնչություններում: Սակայն հայ-բուլղարական առևտրատնտեսական կապերի ձևավորման ու զարգացմանը զուգընթաց սկսեցին ձևավորվել միջկառավարական մարմիններ, որոնք ակտիվորեն ներազդում էին երկու երկրների առևտրատնտեսական գործունեության վրա: Այս մարմինները էական ազդեցություն ունեցան ՀՀ և ԲՀ միջև իրականացվող տնտեսական գործընթացներում:

Արդեն 1997 թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և Բուլղարիայի տնտեսվարողների միության միջև ստորագրվեց համագործակցության և գործընկերության մտադրությունների մասին արձանագրություն: Բուլղարիայի արտգործնախարարի հետ Հայաստան ժամանած մոտ 20 խոշոր ընկերությունները ներկայացնող գործարարները այցելեցին «Արմէքսպո» արդյունաբերական ցուցահանդես: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը ներկայացրեց Հայաստանի տնտեսական օրենսդրությունը, արտահանման և ներմուծման ռեժիմները: Երկու միությունները համաձայնության եկան լիզինգային ընկերություն ստեղծելու շուրջ: Նախատեսվեց նաև Երևանում բացել բուլղարական ապրանքների խանութ, որտեղ կվաճառվեն կոսմետիկա, պահածոներ, շինանյութ և այլն: Ըստ Բուլղարիայի տնտեսվարողների միության նախագահ Բոժիդար Դանևի այդ համագործակցությունը իր առաջին

---

274 Տե՛ս The World Factbook; Europe; Bulgaria, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/bu.html, (17.02.2019):

275 Տե՛ս Bulgaria; Key Challenges, http://www.sgi-network.org/2014/Bulgaria/Key_Challenges, (17.02.2019):

պտուղները կտար 1998 թ.: Ա. Վարդանյանը նշեց, որ Հայաստանում ծանոթ են Բուլղարիայի շուկային, տնտեսության հնարավորություններին: «Արևելյան տնտեսական բլոկի տրոհումից հետո սա առաջին հանդիպումն է, որը վկայում է, որ մենք նորից վերգտնում ենք միմյանց և փորձում նորովի օգտագործել համագործակցության հնարավորությունները»,-ասաց Ա. Վարդանյանը[276]:

**Աղյուսակ 3:**

**ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը Բուլղարիայի հետ 1998-2008 թթ. ըստ առանձին երկրների[277](տվյալները ներկայացված են 1000 ԱՄՆ դոլարով)**

| ԸՍՏ ՏԱՐԵԹՎԵՐԻ | ԱՐՏԱՀԱՆՈՒՄ | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ |
|---|---|---|
| 1998 թ. | 881.8 | 12081.8 |
| 1999 թ. | 1028.5 | 16186.1 |
| 2000 թ. | 656.0 | 7210.0 |
| 2001 թ. | 326.6 | 6424.3 |
| 2002 թ. | 1596.0 | 49495.8 |
| 2003 թ. | 1519.5 | 49272.7 |
| 2004 թ. | 4717.7 | 53057.2 |
| 2005 թ. | 841.8 | 27354.9 |
| 2006 թ. | 1285.3 | 41606.8 |
| 2007 թ. | 46927.6 | 87493.0 |
| 2008 թ. | 59574.1 | 118600.5 |

1997 թ. ընթացքում տեղի ունեցած մի շարք հանդիպումները նպաստեցին երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը: Բուլղարիան այդ տարի զբաղեցրեց 11-րդ տեղը

[276] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի և Հայաստանի գործարարները ստորագրեցին մտադրությունների արձանագրություն», թիվ 217 (1922), 8 նոյեմբերի 1997թ., էջ 2:

[277] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997,1998), նշվ. աշխ., էջ 446, 451: Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999,2000), նշվ. աշխ., էջ 468, 473: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, նշվ. աշխ., էջ 468, 492, 497: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, նշվ. աշխ., էջ 490, 492, 496: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, նշվ. աշխ., էջ 489-493: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006, նշվ. աշխ., էջ 492, 496: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007, նշվ. աշխ., էջ 453: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, նշվ. աշխ., էջ 458: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, նշվ. աշխ., էջ 458,460,463: Հայաստան, 2001, Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 83, 84: Հայաստան, 2002, Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 86: Հայաստանը թվերով, 2005 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 82: Հայաստանը թվերով, 2006, Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 79, 81: Հայաստանը թվերով, 2007 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 80, 82: Հայաստանը թվերով, 2008 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 81:

ներմուծող երկրների թվում[278]: Այս ցուցանիշը առաջինն էր արևելաեվրոպական երկրների ցանկում, գերազանցում էր ԱՊՀ երկրների մեծ մասին: Այսպես, 1997 թ. արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը երկու երկրների միջև կազմել է 25907.7 հազար դոլար, որից արտահանման ծավալն է 464.4 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 1.8%-ը), ներմուծմանը՝ 25443.3 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 98.2%-ը)[279]: Ինչպես տեսնում ենք բալանսը փոխվել էր ընդամենը 0.4 %-ով, ինչը չափազանց փոքր արդյունք էր, եթե հաշվի առնենք իրականացված քայլերը և միջկառավարական մարմինների ակտիվ գործունեությունը:

Հաջորդ տարի՝ 1998 թ. թեև թվային հարաբերությամբ արտահանումը և ներկրումը աճեցին երկկողմ առևտրում, սակայն տոկոսային հարաբերությամբ Բուլղարիան նահանջեց Հայաստան ապրանք ներմուծող երկրների ցանկում և զբաղեցրեց 14-րդ տեղը[280]: Այնուամենայնիվ, այս ցուցանիշով Բուլղարիան շարունակում էր գերազանցել բոլոր արևելաեվրոպական երկրներին: 1998 թ. արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը երկու երկրների միջև կազմել էր 17214.6 հազար դոլար, որից արտահանման ծավալն է 1028.5 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 6%-ը), ներմուծմանը՝ 16186.1 հազար դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 94%-ը)[281]: Այստեղ արդեն արտահանումը ուներ տեսանելի աճ, սակայն հարաբերակցությունը դեռևս խիստ խախտված էր:

1995 թ. համեմատությամբ արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը 1998 թ. աճել էր 12481.6 հազար դոլարով (3.6 անգամ), աճը կազմել էր 263.7%: Ընդ որում արտահանման ծավալն ավելացել է 935.3 հազար դոլարով (11 անգամ), աճը կազմել էր 1003.5%,

---

[278] Տե՛ս նույն տեղում:
[279] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 47:
[280] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Եր., 2002, էջ 494:
[281] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 47:

ներմուծումը՝ 11546.3 հազար դոլարով (3.5 անգամ), աճը կազմել էր 248.8%[282]:

1997 թ. ՀՀ և Բուլղարիայի միջև արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը կազմել էր ՀՀ արտաքին առևտրի շրջանառության ամբողջ ծավալի (944861.4 հազար դոլար) 0.5 %-ը, իսկ 1998 թ. (1122905.2 հազար դոլար)՝ 1.5%-ը[283]:

1998 թ. ՀՀ-ից Բուլղարիա է արտահանվել ընդամենը 796.0 տոննա արտադրանք՝ 523.8 մլն. դրամ (1028.5 հազար դոլար) ընդհանուր արժողությամբ, ներմուծվել էր ընդամենը 18174.2 տոննա արտադրանք 8178.2 մլն. դրամ (16186.1 հազար դոլար) ընդհանուր արժողությամբ[284]: Արտահանված ապրանքների մեջ գերակշռում են պղինձը և պղնձե իրերը, ալյումինից, քարից, գիպսից, ցեմենտից իրերը, դեղագործական մթերքները, բանջարեղենի, պտուղների վերամշակումից ստացված մթերքները, նաև սուրճը, թեյը և այլ համեմունքները: Ներմուծվող ապրանքների մեջ գերակշռում են հացահատիկը, շաքարը, բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից ստացված մթերքները[285]:

1998 թ. հունվարի 16-ին ԲՀ Նախարարների խորհուրդը ԲՀ և ՀՀ համատեղ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ նշանակեց տրանսպորտի փոխնախարար Պետկո Տաբակովը: Վերջինս հանդիսանում էր միջազգային տրանսպորտային միջանցքի կուրատոր, որը Ս. Սևանի հավաստմամբ հայ-բուլղարական համագործակցության շեշտը դնում է տրանսպորտային ապագա միջացքի զարգացման վրա[286]:

Այս առումով կարևոր էր Հայաստանի, Բուլղարիայի և Վրաստանի տրանսպորտի նախարարներ Երվանդ Զախարյանի, Վիլհելմ Կրաունի և Մերաբ Ադեիշվիլիի կողմից 1998 թ. դեկտեմբերի 23-ին

---

282 Նույն տեղում:
283 Նույն տեղում:
284 Նույն տեղում:
285 Նույն տեղում:
286 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 27:

Երևանում ստորագրված «Եռակողմ հանդիպման արդյունքների մասին» հուշագիրը[287]:

ՀՀ տրանսպորտի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված երևանյան քննարկումների արդյունքում Բուլղարիա-Վրաստան-Հայաստան երկաթուղային միջանցքի գործարկման սկիզբը դրվեց: Դրանով Հայաստանի և Վրաստանի երկաթուղային շարժակազմերը լաստանավերով Բուլղարիա այնտեղից՝ Եվրոպա անցնելու հնարավորություն ստացան[288]:

Ստորագրման արարողությունից հետո կայացած ճեպազրույցում Բուլղարիայի տրանսպորտի նախարարը նշեց, որ իրենք համաձայնության են եկել միասնական չափանիշներ մշակելու և դրանցով առաջնորդվելու հարցում, որպեսզի տրանսպորտային միջանցքը գործուն օղակ դառնա: Իսկ ըստ Վրաստանի տրանսպորտի նախարար Մ. Ադեիշվիլու, միջանցքի գործարկումից հետո նրան կարող էին միանալ նաև այլ երկրներ, քանի որ այն Եվրոպա-Ասիա տրանսպորտային հաղորդակցության ընդհանուր գծի մասն է կազմում: «Այս կամուրջն ունի մեծ հեռանկար, և մեր մշտական աշխատանքը այն կդարձնի արդյունավետ»,- նշեց Մ. Ադեիշվիլին[289]:

Նախարարները նշեցին նաև, որ միջանցքի գործարկումը կմեծացնի երեք երկրների միջև ապրանքաշրջանառությունը, որին պետք է քաղաքական աջակցություն տալ: Թե՛ Հայաստանը և թե՛ Վրաստանը կարող էին Բուլղարիայի տարածքով Եվրոպա դուրս գալ, հաշվի առնելով, որ այդ երկրով են անցնում եվրոպական երկաթուղային 10 կարևորագույն հանգույցները[290]:

Ինչպես տեսնում ենք երկկողմ տնտեսական հարաբերություններում կարևոր էր դառնում տրանսպորտային հաղորդակցության արդյունավետ համագործակցությունը: Երկկողմ կապերը ընդլայնվում էին և ներառում նոր երկրներ ի դեմս Վրաստանի և ստեղծում հիմք նոր երկրների ներգրավման համար:

---

287 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստան-Վրաստան-Բուլղարի երկաթուղային նոր միջանցք», թիվ 252 (2209), 24 հոկտեմբերի 1998 թ., էջ 1:
288 Տե՛ս նույն տեղում:
289 Տե՛ս նույն տեղում:
290 Տե՛ս նույն տեղում:

Հայաստանը Բուլղարիայի միջոցով փորձում էր դուրս գալ դեպի եվրոպական շուկա, որտեղ համանման պայմանագրերը կարևորագույն դերակատարություն էին ստանում:

Երկկողմ տրանսպորտային խնդիրներին էր վերաբերում նաև Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովում հայկական կողմի ակտիվությունը, որը բազմիցս հանդես է եկել անդամ պետությունների միջև տրանսպորտային հաղորդակցության վերականգնման առաջարկներով:

Ռումինիա-Վրաստան-Հայաստան, Բուլղարիա-Վրաստան-Հայաստան երկաթուղային հաղորդակցության ստեղծումը խորհրդարանական դիվանագիտության շուրջ մեկ տարվա լուրջ աշխատանքի արդյունք էր, որն ավարտվեց նշված պետությունների հետ ստորագրված պայմանագրերի վավերացմամբ: Բուլղարիա և Ռումինիա կատարած այցերի ընթացքում հայկական պատգամավորական առաքելությունների հիմնական նպատակներից էր երկաթուղու համար հարմարեցված լաստանավային հաղորդակցության ստեղծմանն առնչվող խնդիրների քննարկումը: Սա լուրջ քայլ էր Հայաստանի ապաշրջափակման գործում: Եթե հաշվի առնենք, որ առաջիկայում նախատեսվում էր Իրանի մասնակցությունը նշված ծրագրերին, ապա կարելի էր ասել, որ լուրջ քայլ էր նաև Հայաստանը «փակուղոց» «խաչմերուկ» դարձնելու ճանապարհին[291]:

Տրանսպորտային հարցերի քննարկումը շարունակվեց նաև խորհրդարանականների մակարդակով: 1998 թ. ՀՀ խորհրդարանականների Բուլղարիա այցելության ժամանակ երկու երկրների օրենսդիր մարմինների ղեկավարների հանդիպման ընթացքում բազմաթիվ խնդիրների հետ մեկտեղ քննարկվել են «Տրասեկա»[292] ծրագրի շրջանակներում հաղորդակցության նոր

---

[291] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Խորհրդարանական դիվանագիտության դերը պետության արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործում», թիվ 98 (2568), 30 մայիս 2000 թ., էջ 5:

[292] «Տրասեկա» բազմակողմ համագործակցության ծրագիրը առաջարկվել է Եվրամիության կողմից 1993 թ.: Ծրագրի իրավական կարգավիճակը ամրագրվել է 1998 թ., երբ տարածաշրջանային 12 երկրներ ստորագրել էին «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի զարգացման վերաբերյալ Հիմնական բազմակողմ համաձայնագիրը: 2000 թ. ստեղծվել էր ծրագրի Միջկառավարական հանձնաժողովը, իսկ մեկ տարի անց՝ Հանձնաժողովի գործադիր մարմինը՝ Մշտական քարտուղարությունը (նստավայրը՝ Բաքու): Այժմ անդամակցում են 13 երկրներ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բուլղարիանը, Վրաստանը, Իրանը, Ղազախստանը,

ուղիների ստեղծմանը, ՄԾՏՀ շրջանակներում տրանսպորտային օղակի ձևավորմանը, եվրոպական կառույցների ինտեգրացմանն ու սերտհամագործակցությանն առնչվող հարցեր[293]:

1998 թ. ակտիվ միջկառավարական, միջխորհրդարանական փոխառնչությունները էական ազդեցություն ունեցան երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման գործում: 1999 թ. Արևելյան Եվրոպայի երկրների մեջ Բուլղարիայից դեպի Հայաստան ներմուծումը կազմել է 12 081 800 դոլար, որն առավել էր բոլոր մնացած արևելաեվրոպական երկրներից: Հայաստանից Արևելյան Եվրոպա արտահանվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմել էր 1 318 500 դոլար, որից Բուլղարիայի մասնաբաժինն է 881 800 դոլարը[294]: Այս ցուցանիշները հաշվի առնելով կարող ենք ասել, որ Արևելաեվրոպական երկրների շարքում Բուլղարիան համարվում էր Հայաստանի ամենաարդյունավետ գործընկերներից մեկը: 1999 թ. դրությամբ Բուլղարիան 21-րդ տեղն էր զբաղեցնում աշխարհում դեպի Հայաստան ուղղվող ապրանքների գնային հարաբերակցության մեջ[295]: Իսկ ահա 2002 թ. այդ ցուցանիշով Բուլղարիան 6-րդն էր[296]:

1999 թ. փետրվարի 8-10-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի և Բուլղարիայի միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին 1994 թ. ապրիլի 25-ին ստորագրված պայմանագրի շրջանականերում էներգետիկայի բնագավառում գործող աշխատանքային խմբի առաջին հանդիպումը[297]: Հանդիպման ընթացքում ստորագրված արձանագրության մեջ ուրվագծվում էր հնարավոր համագործակցությունը հիդրոէներգետիկայի, ատոմային էներգիայի և էլեկտրաէներգետիկայի բնագավառներում, ինչպես նաև նշվում էր այդ ուղղությունների զարգացման հետ կապված մեխանիզմների իրականացման և կազմակերպչական հարցեր: 1999 թ. ապրիլին տեղի էր ունեցել ԲՀ և ՀՀ միջև համատեղ

---

Ղրղզստանը, Ռումինիան, Մոլդովան, Տաջիկստանը, Թուրքիան, Ուզբեկստանը, Ուկրաինան: Մանրամասն տե՛ս http://www.traceca-org.org/en/home/ , (17.02.2019):

[293] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստան կժամանի Բուլղարիայի խորհրդարանական պատվիրակությունը», թիվ 40 (2254), 3 մարտ 1999 թ., էջ 1:

[294] Տե՛ս նույն տեղում, էջ 492:

[295] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999,2000), Եր., 2001, էջ 473:

[296] Մանրամասն տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, նշվ. աշխ., էջ 497:

[297] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական հարաբերությունները», թիվ 234 (2448), 1 դեկտեմբերի 1999, էջ 2:

առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստ[298]:

1999 թ. մարտին ՀՀ-ում գտնվող Բուլղարիայի ԺԺ նախագահ Յ. Սոկոլովը հանդիպեց ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանին: Վերջինս կարևորեց տնտեսական համագործակցությունը և այդ համատեքստում տրանսպորտային ուղիների զարգացումը երկրների միջև: Մասնավորապես Վառնա և Բուրգաս նավահանգիստների հնարավորությունների լիարժեք օգտագործումը, որը կարող էր դիտարկվել ինչպես «Տրասեկա» և «Ինոգեյթ»[299] ծրագրերի շրջանակներում, այնպես էլ երկկողմ հարաբերությունների համատեքստում: Երկու երկրների միջև տրանսպորտային կամրջի հաստատումը կամրապնդեր գործարար շրջանակների համագործակցությունը: Առևտրատնտեսական հարաբերությունների ակտիվացման նպատակով առաջարկվեց ստեղծել միջկառավարական հանձնաժողով՝ երկու երկրների տրանսպորտի նախարարների գլխավորությամբ[300]:

Մարտի 5-ին Բուլղարիայի խորհրդարանի ներկայացուցիչները եղան ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի հանձնաժողովում: Հանձնաժողովի անդամների հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ տնտեսական համագործակցության առնչվող խնդիրներ: Եվրոպական կառույցների ինտեգրացման համար Եվրամիության կողմից Բուլղարիայի առջև դրված՝ երկիր մուտք գործելու ռեժիմը խստացնելու նախապայմանի առնչությամբ հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը հույս հայտնեց, որ Հայաստանը կլինի այն

---

[298] Տե՛ս նույն տեղում:

[299] «Ինոգեյթ» ծրագիրը հանդիսանում է էներգետիկ ոլորտում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության շրջանակներում առավել երկարաժամկետ ծրագրերից մեկը: Ծրագիրը ստեղծվել է 1996 թվականին, Արևելյան գործընկերության նախաձեռնությամբ: Այն համագործակցում է 11 գործընկեր երկրների հետ՝ նպատակ ունենալով նվազեցնել վերջիններիս կախվածությունը օրգանական հանածո վառելիքի և էներգակիրների ներմուծումից, բարձրացնել ու էներգամատակարարման անվտանգության, և մեղմելու համընդհանուր կլիմայի փոփոխությունը: INOGATE անդամ-երկրները գտնվում են աշխարհագրական 3 տարածաշրջաններում, որոնցից յուրաքանչյուրում գործում է INOGATE քարտուղարություն: Մանրամասն տե՛ս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայք՝ http://www.minenergy.am/page/514 , (17.02.2019):

[300] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը որդեգրել է տարածաշրջանային քաղաքականություն», թիվ 43 (2257), 6 մարտ1999 թ., էջ 1:

երկրներից, որոնք կունենան արտոնագրային ռեժիմ: Դա կխթանի երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը: Կողմերը արձանագրեցին, որ թե՛ Հայաստանը, թե՛ Բուլղարիան միմյանց շուկաներ մուտք գործելու համար դեռևս անելիքներ ունեն: Այս իմաստով կարևորվեց երկու պետությունների միջև առևտրատնտեսական և գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողովի՝ ապրիլին Սոֆիայում կայանալիք անդրանիկ նիստը[301]:

Երևանի Մարզահամերգային համալիրում 1999 թ. մայիսի 25-ին բացված բուլղարական արտադրանքի «Էքսպո Բուլղարիա-99»-ում իրենց արտադրանքը ներկայացրեցին Բուլղարիայի տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող շուրջ 30 արտադրական ձեռնարկություններ: Ցուցահանդեսին մասնակցում էին նաև Հայաստանյան շուկայում իրենց կայուն տեղը գրաված բուլղարական այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են կոսմետիկա արտադրող «Բլգարսկա Ռոզա»-ն, փաթեթավորման տեխնոլոգիաներում մասնագիտացող Պրոբլենդը, կահույքի «Դիզայներսկա պլաստիկա», «Տելետեկ» անվտանգության ապահովման սարքավորումների արտադրության ընկերությունը և այլն: Ըստ Առևտրա-արդյունաբերական պալատի նախագահ Սամվել Ծարբաթյանի, այս ցուցահանդեսի շրջանակներում հայ և բուլղարացի գործարարների միջև գործնական կապերի ստեղծման նպատակով նախատեսվում էր նաև համագործակցության պայմանագրերի ստորագրում[302]:

Բուլղար գործարարների հավաստմամբ, «Էքսպո Բուլղարիա-99»-ի նպատակը ոչ միայն հայաստանյան շուկայի նվաճումն էր, այլև համատեղ արտադրությունների հիմնումը: Ըստ որում նախատեսվում էր Հայաստանում անվտանգության ապահովման սարքերի հավաքման համատեղ արտադրամասի ստեղծման պայմանագրի ստորագրում Մերգելյան ինստիտուտի կամ «Մարս» ձեռնարկության հետ: Կարևորելով հայ-բուլղարական հարաբերությունների հետագա

[301] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի ժողովրդական ժողովի պատվիրակության հանդիպումները Ազգային ժողովում», թիվ 43 (2257), 6 մարտ1999 թ., էջ 2:

[302] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բացվեց «Էքսպո Բուլղարիա-99 երևանյան ցուցահանդեսը», թիվ 100 (2314), 26 մայիս 1999 թ., էջ 3:

զարգացման անհրաժեշտությունը, հայտնի լրագրող Ցվետանա Պասկալևան հայտնեց, որ բուլղարական արդյունաբերության ներկայացումը Հայաստանում իր համար անակնկալ էր: «Ես վաղուց արդեն ապրում եմ Հայաստանում և Հայաստանյան տնտեսությանը ավելի քաջատեղյակ եմ: Սակայն շատ ուրախ եմ, որ կարողացա տեսնել երկու բարեկամ երկրների մերձեցման ևս մեկ ապացույց և ավելի ուրախ կլինեմ, եթե Բուլղարիա հաջորդ այցիս ժամանակ մասնակցեմ Բուլղարիայում հայկական արտադրանքի ցուցահանդեսի բացմանը»,- հայտնեց նա[303]:

1999 թ. դեկտեմբերի սկզբին ՀՀ և ԲՀ նախագահների հանդիպման ժամանակ քննարկվեցին տնտեսական կարևորագույն խնդիրներ: Առանձնապես ընդգծեցին երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման և կատարելագործման կարևորությունը արդյունաբերության, առևտրի, էներգետիկայի, հեռահաղորդակցության, գյուղատնտեսության, շինարարության, շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտներում: Կողմերը պայմանավորվում էին հետագա միջոցառումներ ձեռնարկել առևտրատնտեսական համագործակցության համար բարենպաստ պայմաններ ապահովելու և՛ առևտրատնտեսական, և՛ գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի մեխանիզմներն արդյունավետ օգտագործման նպատակով[304]:

Կողմերը հատկապես կարևորում էին տրանսպորտի ոլորտում երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդումը: Նախատեսվում էր, որ նրանք սերտորեն կհամագործակցեն տրանսեվրոպական ցանցերի ենթատեքստում «Տրասեկա» և «Ինոգեյթ» ծրագրերի հաջող իրականացման նպատակով՝ Եվրոմիության աջակցությամբ, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների և մասնավոր կապիտալի ներգրավմամբ: Կողմերն ընդգծում էին, որ «Տրասեկա» ծրագրի շրջանակներում թիվ 8-րդ միջանցքի շահագործումը հնարավորություն կտա երկու

---

303 Տե՛ս նույն տեղում:
304 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 2:

պետությունների դառնալ միջմայրցամաքային տրանսպորտային հաղորդակցությունների միջանցքների կարևոր մասերը[305]:

Կողմերը փոխադարձաբար ցանկություն էին արտահայտում առավել լիարժեքորեն օգտագործել ապրանքների փոխադրման համար Վառնա-Իլիչևսկ-Փոթի լաստանավային կապը և Բուրգաս-Փոթի Ռո-Ռո գիծը, ինչպես նաև Վառնայի և Բուրգասի նավահանգիստների պահեստները՝ հայկական բեռների պահպանման և մշակման համար[306]:

Կողմերը գոհունակությամբ արձանագրում են Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում երկկողմ սակագնային բանակցությունների հաջող անցկացումը: Բուլղարական կողմն արտահայտում է իր լիակատար աջակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի արագ անդամակցությանը[307]:

Ստեղծված միջկառավարական հանձնաժողովը մի շարք աշխատանքներ կատարեց, որոնց շարքում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԲՀ հողագործության, անտառների և ագրարային բարեփոխումների նախարարության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի մշակումը: Միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներից էր նաև հողագործության, ծխախոտագործության, եթերայուղային և դեղաբույսերի մշակման բնագավառներում համագործակցությունը, որի նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի համապատասխան գիտական կենտրոններին առաջարկվել էր բուլղարական կողմի հետ փոխշահավետ համագործակցություն իրականացնել[308]: Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովը նախատեսում էր նաև Հայաստանի ոռոգման համակարգերի, հիդրոմելիորատիվ, հիդրոշինարարական և հիդրոտեխնիկական աշխատանքների բնագավառում անցկացվող տենդերներին մասնակցելու

---

305 Տե՛ս նույն տեղում:

306 Տե՛ս նույն տեղում:

307 Տե՛ս նույն տեղում:

308 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 1, գ. 20, թ. 8:

հնարավորություն տալ նաև բուլղարական կողմին և սահմանված կարգով վերջինիս տրվեն համապատասխան հայտարարությունները[309]:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսության բնագավառում մի շարք ուղղություններով ևս նախատեսվում էր իրականացնել համագործակցություն, սակայն դրանք չեն իրականացվել, քանզի մասնավոր հատվածի տնտեսվարող սուբյեկտների կողմից բացակայում էր հետաքրքրությունը: Այդպիսի ոլորտներ կարող էին լինել անասնաբուծական ֆերմաները, ջերմոցները և այլ գյուղատնտեսական օբյեկտների նախագծումը, կառուցումը և գործարկումը[310]:

Միջկառավարական հանձնաժողովը քննարկեց նաև Երևանում և Սոֆիայում բուլղարական և հայկական պարենամթերքների մասնագիտացված խանութների ստեղծման հարցերը[311]:

1999 թվականից Հայաստանից Բուլղարիա էր արտահանվում պղինձ, ալյումին, սուրճ, թեյ, ոգելից խմիչքներ: Ներկրվում էին կենդանական ծագման սննդամթերք, պտուղ-բանջարեղենային վերամշակման մթերք, ծխախոտ, վառելանյութ, դեղեր, թուղթ, ալյումին և նրանից իրեր, կահույք, անկողնային պարագաներ, տարբեր սարքավորումներ[312]: Այս միտումը պահպանվեց նաև հաջորդ տարիներին և առանձին փոփոխություններ չկրեց: Սախոսում էր այն մասին, որ հայ-բուլղարական փոխադարձ ապրանքաշրջանառությունը ընդգրկում էր տարբեր ճյուղեր և ոլորտներ, իսկ «Էքսպո Բուլղարիա-99»-ի անցկացումը ևս մեկ խթան հանդիսացավ երկկողմ տնտեսական շրջանառության մեծացման համար:

---

[309] Նույն տեղում:
[310] Նույն տեղում, թ. 9:
[311] Նույն տեղում:
[312] Մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1999 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2000, էջ 77-79: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2001, էջ 82-83: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2002 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2003, էջ 76-77: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2004, էջ 77-79: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2004 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2005, էջ 91-93: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2005 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2006, էջ 92-94: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2007 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, էջ 90-92: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2007 թվականին, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, էջ 96-97:

1999 թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ և ԲՀ տրանսպորտի նախարարներն ստորագրեցին միջազգային համակցված փոխադրումների համաձայնագիրը: Այն շարունակությունն էր 1998 թ. ստորագրված Հայաստան-Վրաստան-Բուլղարիա եռակողմ համաձայնագրի: Համակցված փոխադրումն իր մեջ ներառում էր երեք ձևերը՝ ծովային, ավտոտրանսպորտ և երկաթուղային: Նույն թվականին Վրաստանը շահագործման էր հանձնել նաև Փոթիի և Բաթումի երկաթուղային-լաստանավային համալիրները: Նոր կնքված համաձայնագիրը ավելի մեծ հնարավորություն էր ստեղծում ինչպես երկու երկրների առնչությունների, այնպես էլ Հայաստանի և Եվրոպայի կապի համար: Ըստ համաձայնագրի երկու երկրներն պարտավորվում էին իրենց տարածքներում ապահովել փոխադրումների անվտանգությունը[313]:

Նախատեսվում էր շարունակել համագործակցությունը երկու երկրների միջև ստորագրված «Բույսերի պաշտպանության կարանտինի» և «Անասնաբուժասանիտարական բնագավառում» կոնվենցիայով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու միջոցառումների ակտիվացման ուղղությամբ[314]:

Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև բանակցություններ վարել բուլղարական կողմի հետ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԲՀ գյուղատնտեսության նախարարության միջև գյուղատնտեսական բնագավառում համագործակցության մասին» միջգերատեսչական համաձայնագրի նախագծի վերջնական համաձայնեցման ստորագրման ուղղությամբ[315]:

Երկու երկրները ձգտում էին փորձագետների մակարդակով ուսումնասիրել երկրագործության բնագավառում հետագա համագործակցության հնարավորությունները, առանձնակի ուշադրություն դարձնելով ծխախոտագործությանը, տեխնիկական մշակաբույսերի արտադրությանը, ուսումնասիրել նաև

[313] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ստորագրվեց համակցված փոխադրումների համաձայնագիրը», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 2:
[314] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 45:
[315] Նույն տեղում:

բանջարաբոստանային մշակաբույսերի Բուլղարիայից Հայաստան ներկրելու հնարավորությունները[316]:

Համագործակցություն ծավալել ոռոգման համակարգերի բնագավառներում՝ ներգրավելով ջրաշինական և հիդրոտեխնիկական աշխատանքներում երկու երկրների մասնագետներին[317]:

Ուսումնասիրել գյուղատնտեսական մթերքների պահպանման, իրացման, պարենային մթերքների փաթեթավորման բուլղարական փորձը: Նկատի ունենալով ՀՀ պարենային ոլորտի առանձնահատկությունները՝ ուսումնասիրել վերամշակող փոքրածավալ ցածր արտադրողականության տեխնոլոգիաների ներդրման և համատեղ փոքր ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունները[318]:

Գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունը շարունակվեց նաև հաջորդ տարիներին և դրա վկայությունն էր 2001 թ. ապրիլի 11-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Բուլղարիայի Հանրապետության հողագործության և անտառների նախարարության միջև ստորագրված տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության համաձայնագիրը: Տրանսպորտի և կապի նախարար Երվանդ Զախարյանի խոսքերով՝ «համագործակցությունը կնպաստի ձեռնարկությունների, կազմակերպությունների և տնտեսական գործակալների միջև տնտեսական և գիտատեխնիկական կապերի հաստատմանը»: Համագործակցությունը կզարգանա մասնավորապես բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և ավտոմատացման, գյուղի և գյուղական վայրերի զարգացման, ձկնաբուծության, ինչպես նաև՝ խորհրդատվական ծառայությունների և գիտական հետազոտությունների ոլորտում[319]:

Հայ-բուլղարական փոխադարձ առևտրաշրջանառության մեջ 2000-ական թթ. շարունակվեցին նախորդ տարիներին ամրագրված աճի տեմպերը: Թեև 2000 թ. Բուլղարիայի ընդհանուր տեսակարար կշիռը

---

[316] Նույն տեղում:
[317] Նույն տեղում:
[318] Նույն տեղում:
[319] Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, «Եվս մի համաձայնագիր», https://www.aravot.am/2001/04/12/791039/, (14.01.2019):

Հայաստանի տնտեսության մեջ չէր գերազանցում 1 տոկոսը, սակայն և արտահանման և ներմուծման տվյալներով Բուլղարիան շարունակում էր առաջատար մնալ Արևելաեվրոպական երկրների շարքում: Հայաստանի արտաքին առևտրում Բուլղարիան նույն թվականին գերազանցում էր նույնիսկ ԱՊՀ որոշ երկրների, որոնցից էին Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը և այլն, իսկ ներմուծման ցուցանիշներով գերազանցում էր Թուրքմենստանին, Բելոռուսին, Ղազախստանին: 2000 թ. դրությամբ Բուլղարիան ապրանք ներմուծող երկրների մեջ զբաղեցնում էր 17-րդ տեղը[320]:

2000 թ. մայիսի 26-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ընդունեց Հայաստանում Բուլղարիայի ժամանակավոր հավատարմատար Իվան Իվանչևին: Կողմերը կարևորեցին առևտրատնտեսական համագործակցության համար բարենպաստ պայմանների ապահովման, ինչպես նաև մասնավոր բիզնեսի զարգացման համար նոր հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը[321]: Այսպիսով ակնհայտ էր, որ երկու երկրների առանցքում աստիճանաբար կարևոր էին դառնում տնտեսական հարաբերությունները: Սակայն հաջորդ տարի անկում գրանցվեց երկկողմ առևտրաշրջանառության տեմպերի մեջ, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր երկկողմ իրավական կարգավորումների հետ: Մասնավորապես, 2000 թ. հուլիսի 11-ին Սահմանադրական դատարանը քննության դրեց «ՀՀ և ԲՀ միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության» համաձայնագրի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը: ՀՀ նախագահի լիազոր-ներկայացուցիչն էր պետական եկամուտների նախարար Գ. Պողոսյանը: ՍԴ-ից աշխատակարգային որոշումով զեկուցող էր ճանաչվել ՍԴ անդամ Հ. Սահակյանը: Համաձայնագիրը 1999 թ. դեկտեմբերի 1-ին ստորագրել էր նախկին ՊԵՆ-ը՝ Սմբատ Այվազյանը: Համաձայնագրով կողմերի մաքսային ծառայությունները պայմանավորվում էին ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ մաքսային արարողակարգերի պարզեցման, միմյանց մաքսային ապահովումների ու փաստաթղթերի փոխադարձ ճանաչման

[320] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, նշվ. աշխ., էջ 497:
[321] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «ՀՀ նախագահն ընդունեց Բուլղարիայի ժամանակավոր հավատարմատարին», թիվ 97 (2567), 27 մայիսի 2000, էջ 1:

ուղղությամբ»: Փոխադարձաբար կողմերը պետք էր պայքարեին թմրանյութերի, հոգեներգործող և վերահսկվող քիմիական նյութերի ապօրինի շրջանառության դեմ՝ մաքսային իրավախախտումները բացառելու նպատակով[322]:

2001 թ.[323] նախորդ տարվա համեմատ կրկնակի կրճատվեց Հայաստանից Բուլղարիա արտահանումը: Թեև այն շարունակում էր բարձր մնալ արևելաեվրոպական երկրների շարքում, սակայն այս ցուցանիշով Հունգարիան 2001 թ. առաջ անցավ Բուլղարիայից: Ներմուծումը ևս կրճատվել էր, սակայն ոչ այն ծավալով, ինչ արտահանումն էր: Սրանով պայմանավորված առևտրաշրջանառության մեջ բացասական միտումը պահպանվեց: Այս նվազումը տեղի ունեցավ նույնիսկ այն պայմաններում, երբ 2001 թ. Հայաստանից արտահանման ծավալները աճեցին 41,348,700 դոլարով[324]:

2001 թ. մարտի 6-7-ը Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցավ երկաթուղայինների խորհրդի 28-րդ նստաշրջանը, որին մասնակցեցին ԱՊՀ 12 երկրների, Մերձբալթյան երկրների, Բուլղարիայի երկաթուղիների ղեկավարները, նաև միջազգային շատ կազմակերպություններ: Նստաշրջանի բացմանը ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը[325]:

Քննարկվող հիմնական խնդիրներն էին փոխադարձ տարածքներով բեռնափոխադրումները, երկաթուղիների տարիֆային քաղաքականությունը, միջպետական փոխհամագործակցությունները, ուղևորափոխադրումների բարձրակարգ կազմակերպումը, նոր համակարգչային տեխնոլոգիաների ներդրումը երկաթուղային համակարգում և այլն:

2002 թ. երկու երկրների առևտրաշրջանառությունը կրկին վերականգնվեց և առաջ անցնելով գերազանցեց նախորդ բոլոր տարիների ցուցանիշները: Սա պայմանավորված էր ինչպես Բուլղարիայի, այնպես էլ Հայաստանի արտահանման և ներմուծման

---

322 Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, «Ատոմակայանի «սցենարի», միջազգային պայմանագրերի մասին», https://www.aravot.am/2000/07/12/788648/ , (14.01.2019):

323 Մինչև 2001 թ. ններառյալ ներմուծումը հաշվարկվել է ըստ առևտուր անող երկրի հատկանիշի, իսկ 2002 թ. սկսած ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի:

324 2000 թ. Հայաստանից արտահանվել է 300 487 400 դոլարի ապրանք, իսկ 2001 թ. 341 836 100 դոլարի ապրանք: Մանրամասն տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, նշվ. աշխ., էջ 491:

325 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «ԱՊՀ երկրների երկաթուղայինների խորհրդի 28-րդ նստաշրջանը Հայաստանում», թիվ 37 (2241), 28 փետրվարի 2001 թ., էջ 2:

ցուցանիշների աճով: Հայաստան ապրանքների ներմուծման ցուցանիշով Բուլղարիան զիջում էր միայն Ռուսաստանին, Բելգիային, Իսրայելին, Իրանին, ԱՄՆ-ին:

2002 մայիսի 16-ից ուժի մեջ մտավ «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի մասին» համաձայնագիրը, ինչի առթիվ Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ համաձայնագրի անդամ պետությունների տրանսպորտի նախարարների պաշտոնական հանդիպում, որին, ի թիվս համաձայնագրին միանալու ցանկություն հայտնած այլ երկրների, հատուկ հրավերով մասնակցում էր նաև Հայաստանի պատվիրակությունը՝ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի գլխավորությամբ[326]:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս 2001թ. մայիսին էր պաշտոնապես հայտարարել համաձայնագրին անդամակցելու իր մտադրության մասին, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունը 2001 թ. օգոստոսի 27-ին, որպես համաձայնագրի դեպոզիտար երկիր, տվել էր իր համաձայնությունը: Սույն խնդրի կարևորությունը նախարար Ա. Մանուկյանը հիմնավորել է նաև իր ելույթում՝ մայիսի 21-ին կայացած հանդիպման ժամանակ: Այս համաձայնագրին միանալու ցանկություն էր հայտնել նաև Բուլղարիան[327]:

Այս համաձայնագրի նպատակն էր ստեղծել տրանսպորտային միջանցք Սանկտ Պետերբուրգից մինչև Բոմբեյ՝ բարձրացնելու միջազգային և տարանցիկ ուղևորաբեռնափոխադրումների կազմակերպման արդյունավետությունը: Աստիճանաբար ակնհայտ էր դառնում այն պարզ իրողությունը, որ գտնվելով հյուսիս-հարավ միջանցքի խաչմերուկում և տարածաշրջանում զբաղեցնելով կարևոր աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական դիրք, վերջինիս տարածքը և տրանսպորտային ենթակառուցվածքները կարող էին լավագույնս ինտեգրվել հյուսիս-հարավ միջանցքի տրանսպորտային ենթակառուցվածքներին[328]:

---

326 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հյուսիս-Հարավ միջազգային միջանցք նաև Հայաստանով», թիվ 94 (2539), 23 մայիսի 2002 թ., էջ 1:
327 Տե՛ս նույն տեղում:
328 Տե՛ս նույն տեղում:

Այդ փոխադրամիջանցքի հիմնադիր երեք երկրներից՝ Ռուսաստանից, Իրանից և Հնդկաստանից բացի, դրա իրականացմանը մասնակցելու ցանկության մասին հայտարարել էին ևս հինգ երկրներ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բելոռուսիան, Ղազախստանը և Բուլղարիան[329]:

2003 թ. ՀՀ և ԲՀ նախագահների քննարկման կարևորագույն խնդիրներից էր երկու երկրների միջև ենթակառուցվածքների զարգացման խնդիրներին: Այդ օրերին գործում էին Բուրգաս-Փոթի, Վառնա-Իլիչյովսկ-Փոթի առևտրական ուղիները, սակայն, հարկավոր էր իրավաբանորեն ամրագրել բոլոր պայմանները, որպեսզի ապրանքաշրջանառությունը լինի առավել արագ և արդյունավետ: Բուլղարիան կարող էր լինել պատուհան, որը բացելու համար, սակայն, անհրաժեշտ էր կարգի բերել բոլոր մեխանիզմները Վրաստանում, քանզի այն տարանցիկ երկիր էր: Այս առումով Բուլղարիայի, Վրաստանի և Հայաստանի միջև համաձայնեցված էր եռակողմ մի փաստաթուղթ, որը նախատեսվում էր ստորագրել 2003 թ. հոկտեմբերին «Տրասեկայի» շրջանակներում Երևանում կայանալիք կոնֆերանսի ժամանակ:

Անդրադառնալով տնտեսական հարաբերություններին Ս. Դիմիտրովը նշում էր, որ թեև այն կողմերին չէր գոհացնում, դա ամենևին չէր նշանակում, որ իրավիճակը վատ էր, պարզապես այս բնագավառի նկատմամբ ներկայացվող պահանջները շատ խիստ էին: Ըստ նրա, առևտրական կապերի չգոհացնող մակարդակի համար կային ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ[330]:

Տնտեսական խնդիրներից մեկն այն էր, որ վերջին տարիների ընթացքում առևտրաշրջանառության ծավալներում աճ չի գրանցվում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, այն տարեկան միջին հաշվով կազմում էր շուրջ 40 մլն դոլար: «2001 թ. արձանագրվել էր ապրանքաշրջանառության ծավալների 15 տոկոս անկում, 2002-ին նույն չափով աճ: Այսպիսի փոփոխություններ ժամանակ առ ժամանակ լինում էին, բայց ինչ

[329] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

[330] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, թիվ 158 (2843), 4 սեպտեմբեր 2003 թ., էջ 8: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունները գերազանց են», թիվ 164 (3297), 4 սեպտեմբերի 2003, էջ 5:

վերաբերում էր զարգացմանը, ապա այն բացակայում էր: Սա խնդիր էր, որի ուղղությամբ հարկավոր էր նպատակային քայլեր ձեռնարկել»-նշել էր Ս. Դիմիտրովը: Ի դեպ, 2003 թ. առաջին կիսամյակում երկկողմ ապրանքաշրջանառությունը կազմել էր մոտ 19,5 մլն. դոլար[331]:

Տնտեսական հարաբերությունների մյուս խնդիրը շարունակում էր մնալ առևտրաշրջանառության ծավալների անհավասարությունը. 19,5 մլն դոլարից, միայն 1,3-ն էր բաժին հասնում Հայաստանից արտահանմանը, մնացած 18,2 մլն դոլարը կազմում էր ապրանքների ներմուծումը Բուլղարիայից: «Առևտրի այս բացասական հաշվեկշիռը չպետք էր երկար պահպանվի, քանի որ այդ պարագայում կարող է երկու երկրների միջև առևտրի լուրջ խոչընդոտ դառնալ»-նշեց Ս. Դիմիտրովը[332]: Ըստ նրա, տնտեսական հարաբերությունների զարգացման հարցում կային երկու հիմնական գործոններ՝ կառավարություն և գործարար շրջանակներ: 2000 թվականին ստեղծվել էր առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովը, որն արդեն անցկացրել էր երկու նիստ: Երկու երկրների կառավարությունները համաձայնագրեր էին ստորագրել ներդրումների խթանման և պաշտպանության, նաև կրկնակի հարկումից խուսափելու մասին: Ս.Դիմիտրովի խոսքերով, իշխանությունների մակարդակով գրեթե ամեն ինչ արված էր, և «կարելի էր ասել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում կառավարությունները դրանից ավելի չէին էլ կարող անել»: «Սակայն, հանձնաժողովը ստեղծելուց հետո էլ առևտրաշրջանառությունը չի ընդլայնվում, ինչը նշանակում էր, որ ավելի մեծ շեշտադրում էր պետք կատարել երկրորդ գործոնի՝ գործարար մարդկանց վրա: Կարծես և՛ բուլղար, և՛ հայ գործարարները զուգահեռաբար գնում էին Եվրոպա, ԱՄՆ, Ռուսաստան, բայց միմյանց չեն դիմում: Կառավարությունների խնդիրը պետք էր լիներ միայն կողմնորոշել գործարարների հետաքրքրությունը, նրանց ծանոթացնել երկու երկրների շուկայական ներուժին և հնարավորություն տալ՝ ձեռք բերելու գործընկերներ»,- նշեց

[331] Տե՛ս նույն տեղում:
[332] Տե՛ս նույն տեղում:

նա[333]: Ս. Դիմիտրովի համոզմամբ, հարկավոր էր առևտրի պալատի օգնությամբ կազմակերպել գործարար շրջանակների համաժողովներ, մասնավորապես հայկական արտադրանքի վերաբերյալ տեղեկատվություն ապահովելու համար, նաև՝ հուսալի դարձնել բանկային համակարգը, որպեսզի գործարարները վստահաբար գործարքներ կնքեին և համոզված լինեին, որ բանկերը կգործեն անխափան[334]:

2003 թ. տնտեսական ակտիվությունը երկու երկրների միջև գրեթե չփոխվեց: Արտահանումը թեև ևս որոշակի նվազում արձանագրեց, սակայն դա էականորեն չազդեց Հայաստանից Բուլղարիա ուղարկվող ապրանքների ծավալների վրա: 2002 թ. համեմատությամբ ավելացել էին և Հայաստանի արտահանումը և ներմուծումը[335], որը, փաստորեն, ոչ մի կերպ չի անդրադարձել երկու երկրների առևտրաշրջանառության աճի վրա: 1988-2003 թթ. ընկած ժամանակահատվածում Բուլղարիայից Հայաստանի տնտեսության մեջ կատարվել է 252,6 մլն ԱՄՆ դոլարի ուղղակի ներդրում[336]: ՀՀ-ում 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված էին բուլղարական կապիտալի մասնակցությամբ 30 ձեռնարկություններ[337]:

2003 թ. մարտի 24-ին ՀՀ ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանն ընդունեց Հայաստանում Բուլղարիայի գործերի հավատարմատար Իվան Իանչևին[338]՝ իր առաքելության ավարտի կապակցությամբ: Խոսելով տնտեսական հարաբերությունների մասին նշվեց, որ տնտեսական հարաբերությունների ոլորտում հայ-բուլղարական առնչությունների խորացման մասին էր վկայում առևտրատնտեսական շրջանառության աճը 12 մլն ԱՄՆ դոլարից մինչև

---

[333] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, թիվ 158 (2843), 4 սեպտեմբեր 2003 թ., էջ 8:

[334] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունները գերազանց են», թիվ 164 (3297), 4 սեպտեմբերի 2003, էջ 5:

[335] 2003 թ. Հայաստանից արտահանումը ավելացել է 180 439.5 հազար դոլարով, իսկ ներմուծումը 292 330.2 հազար դոլարով: Այդպիսով ՀՀ-ից արտահանվել է 505 159 700 դոլարի ապրանք և ներմուծվել 987 155 500 դոլարի ապրանք: Մանրամասն տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, Երևան, 2004, էջ 489: Հայաստանը թվերով, 2003 թ., Վիճակագրական գրքույկ, Երևան, 2003, էջ 75:

[336] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիայի Հանրապետություն», թիվ 166 (3299), 6 սեպտեմբերի 2003, էջ 1,4:

[337] Տե՛ս նույն տեղում:

[338] ՀՀ-ում դեսպան է եղել 1999-2003 թթ.:

25 միլիոն: Այնուհանդերձ, երկու երկրների տնտեսական ներուժը շատ ավելին էր[339]:

**Աղյուսակ 4: Հայաստանի և Բուլղարիայի միջև ընդհանուր առևտրաշրջանառությունը 1997 թ. սկսած ըստ տարիների ունի հետևյալ տեսքը.**[340]

| | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 |
|---|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 1124800 | 1122500 | 1034800 | 1182600 | 1217100 | 1498200 |
| Բուլղարիա | 25900 | 17200 | 13000 | 7900 | 6750 | 51100 |

ՀՀ-ում կատարված օտարերկրյա ընդամենը ներդրումների հոսքերի ու պաշարների առումով[341] Բուլղարիան ևս որոշակի ակտիվություն էր ցուցաբերում, սակայն դա մինչև 2002 թ. էր, դրանից հետո մինչև 2008 թ. որևիցե այդպիսի գործարք Հայաստանի և Բուլղարիայի միջև տեղի չի ունեցել: 1988-2002 թթ. ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների Բուլղարիայից Հայաստան ներդրումների հոսքերն ու պաշարները կազմել են 2 718 100 դոլար[342]: Իսկ Բուլղարիայից ՀՀ կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերն ու պաշարները կազմել են 252 600 դոլար[343], ընդ որում դակրկին բաժին էր ընկնում 1988-2002 թթ.:

2002 թ. մայիսին Բուլղարիայի կառավարությունը ժամանակավորապես ազատեց Հայաստանի քաղաքացիներին զբոսաշրջության համար վիզայի վճարումներից: Ամառվա ընթացքում (2002 թվականի մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 30-ը) հայ զբոսաշրջիկները ազատվել էին բուլղարական վիզայի համար վճարումից: Տվյալ որոշումն ընդունվել էր արտասահմանյան զբոսաշրջիկներին Բուլղարիա ներգրավելու միտումով: Բուլղարիայի կառավարությունը հույս ուներ, որ դա կբարձրացնի զբոսաշրջության բիզնեսից եկող միջոցների հոսքը: Տվյալ արտոնությունը տարածվում էր այն զբոսաշրջիկների վրա, որոնք

---

339 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հանդիպում խորհրդարանում», թիվ 57 (3191), 25 մարտի 2003, էջ 1,3:

340 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիայի Հանրապետություն», թիվ 166 (3299), 6 սեպտեմբերի 2003, էջ 1,4:

341 Օտարերկրյա ընդամենը ներդրումների հոսքերի ու պաշարների մեջ չեն հաշվվում առևտրային վարկերը, կանխիկ դրամական միջոցներն ու ավանդները:

342 Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, Երևան, 2008, էջ 484-485:

343 Տե՛ս նույն տեղում, էջ 490-491:

օգտվում էին տուրիստական կազմակերպություններից[344]: Մինչև 16 տարեկան և 60-ն անց մարդիկ ընդհանրապես ազատված էին տուրքերի գանձումից[345]:

2003 թ. հոկտեմբերի 9-10-ը Երևանում անցկացված «Տրասեկա» միջկառավարական հանձնաժողովի ամենամյա երրորդ համաժողովի ավարտից հետո Հայաստանի, Վրաստանի ու Բուլղարիայի տրանսպորտի նախարարների կողմից ստորագրվեց դեռևս 1998 թվականին հայկական կողմի առաջարկած Մուլտիմոդալ բեռնափոխադրումների բազմակողմ համաձայնագիր[346]:

Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի, համաձայնագիրը երեք երկրների համար ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեր բեռնափոխադրումների ոլորտում, իսկ Հայաստանը կարող էր դառնալ տարանցիկ երկիր Իրանի և Աֆղանստանի համար: Նախարարի կարծիքով, կհեշտացվեր նաև Վրաստանով բեռնափոխադրումների իրականացումը: Համաձայնագիրը «բաց» էր, և ցանկացած երկիր կարող էր միանալ դրան[347]:

Ա. Մանուկյանը տեղեկացրեց, որ համաժողովը հաստատել էր «Տրասեկա» ծրագրի առաջիկա տարիների ռազմավարությունը, տասնյակից ավելի փաստաթղթեր և դեկլարացիա[348]:

Վերջինս հայտնեց նաև, որ ըստ «Տրասեկա»-ի կանոնակարգի, միջկառավարական հանձնաժողովի նախագահությունը ստանձնած երկիրը, տվյալ դեպքում Հայաստանը, պետք է առաջադրեր հանձնաժողովի գլխավոր քարտուղարի թեկնածությունը: Սակայն, ադրբեջանական պատվիրակությունը դեմ էր արտահայտվել Հայաստանի առաջադրած՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության արտաքին հարաբերությունների վարչության պետի թեկնածությանը: «Տրասեկա» միջկառավարական հանձնաժողովի

344 Տե՛ս «Բուլղարիայի կառավարությունը ժամանակավորապես ազատել է հայ զբոսաշրջիկներին վիզայի համար վճարումից», http://www.panarmenian.net/arm/world/news/3334/ , (15.01.2019):

345 Տե՛ս «Հայաստանի քաղաքացիները ժամանակավորապես ազատվում են Բուլղարիա մուտքի տուրքերից», http://www.panarmenian.net/arm/world/news/2982/ (15.01.2019):

346 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայաստան-Վրաստան-Բուլղարիա բեռնափոխադրումների համաձայնագիր», թիվ 185 (2870), 11 հոկտեմբերի 2003 թ., էջ 1:

347 Տե՛ս նույն տեղում:

348 Տե՛ս նույն տեղում:

գլխավոր քարտուղար ընտրվեց «Տրասեկա»-ում Բուլղարիայի ազգային քարտուղար Լյուդմիլա Տրենիկովան[349]:

2003 թ. տեղի ունեցավ Հայ-բուլղարական առաջին բիզնես ֆորումը, որը բավական ներկայացուցչական էր՝ ավելի քան 30 կազմակերպություններ ու 3 բանկեր բուլղարական կողմից, 4 բանկ և մոտ 10 կազմակերպություն Հայաստանի կողմից[350]:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանի գնահատմամբ՝ Զարգացման հայկական գործակալության կողմից կազմակերպած այդ միջոցառումը նախապայմանագրային հիմքեր ստեղծեց բանկային գործունեության ոլորտում: Բավական հետաքրքիր էին համաձայնությունները գյուղմթերքների վերամշակման և այդ ոլորտի սարքավորումների բնագավառում: Պայմանագրային դաշտ ստեղծելու հիքեր դրվեցին նավթամերքների վերամշակման և ներկրման ոլորտում: Ի դեպ, Հայաստան ներկրվող նավթամթերքի զգալի մասը առնչվում էր Բուլղարիային, և Ա. Ղազարյանի գնահատմամբ՝ այդ շրջանառությունը 25-30մլն դոլար էր[351]:

Հայ-բուլղարական գործարար համագործակցությունը ամրագրվեց Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միության և Բուլղարիայի Տնտեսական պալատի միջև, ինչպես նաև Հայաստանի ու Բուլղարիայի առևտրաարդյունաբերական պալատների միջև կնքված համաձայնագրերով[352]:

2004 թ. Բուլղարիայից ներմուծման ցուցանիշները բավական բարձր էին և կազմում էին 3,9%: Մասնավորապես այդ ցուցանիշով Բուլղարիան զբաղեցնում էր 10-րդ տեղը՝ գերազանցելով մի շարք տնտեսապես զարգացած երկրների, ինչպիսիք էին օրինակ Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Չինաստանը և այլն: Այս ցուցանիշով Բուլղարիան ԱՊՀ երկրների համեմատությամբ հետ էր մնում միայն Ռուսաստանից, Թուրքմենստանից և Ուկրաինայից՝ գերազանցելով մեր հարևան երկիր Վրաստանին, որի տեսակարար կշիռը կազմում էր ներմուծման մեջ 1 %: Սակայն, եթե ներմուծման տեմպերով

[349] Տե՛ս նույն տեղում:
[350] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մեր համագործակցության համար ոչ մի խանգարող հանգամանք չկա», թիվ 167 (3300), 9 սեպտեմբերի 2003, էջ 1,2:
[351] Տե՛ս նույն տեղում:
[352] Տե՛ս նույն տեղում:

Բուլղարիան առաջատար էր, ապա Հայաստանից արտահանվող ապրանքների առումով հայկական կողմը դեռևս բավական հետ էր մնում և ընդհանուր արտահանման ծավալում Բուլղարիա արտահանվող ապրանքների տեսակարար կշիռը կազմում էր 0,7 %[353]: Թեև հարկ է նաև նշել, որ Հայաստանը այդ թվականին իր առևտրային բոլոր գործընկեր երկրների հետ ուներ առևտրի բացասական հաշվեկշիռ բացառությամբ Բելգիայի և Գերմանիայի:

2004 թ. Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահ Օգնյան Գերջիկովը իր Հայաստանյան պաշտոնակցի հետ հանդիպման ժամանակ գոհունակությամբ նշեց երկու երկրների զարգացող փոխհարաբերությունները, մասնավորապես երկու երկրների ապրանքաշրջանառության կտրուկ աճը վերջին մեկուկես տարում: Նշվեց, որ Բուլղարիայում մեծ նշանակություն են տալիս տրանսպորտային կապի զարգացմանը, Օ. Գերջիկովը պատրաստակամություն հայտնեց Վառնա և Բուրգաս նավահանգիստների օգտագործմամբ Հայաստանի հետ ծովային ճանապարհներով տրանսպորտային կապերի խորացման համար ու ընդգծեց Հայաստանի մասնակցության կարևորությունը «Տրասեկա» ծրագրին[354]:

Ա. Բաղդասարյանը հայ-բուլղարական կապերի զարգացումը կարևորեց քաղաքական, տնտեսական, կրթամշակութային առումներով: Նշվեց, որ երկու խորհրդարանների հովանու ներքո կարող էր գործարար ֆորում կազմակերպվել: Կարևորվեց համագործակցությունը միջազգային կառույցներում[355]:

Արդեն 2004 թ. հունիսի 30-ին ՀՀ ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությանն ընդունեց ԲՀ նախագահ Գ. Պրվանովը:

Հանդիպման ընթացքում փոխըմբռնման մթնոլորտում կարևորվեց քաղաքական, տնտեսական, մշակութային համագործակցության շարունակումը, մանրամասնվեցին ոլորտները: Նշվեց, որ ապրանքաշրջանառության աճի ներուժ ունեն երկու երկրներն էլ: Փոխադարձաբար կարևորվեց Հայաստանի

---

[353] Տե՛ս Հայաստանը թվերով, 2005 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 81-83:

[354] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սկսվել է ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 119 (3498), 30 հունիսի 2004, էջ 1:

[355] Տե՛ս նույն տեղում:

ընդգրկումը «Տրասեկա» ծրագրում, որտեղ Բուլղարիան առանցքային նշանակություն ունեցող երկիր է[356]:

Այցի ընթացքում քույր քաղաքներ դարձան Պլովդիվն ու Գյումրին: Համձայնագիրն ուներ տնտեսական բաժին: Ըստ համձայնագրի կողմերը ջանքեր պետք է ներդնեին տնտեսվարող սուբյեկտների համատեղ արտադրական, գործարար, առևտրային և տնտեսական գործունեության այլ տեսակների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Իրենց իրավասությունների շրջանակներում կնպաստեն համատեղ ձեռնարկությունների, ֆինանսաարդյունաբերական խմբերի, առևտրային տների և կառույցների ստեղծման համար: Նախատեսվում էր 3-րդ կողմի մասնակցությամբ, միջոցներ ձեռնարկել կրթության, գիտության, տեխնիկայի բնագավառներում համագործակցության զարգացման՝ գիտնականների, մասնագետների, ինժեներատեխնիկական աշխատողների, ուսուցիչների, ստաժորների փոխանակման համար: Համատեղ գիտական միջոցառումների, ցուցահադեսների, գիտահետազոտական, փորձարարանախագծային աշխատանքների կազմակերպման ճանապարհով պայմաններ կստեղծվեին մշակույթի, արվեստի, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում համագործակցության զարգացման համար, կօժանդակեին ցուցահանդեսների, թատերական և համազգային ներկայացումների, համատեղ մարզական միջոցառումների կազմակերպմանը: Այդ խնդիրների լուծելու համար կստեղծվեր աշխատանքային խումբ[357]:

Պլովդիվում պատվիրակության անդամները եղան «Ագրիա» և «Ալեն Մակ» գործարաններում: «Ագրիան» 1932 թ. գործող ձեռնարկություն էր, որ մասնագիտացել էր բույսերի պաշտպանիչ միջոցների արտադրության մեջ: Հանդիպման ընթացքում Հայաստանի շուկայի ուսումնասիրության և համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց[358]:

«Ալեն Մակը» Եվրոպայում և աշխարհում հայտնի պարֆյումերայի արտադրության ձեռնարկություն էր, որի

[356] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հանդիպում Բուլղարիայի նախագահի հետ», թիվ 120 (3499), 1 հուլիսի 2004, էջ 1:
[357] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Համաձայնագիր քաղաքների միջև», թիվ 120 (3499), 1 հուլիսի 2004, էջ 1,2:
[358] Տե՛ս նույն տեղում:

արտադրանքը սպառվում էր նաև Հայաստանում՝ տարեկան 280,000 դոլարի: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հոկտեմբերին «Ալեն Մակի» ղեկավարները կայցելեն Հայաստան՝ ուսումնասիրելու հայկական շուկան և մասնավորապես խորդենու արտադրության հնարավորությունները, որը հեռանկարային համարվեց՝ իբրև բուսայուղերից լավագույնը պարֆյումերիայի արտադրության մեջ[359]:

Երկու երկրների միջև 2000-ական թթ. սկզբին նկատվում էր ուղևորափոխադրումների ծավալների զգալի աճ: Բուլղարիան ըստ Համաշխարհային բանկի տվյալների դարձավ «վերին միջին եկամտաբերություն» ունեցող երկիր[360]: Ըստ ՀՀ և ԲՀ միջև 2002-2003 թթ. արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալների՝ 2002 թ. համեմատությամբ 2003 թ. ներմուծման ծավալներն աճել են 2,96 տոկոսով, իսկ արտահանման ծավալները 2,6 անգամ: Նկատվում է նաև ապրանքաշրջանառության ծավալների զգալի աճ 2004 թ. առաջին կիսամյակի ընթացքում[361]:

2002 թ., 2003 թ., 2004 թ. առաջին կիսամյակի արտահանման ծավալները համամասնորեն կազմում են 332.1 մլն դր., 854.3 մլն դր., 1404.4 մլն. դր.: Ներմուծումը նույն ժամանակահատվածում համապատասխանաբար կազմել է 28245.1 մլն. դր., 29082.2 մլն. դր., 15562.3 մլն դր.[362]:

2004 թ. Գ. Պրվանովը Հայաստան այցելության օրերին անթաքույց հպարտությամբ նկատեց, որ Հայաստանի և Բուլղարիայի միջև ապրանքաշրջանառության ծավալները մեծացել էին երեք անգամ, իսկ վերջին տարում հարյուր անգամ աճել էր հայկական ապրանքների՝ Բուլղարիա արտահանման ծավալները: Երկու երկրների տրանսպորտի նախարարների ներդրած ջանքերը հանգեցրել էին կոնկրետ արդյունքի[363]:

---

[359] Տե՛ս նույն տեղում:
[360] Տե՛ս https://data.worldbank.org/country/bulgaria , 16.02.2019
[361] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պրվանովի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն», թիվ 175 (3554), 2 հոկտեմբերի 2004, էջ 3:
[362] Տե՛ս նույն տեղում:
[363] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Երեք տարում հարյուրապատիկ աճ. Բուլղարիայի նախագահի այցը Հայաստան», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 1:

2004 թ. հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ հայ-բուլղարական բիզնես համաժողով, որին մասնակցում էին նաև երկու երկրների նախագահները:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, ողջունելով համաժողովի մասնակիցներին, նկատեց, որ հայ-բուլղարական այս մակարդակի հանդիպումները վերաճում էին ավանդույթի: Նա արձագանքեց, որ երկու երկրների կողմից հատուկ վերաբերմունք էր ցուցաբերվում երկկողմ հարաբերությունների զարգացմանը: «Մոտ մեկ տարի առաջ մենք քննարկում էինք, որ տնտեսական ոլորտը ետ էր մնում մեր քաղաքական երկխոսության մակարդակից: Այժմ կարող ենք արձանագրել, որ տնտեսական կապերի զարգացման առումով մենք բավական առաջընթաց ենք ապրել»,- ասաց Ռ. Քոչարյանը[364]:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը զեկուցեց համաժողովի հիմնական ձեռքբերումների մասին. Հայաստանի «Էլիտչին», «Եվրոպրոֆայլ», և «Էլիտ» ընկերությունները բուլղարական «Տրանսկոմ» ընկերության հետ պայմանավորվածություն ձեռք բերեցին շինանյութի՝ Բուլղարիա արտահանելու մասին, «Բիոֆարմ» և «Բիոկոսմետիկ» ընկերություններն արդեն պայմանագրով ամրագրեցին իրենց պայմանավորվածությունը կոսմետիկայի և դեղագործության բնագավառում, «Պոլիքրոմ» ընկերությունը «Տիգրան Մեծ» և «Պրինտինֆո» տպագրատների հետ ունեցած համագործակցությունը զարգացնելու նպատակով մտադիր էր ներկրել նոր սարքավորումներ: Այս ցանկում ամենանշանակալիցը թեև, բուլղարական «Սոմատ» ընկերությունն էր (գերմանական «Վիլլի Բեց» ընկերության մասնաճյուղը), որն ապահովում էր լաստանավային բեռնափոխադրումները Բուրգաս-Փոթի-Նովոռոսիսկ ուղղությամբ: Համաժողովի նախորդող ժամանակահատվածում լաստանավը կանգնել էր վերանորոգման, այն պահին, երբ Լարսում փակված էր Հայաստան եկող բեռների նաև ցամաքային ճանապարհը: Եվ ահա «Սոմատը», որպես լաստանավի բաժնետեր, առաջարկում էր

[364] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Հին» հարևանություն՝ ընդլայնված Եվրոպա. Հայ-բուլղարական բիզնես համաժողով», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 1:

գործարկել նաև երկրորդ լաստանավը՝ համապատասխանելու համար հայկական բեռնափոխադրումների ծավալին և պահանջարկին[365]:

Ա. Ղազարյանը նաև նշեց, որ դեպի Եվրոպա Հայաստանի բեռնափոխադրումները կատարվում էին հիմնականում Բուրգաս և Վառնա քաղաքների միջով. ավելի պատկերավոր ասած՝ Բուլղարիան Հայաստանի տնտեսական պատուհանն էր դեպի Եվրոպա[366]:

Երկրորդ լաստանավի հարցը «Սոմատ» ընկերության առևտրային տնօրեն Դիմիտր Նիկոլովը բարձրացրել էր նախագահների և տրանսպորտի նախարարների ներկայությամբ, քանի որ դրա համար անհրաժեշտ էր պետական արտոնագիր Բուլղարիայի կողմից: Լրագրողների հետ զրույցում նա լաստանավային ուղին դիտարկեց որպես Տրասեկայի մաս՝ միջազգային անցուղի, որը կարևոր էր Եվրահանձնաժողովի և ընդհանրապես Եվրամիության տեսանկյունից: Դիմիտր Նիկոլովը տարակուսեց, որ կարող էր միտք անգամ ծագել, որ լաստանավի խափանվելը ոչ թե պատահականություն էր, այլ համընկնում էր Լարսի ճանապարհի փակման հետ[367]: Ամեն տարի լաստանավով հայկական բեռնափոխադրումներն աճում էին 15-20 տոկոսով[368]:

2004 թ. բավական բարձր արդյունքը 2005 թ. փոխարինվեց անկմամբ, որը արտահանման ուղղությամբ շուրջ 5,5 անգամ էր, իսկ ներմուծման ուղղությամբ գրանցվեց 2 անգամ անկում:

Փոխարենը արևելաեվրոպական երկրների շարքում շեշտակիորեն աճեց Ռումինիայից ներկրման ցուցանիշները նախորդ տարվա 34 007 400 դոլարի փոխարեն կազմելով 75 244 400 դոլար[369]:

2006 թ. Բուլղարիայի և Հայաստանի միջև առևտրի ծավալները նվազում էին ընդհանուր ներմուծման ծավալների մեջ հասնելով 1,9 %[370]: Պահպանվում էր առևտրի բացասական հաշվեկշիռը, որը շարունակում էր բնութագրական լինել Հայաստանի տնտեսության համար: Այս առումով հարկ էր նշել, որ որոշակի տեղաշարժեր

365 Տե՛ս նույն տեղում, էջ 2:
366 Տե՛ս նույն տեղում:
367 Տե՛ս նույն տեղում:
368 Տե՛ս նույն տեղում:
369 Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006, նշվ. աշխ., էջ 492:
370 Տե՛ս Հայաստանը թվերով, 2007 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 80:

կատարվել էին, քանզի երկրների ցանկը, որտեղ արտահանումը գերազանցում էր ներմուծմանը աճել էր: Արևելաեվրոպական երկրների մեջ Ռումինիան շրջանցել էր Բուլղարիային ներմուծման ծավալներով[371]: 2005-2006 թթ. ՀՀ-ից Բուլղարիա արտահանում բավական փոքր էր եղել ինչի հետևանքով այս երկիրը Հայաստանից ապրանքների արտահանման դիրքով զբաղեցրել է 31-32-րդ տեղը[372], որը բավական վատ ցուցանիշ էր: Այսպիսի ցուցանիշ երկկողմ առևտրաշրջանառության մեջ վերջին տասնամյակում չէր գրանցվել:

2006 թ. Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահի հետ հանդիպումների ժամանակ անդրադարձ կատարվեց տնտեսական փոխգործակցության խնդիրներին: Տնտեսական համագործակցության ակտիվացման գործում զրուցակիցներն ընդգծեցին տրանսպորտային համագործակցության նշանակությունը. երկուստեք հեռանկարային էր համարվել լաստանավային փոխադրումների իրականացումը՝ մասնավորապես, Վառնա-Կավկազ-Փոթի լաստանավային գծի գործարկումը: Քննարկվող հարցերի համատեքստում կարևորվել էին հայ-բուլղարական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեությունը[373]:

Միջկառավարական հանձնաժողովում քննարկվելիք փոխշահավետ համագործակցության հեռանկարային ոլորտներ էին համարվել գյուղատնտեսության և սննդարդյունաբերության, տրանսպորտի, էներգետիկայի, առողջապահության, գիտության, կրթության, մշակույթի և այլ բնագավառները[374]:

Բուլղարիայի և Հայաստանի միջև առևտրի ծավալները 2007 թ. զգալիորեն ընդարձակվել էին, ինչի արդյունքում ՀՀ-ից արտահանումը հասել է 4.07 տոկոսի, ներմուծումը կազմել է 2.68 տոկոս: Այն թեև տոկոսային հարաբերությամբ ավելի փոքր էր, սակայն ՀՀ ներկրումները գումարային առումով գերազանցում էին

[371] Ռումինիայից Հայաստան ներմուծումը հասել էր 3,8 %-ի, սակայն արտահանումը դեպի Ռումինիա գրեթե զրոյական էր: Տե՛ս նույն տեղում:
[372] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, Նշվ. աշխ., էջ 458:
[373] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Ընդունել են Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահին», թիվ 26 (3882), 14 փետրվար, 2006 թ., էջ 1,2:
[374] Տե՛ս նույն տեղում:

արտահանմանը, քանզի ՀՀ-ից արտահանման ծավալները շուրջ 3 անգամ ավելի քիչ էին[375]: Բացի այդ ներմուծման և արտահանման գումարային չափի վրա ազդել էր նաև փոխարժեքի տատանումները, ինչի հետևանքով Հայաստանում դրամի գինը բարձրացել էր, որն հանգեցրել էր դոլարի տեսքով առևտրի ծավալների մեծացմանը:

ԱՊՀ երկրներից այս ցուցանիշը գերազանցում էին միայն Ռուսաստանը և Ուկրաինան, իսկ արտահանման ցուցանիշով նաև Վրաստանը: ԵՄ երկրների շարքում ներմուծման ցուցանիշներով Բուլղարիան միջին տեղ էր զբաղեցնում 2,68 տոկոս ցուցանիշով, իսկ ահա արտահանման ծավալներով չորրորդ տեղում էր զիջելով միայն Գերմանիային, Նիդեռլանդներին և Բելգիային[376]: Հայաստանի առևտրային գործընկերների թվում Բուլղարիան 8-րդն էր[377], եթե հաշվենք բոլոր առևտրային գործընկերներին: Ներմուծման ցուցանիշով Բուլղարիան Հայաստանի հետ կատարվող առևտրում զբաղեցնում է 14-րդ տեղը, իսկ ԵՄ երկրների շարքում 6-րդն էր[378]:

Չնայած երկկողմ տնտեսական խնդիրներին, որոնք պայմանավորված էին նույնանման ապրանքների արտադրությամբ և բեռնափոխադրումների դժվարություններով կողմերը փորձում էին տնտեսական երկկողմ հարաբերությունները զարգացնել համատեղ ձեռնարկությունների տարբերակով, որի օրինակ էին բուլղարական առաջին ներդրումները Հայաստանում գինեգործության ոլորտում: Մյուս կողմից, վերջին տասը տարվա ընթացքում առաջին անգամ բուլղարական շուկայում էր հայտնվել Երևանի կոնյակի գործարանի և «Նոյ» հայկական կոնյակները, որոնք արդեն հաջողություն էին գրանցել[379]:

Բուլղարիայում կա ևս մեկ յուրահատկություն. այստեղ կարիք չկա ներկայացնել ու Հայաստանը: Այստեղ լավ գիտեին անգամ Անդրանիկ զորավարին, դպրոցական ծրագրերով տեղեկանում էին հայերի մասին: Դեսպանատունը փորձում էր ներկայացնել

---

[375] 2007 թ. ՀՀ-ից արտահանվել է 1 152 300 800 դոլարի ապրանք, իսկ ներկրվել 3 267 788 000 դոլարի ապրանք: Մանրամասն տե՛ս Հայաստանը թվերով, 2008 թ., Վիճակագրական գրքույկ, նշվ. աշխ., էջ 79:

[376] Մանրամասն տե՛ս Հայաստանը թվերով, 2008 թ., նշվ. աշխ., էջ 80-82:

[377] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, նշվ. աշխ., էջ 458:

[378] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 460-461:

[379] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայկական «Մառլենկա» թխվածքը, կոնյակն ու ծխախոտը՝ հայկական բրենդ Արևելյան Եվրոպայում», թիվ 179 (3831), 3 հոկտեմբերի 2007 թ., էջ 2:

ժամանակակից Հայաստանը, տնտեսական առումով Հայաստանը ներկայացված էր հայկական կոնյակի և ծխախոտի բրենդներով[380]:

Հայաստանի և Բուլղարիայի միջև ապրանքաշրջանառության ծավալները կազմում էին 30 մլն դոլար, սակայն երկու երկրներն արագ զարգացող պետություններ էին և համագործակցության ողջ ներուժն օգտագործված չէր: Այս մասին Երևանում տեղի ունեցած՝ Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանի և Բուլղարիայի վարչապետ Սերգեյ Ստանիշևի համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ նշեց Բուլղարիայի վարչապետը: Նա նաև նշեց, որ Բուլղարիան վերջին տարիներին միջին տարեկան 6 տոկոս տնտեսական աճ էր արձանագրում, իսկ արտասահմանյան ներդրումներն այդ երկրում կազմել էին 4,1 մլրդ դոլար:

Սերժ Սարգսյանը նույնպես մատնանշեց երկու երկրների ապրանքաշրջանառության ծավալների՝ առկա ներուժի համեմատ փոքր լինելը: Նա հայտնեց, որ Հայաստանը Բուլղարիայից հիմնականում նավթամթերք էր ներմուծում, սակայն կան նաև այլ ապրանքներ, որոնք պահանջարկ կունենան Հայաստանում: Միաժամանակ, ըստ Հայաստանի վարչապետի, մեր երկրում արտադրվող ապրանքատեսակներն էլ կարող են պահանջարկ ունենալ Բուլղարիայում: Տեղեկացվեց, որ տնտեսական հարաբերություններին նոր խթան հաղորդելու համար եկող տարի Բուլղարիայում նախատեսվում էր հայ-բուլղարական գործարար համաժողով կազմակերպել:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման նոր խթան կարող էր հաղորդել այն հանգամանքը, որ 2008-ի հունվարի 1-ից Բուլղարիան դառնալու էր Եվրոմիության անդամ երկիր: Բուլղարիան նախատեսում է յուրաքանչյուր տարի իր համախառն ներքին արդյունքի 0,17 տոկոսը հատկացնել ԵՄ չանդամակցող երկրներին և այդ ծրագրի շրջանակներում, ինչպես հավաստիացրեց այդ երկրի վարչապետը, պատրաստ էր գումարներ տրամադրել նաև Հայաստանին՝ համապատասխան ծրագրերի առկայության պարագայում[381]:

---

[380] Տե՛ս նույն տեղում:

[381] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հայ-բուլղարական համագործակցության ներուժն օգտագործված չէ», թիվ 209 (3861), 14 նոյեմբերի 2007 թ., էջ 2:

2007 թ. տնտեսության աշխուժացման և նոր ներդրումներ խրախուսելու համար Բուլղարիայում մտցվեց 10 տոկոսանոց եկամտահարկ, որն ամենացածրն էր ողջ Եվրոպայում[382]: Արդեն 2008 թ. այս հարկատեսակը ընդհանուր դարձավ երկրի բոլոր քաղաքացիների և իրավաբանական անձանց համար[383]:

Հայաստանից Բուլղարիա արտահանման ծավալները 2008 թ. շարունակեցին աճել, որի հետևանքով Հայաստանից ապրանք ներկրող երկրների ցանկում Բուլղարիան հայտնվեց 6-րդ տեղում, իսկ ԵՄ երկրների ցանկում 4-րդն էր[384]: Հայաստան ներկրման ցուցանիշներով Բուլղարիայից թեև ավելի շատ ապրանք ներկրվեց, սակայն տոկոսային հարաբերակցությունը չփոխվեց:

Այսպիսով, այս տարիներին հայ-բուլղարական առևտրատնտեսական համագործակցությունը աշխուժացնելու նպատակով կազմակերպվում էին տեղեկատվության փոխանակում. մասնավորապես գործարարների փոխադարձ այցերը, գործարար համաժողովները, ցուցահանդեսների կազմակերպումը: Գյուղատնտեսության ոլորտում հայ-բուլղարական համագործակցությունը սկսվել է դեռևս 1995 թվականին՝ երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված անասնաբուժության և բույսերի ֆիտոսանիտարական կարանտինի բնագավառում համագործակցության մասին կոնվենցիաներով: Այդ փաստաթղթերի շրջանակներում երկու երկրների համապատասխան ծառայությունների միջև պարբերաբար կատարվում էր անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում: Հայաստանի և Բուլղարիայի միջև էներգետիկ բնագավառում համագործակցությունը կրում էր ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ բնույթ: Բազմակողմ համագործակցությունը իրականացվում էր ՍԾՏՀ-ի և Սևծովյան տարածաշրջանային էներգետիկ կենտրոնի ծրագրերի շրջանակներում: ՍԾՏՀ շրջանակում երկրները մասնակցում էին էլեկտրաէներգետիկ օղակ ստեղծելու նախագծի աշխատանքներին:

---

[382] Տե՛ս Bulgaria’s government strives to keep stability amid pay demands // EU-Business, 9 October 2007 ,
https://www.eubusiness.com/europe/bulgaria/1191900721.97/ , (16.02.2019):
[383] Տե՛ս Daniel J. Mitchell, Bulgaria Now an Official Member of the Flat Tax Club
https://www.cato.org/blog/bulgaria-now-official-member-flat-tax-club , (16.02.2019):
[384] Մանրամասն տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, նշվ. աշխ., էջ 460-461:

Հայաստանի և Բուլղարիայի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման համար ձևավորված էր անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտ, այդուհանդերձ, առևտրաշրջանառության ծավալները դեռևս հեռու էին ցանկալի մակարդակից: Բուլղարիայի հետ հարաբերություններում գոյություն ունեն օբյեկտիվ երկու դժվարություններ. արտադրվող ապրանքների նույնություն, նաև հաղորդակցության միջոցների խնդիր: Օպտիմալը լաստանավային կապը կլիներ, բայց ներկայումս Բուլղարիայի հետ կապ էր հաստատված ավտոմոբիլային ճանապարհով, հիմնականում Թուրքիայի տարածքով, ինչը տնտեսական բարձր արդյունքներ արձանագրելու համար բացասական հանգամանք էր:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ:

## ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### 3.1. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ ՀՀ և ԲՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բուլղարահայ ժամանակակից համայնքը ներկայացված է սփյուռքի և՛ դասական, և՛ արդի հատվածներով[385]: Դասական հատվածը, որն հիմնականում կայացել է սփյուռքի ձևավորման պատմաաշխարհագրական ընթացքի երկրորդ փուլում, համայնքային կյանքի կազմակերպումն իրականացնում է համասփյուռքյան կառույցների՝ ՀՅԴ, ՀԲԸՄ, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի տեղական գրասենյակների շնորհիվ[386]:

Հայերը Բուլղարիայում հաստատվել են դեռևս միջին դարերից և պատմագիտական աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ հայերի տեղաշարժերի, գործունեության, Բուլղարիայի կառավարող շրջաններում ազդեցիկ դիրքեր զբաղեցնելու բազմաթիվ դեպքերի մասին: Ա. Ալպոյաճյանը վկայում էր, որ հայերը Բուլղարիայում սկսել էին հաստատվել արաբական շրջանում, այսինքն 7-րդ դարից

[385] Տե՛ս Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 175:
[386] Տե՛ս նույն տեղում:

սկսած և ենթադրվում էր, որ Վոլգա գետի հոսանքն ի վեր նավարկելով հասել էին մինչև Հին Բուլղարիայի մայրաքաղաքի մոտակայքը[387]: Պրոֆ. Քացարոֆի կարծիքով նույնիսկ 7 և 8-րդ դդ. Բուլղարիայում գտնվող ստվար թվով հայերը, թագավորի կողմից մասնավոր հրավերով եկած ճարտարապետներ կամ սահմանագլուխների վրա զետեղված կամավորներ էին: Բուլղար պատմաբանը իր այս կարծիքը հիմնավորում է այն իրողությամբ, որ Բիրուչիթցագյուղաքաղաքի մոտբուլղարական եկեղեցին կրում էր հայկական ճարտարապետության ուժեղ կնիք[388]: 853-856 թթ. Թեոդորա կայսրուհին (842-857) հայ պավլիկեանների դեմ սկսեց հալածանանքեր իրականացնել, որից հետո նրանց տեղափոխեց Բուլղարիա: Այս աղանդավորները նոր քրիստոնեացած Բուլղարիայում մեծ դեր կատարեցին[389]: Հաջորդ դարերում հայերը ևս բավական ակտիվ էին Բուլղարիայի հասարակական-քաղաքական կյանքում ունեցած իրենց դերակատարությամբ: Հայությունը ազդեցիկ դիրք ուներ նաև երկրի արհեստագործության և առևտրի զարգացման գործում: 17-18-րդ դդ. հռչակված էին Սոֆիայի հայ դարբինները, որոնք միավորված էին առանձին համքարության մեջ: Շումենի հայ պղնձագործները ևս կազմում էին առանձին էսնաֆ, որը ոչ միայն կարգավորում և վերահսկում էր պղնձի ներմուծումը Տրապիզոն-Վառնա ծովային ուղիով,այլ և արտադրանքի արտածումը Կ.Պոլիս[390]:

Հայերը ակտիվ էին Բուլղարիայում նաև 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի ազգային ազատագրական պայքարի ընթացքում: Հիշատակման են արժանի Ռուսչուկի Արիստակես քահանան, Հարություն Կտիքովը և այլոց արիությունն ու մատուցած ծառայությունները 1876 թ. ապրիլյան ապստամբության և դրան հաջորդած թուրքական կոտորածների օրերին[391]:

---

[387] Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 346:
[388] Տե՛ս նույն տեղում, էջ 230:
[389] Տե՛ս նույն տեղում, էջ 236:
[390] Տե՛ս Բադալյան Գ., Բուլղարիայի հայկական գաղթավայրերը (Սկզբնավորման շրջանից մինչև 20-րդ դարի զկիզբը), «Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապահան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 41-47:
[391] Տե՛ս Խաչատրյան Ա., Հայերի մասնակցությունը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին 19-րդ դարի երկրորդ կեսին, «Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապահան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 17-28:

Հայերի և բուլղարների շփումները բավական ակտիվ էին նաև հետագա շրջանում: 1900-ական թթ. սկզբին հայ քաղաքական գործիչներից Ռոստոմը (Ստ. Զորյան) Ֆիլիպոպոլիս քաղաքում հաստատվելով հիմնեց մասնավոր վարժարան[392]: Բուլղարա-մակեդոնական կազմակերպության մի շարք գործիչների անմիջական աջակցությամբ վերջինս կապեր հաստատեց վարչապետ Պետկովի, գեներալ Սավովի և այլոց հետ[393]: Շնորհիվ դրա նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Բուլղարիայի հայ համայնքի բնականոն կյանքի համար[394]:

Ջարդերի, կոտորածների, ցեղասպանության արդյունքում Բուլղարիայում հաստատված հայերը արագորեն հարմարվեցին տեղի բարքերին: Բուլղարահայերն արագ կառուցեցին իրենց եկեղեցիները, իսկ Սոֆիայում կառուցեցին նաև ժողովրդական տունը[395]: Նոր շենքերը կարևոր կենտրոններ էին հայ համայնքների համար յուրաքանչյուր քաղաքում, որտեղ հիմնավորվել էին նրանք: Եվ սկսվեց մշակութային լիարժեք կյանքը, որը շարունակվում է ցայսօր: Հայերի ներկայությունը դրական դեր խաղաց քրիստոնեական բարոյականության և բուլղարական հայրենասիրության ամրապնդման գործում:

1920-ական թթ. Բուլղարիայում ապրում էին 46000 հայեր[396]: Այստեղ գործում էր ՀՕՄ մասնաճյուղ[397]: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բուլղարահայերից ֆաշիզմի դեմ պայքարեցին

---

392 Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, «Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 34-41:

393 Տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 216-217:

394 Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, «Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Երևան, 2009, էջ 34-41:

395 Տե՛ս Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2015, համար 3, էջ 33-39:

396 Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 51: Նախքան Հայրենական պատերազմը Ա. Ալպոյաճյանի վկայությամբ Բուլղարիայում ապրում էին 25000 հայեր: Տեղեկությունները այս և հետագա շրջաններում հայերի թվակազմի մասին խիստ հակասական են և հայ հեղինակների բերած տեղեկությունները երբեմն մի քանի անգամ ավելի են քան բուլղար հեղինակների և աղբյուրների հղումները: Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 2:

397 Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ.աշխ., էջ 154: Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը ..., նշվ. աշխ., էջ 246:

Հակոբ Պարոնյանն ու Հերմինե Ռազգրադլյանը[398]: Խորհրդային բանակի՝ երկիր մտնելուց և կոմունիստների իշխանության գալուց հետո բուլղարահայերը սկսեցին համալրել գերազանցապես գիտատեխնիկական և ստեղծագործող մտավորականության շարքերը՝ մի կողմ քաշվելով քաղաքականությունից, կառավարումից և գաղափարախոսությունից: Թեև բացառություններ եղել են. հատուկ ծառայությունների գեներալ է եղել Կապրիել Կապրիելովը, մարքս-լենինյան փիլիսոփայության դասագրքեր է գրել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Սարգսյանը, Բուլղարիայի ակադեմիայի բուլղարագիտության ինստիտուտը ղեկավարել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Գարաբեդյանը, Վառնայի մարզի դատախազն էր Մասիս Խաչոլյանը, Վառնայի արհմիությունները ղեկավարում էր Լևոն Օվանեզովը: Նրանք բոլորն էլ օրինապաշտ քաղաքացիներ էին և, շնորհիվ իրենց կրթության ու մասնագիտական հմտությունների, հաջող կարիերա ունեցան[399]:

Սոցիալիզմի օրոք աչքի ընկնող լրագրող էր Կևորկ Կևորկյանը, հայտնի ռեժիսոր էր Խաչո Բոյաջիևը, հայտնի էին կոմպոզիտոր Հայգաշոտ Աղասյանը, երգչուհի Ստեֆկա Օնիկյանը, դերասան Սարգիս Մուհիբյանը, ծանրորդ Նորայր Նուրիկյանը, բռնցքամարտիկ Կիրկոր Կիրկորովը, ֆուտբոլիստ Կևորկ Թահմիսյանը, բազմաթիվ շախմատիստներ[400]:

Հետպատերազմյան շրջանում հայրենիք վերադառնալու շարժումը Բուլղարիայում այնքան լայն թափ էր ստանում, որ արդեն մինչև 1946 թ. մայիսը ներգաղթելու համար ցուցակագրվել էր 3256 ընտանիք կամ 11532 մարդ, և այդ թիվը շարունակում էր աճել[401]: 1946 թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Անիվա», «Ռոսիա» և «Վերխոյանսկ» շոգենավերով Բուլղարիայից Հայաստան ժամանեցին 4383 հայրենադարձներ[402]: Ուշագրավ էր, որ բուլղարական կառավարությունը հայերին թույլատրել էր իրենց հետ հայրենիք տանել եկեղեցական գույք, սրբապատկերներ, գրքեր և ընդհանրապես

398 Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք ..., նշվ. աշխ., էջ 171:
399 Տե՛ս նույն տեղում:
400 Տե՛ս նույն տեղում:
401 Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք ..., նշվ. աշխ., էջ 189:
402 Տե՛ս նույն տեղում, էջ 215:

հայկական ազգային մշակույթի համար արժեք ներկայացնող այլ առարկաներ:[403] Ըստ առանձին երկրների ցուցանիշների 1946 թ. Բուլղարիայից Հայաստան ներգաղթեց 1248 ընտանիք[404]: Հետագայում Բուլղարիայից հայրենադարձության ալիքը խիստ դանդաղեց, որը պայմանավորված էր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի քվոտավորման փոփոխությամբ՝ առավելություն տալով Իրանի և Հունաստանի հայերի հայրենադարձությանը կապված այս երկրների բարդ իրավիճակով:

Բուլղարահայերը բացի Հայաստանից գաղթել են աշխարհի տարբեր երկրներ՝ համալրելով տեղի հայկական համայնքները: Այսպես՝ 1950-1970-ական թթ. բուլղարահայերը գաղթեցին Արգենտինա, Վենեսուելա, Կանադա, Ավստրալիա, Արևմտյան Եվրոպայի երկրներ, բայց ամենամեծ թվով՝ ԱՄՆ: Սակավաթիվ բուլղարահայեր տեղափոխվեցին Ավստրիա, Մարոկկո, Նոր Զելանդիա, Շվեդիա, Դանիա և Նորվեգիա[405]:

Խորհրդային տարիներին բուլղարահայերը մեկուսացած էին հայրենիքից, թեև սփյուռքի կոմիտեի միջոցով որոշ քայլեր արվում էին: Դրանք ոչ պաշտոնական բնույթ ունեին, բնականաբար, քանզի այդպիսի հարցերը Մոսկվայում էին վճռվում: Արված քայլերը գլխավորապես անհատների հետ էին և գրեթե արդյունքի չէին բերում:

40-45 տարի Բուլղարիայում բնակվող հայերը անդամակցում էին «Երևան» միությանը, որը այնքան էլ հայկական միավորում չէր, քանի որ ենթարկվում ու օժանդակվում էր Բուլղարիայի կոմկուսի կենտկոմի կողմից: Սևդա Սևանը ասում էր. «Գոնե Հայաստանի կոմկուսինը ըլլար, մի կերպկմարսեինք...»[406]:

Խորհրդային տարիներին կոմկուսի ազդեցությամբ Բուլղարիայում փակվեցին դպրոցներ, հայկական վարժարաններ: Այդ տարիներինն նույնիսկ կազմվում էին մարդկանց ցանկեր,

---

403 Տե՛ս նույն տեղում:
404 Տե՛ս նույն տեղում:
405 Տե՛ս Ղանալանյան Տ., «Հայերի արտագաղթը Բուլղարիայից (1950-1970-ական թթ.), «Հայագիտության հարցեր», թիվ 1, Եր., 2016, էջ 82-93:
406 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սևդա Սևանը, բուլղարահայ գաղութը, բարեգործությունը և մենք», թիվ 84 (429), 30 ապրիլի 1992 թ., էջ 1-2:

որոնք հաճախում էին եկեղեցիներ[407]: Հավանաբար դա էր եղել պատճառը եկեղեցիների աստիճանական դատարկմանը: Նույնիսկ 1990-ական թվականների սկզբին, երբ այդ արգելքները վերացվել էին եկեղեցիները կրկին դժվարությամբ էին լցվում:

ԽՍՀՄ տարիներին բուլղարահայերը չէին համարվում ավանդական սփյուռքի մասեր և ինչպես վկայում է Ս. Սևանը իրենք «մոռացված» էին[408]: Եվրոպական երկրների թվում, որոնց կապերը Հայաստանի և հայերի հետ հազարամյա պատմություն ունեին, Բուլղարիան ուրույն տեղ էր զբաղեցնում: 1989 թ. դրությամբ Բուլղարիայում ապրում էին 13 000 հայեր, իսկ ոչ պաշտոնական տվյալներով, որը տրամադրում է Բուլղարիայում Հայկական եկեղեցու եկեղեցական խորհուրդը հասնում էր 20000-ի[409]: Հայ-բուլղարական հարաբերությունների զարգացումը պայմանավորված էր նաև բուլղարահայ համայնքի քանակական աճով ու ստվարացմամբ և երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրա ակտիվության աճով[410]: Ըստ Բուլղարիայի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հայերի թիվը 2001 թ. դրությամբ կազմել է 10 832[411]: Սակայն հայկական աղբյուրներում նշվում է ավելի մեծ թիվ մոտ 50 հազար[412], որոնցից շուրջ 35 հազարը[413] անկախության առաջին տասնամյակում արտագաղթածներն են: Հայկական համայնքի անդամների թվի տարբերությունները բուլղարական վիճակագրական ծառայությունների բերած տվյալների հետ ամենայն հավանականությամբ պայմանավորված է հայերի տեղաշարժերով, քանզի Բուլղարիան տարանցիկ երկիր էր դեպի Արևմտյան Եվրոպայի ավելի զարգացած երկրներ տեղափոխվելու համար: Բացի այդ Բուլղարիայի Ազգային վիճակագրական ծառայության նշած թվերը վերաբերում են ԲՀ գրանցված և օրինական գործունեություն

---

407 Տե՛ս նույն տեղում:

408 Տե՛ս Tchilingirian H., The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism, Armenian International Magazine (AIM), Vol. 12, Issue 3, April 2001, pp. 30-36.

409 Տե՛ս Мицева Е., Арменците в България –култура и идентичнос, София, 2001, с. 8.

410 Մինասյան Է., Հայ-բուլղարական հարաբերությունները 1991-2008 թթ., «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու», Եր., 2009, էջ 48-62:

411 Տե՛ս Население към 01.03.2001 г. по области и етническа група, http://www.nsi.bg/Census/Ethnos.htm, (12.08.2018).

412 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 128: Մալխասյան Մ., նշվ. աշխ., էջ 22:

413 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, նշվ. աշխ.:

ծավալած հայերին: Սակայն պարզ է, որ հատկապես 1990-ական թթ. այստեղ ապրում էին բազմաթիվ հայեր, որոնք չէին գրանցվել բուլղարական համապատասխան ծառայությունների կողմից:

Բուլղարահայ համայնքի արդի հատվածը, որը ձևավորվել է ՀՀ-ից 1990-ական թթ. սկզբին արտագաղթի հետևանքով, համայնքային կյանքին լիարժեք չէր մասնակցում: Ինչպես փաստում է հայկական սփյուռքի վիրտուալ թանգարանի կայքը՝ համայնքի երկու հատվածների միջև կապերը այսօր էլ թույլ են՝ հոգևոր-մշակութային տարբեր ընկալումների պատճառով[414]: Բուլղարահայ գաղութը երկրորդն էր Եվրոպայում Ֆրանսիայում բնակվող հայերից հետո[415]:

1990-ական թթ. աշխարհաքաղաքական փոփոխություններն անդրադարձան Սփյուռքի վերազարթոնքի, ազգային կյանքի վերածնման վրա: Վերափոխումների հետևանքով Սփյուռքի հայկական համայնքներում վերածնվեցին հայկական դպրոցները: 1990 թ. Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի քաղաքային խորհրդի որոշմամբ վերաբացվեց Պլովդիվի հայկական ազգային վարժարանը, որը փակվել էր 1976թ.[416]: Վարժարանը կրում էր Վիկտորիա և Գրիգոր Թյությունճյանների անունը[417]: Այստեղ 1991 թ. դրությամբ սովորող 280 աշակերտներից 250-ը հայ էին, մնացածը բուլղարներ[418]: 1993-1994 թթ. ուսումնական տարում վարժարանի աշակերտների թիվը հասել է 385-ի, ուսուցիչներինը՝ 28-ի[419]: 2005 թ. դրությամբ դպրոցում հայերի թիվը թեև նույնը մնաց, սակայն ավելացան բուլղարների թիվը հասնելով 100-ի[420]: Հայկական գործող եկեղեցու հարևանությամբ գտնվող դպրոցը դասագրքեր էր ստանում ՀՀ-ից[421]: Պլովդիվում, Սոֆիայում, Վառնայում ստեղծվեցին «Զորավար Անդրանիկ» երիտասարդական միության տեղական մասնաճյուղերը, Վառնայում նաև «Արարատ» երիտասարդական միությունը: 1990-ին

---

[414] Տե՛ս Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 175:
[415] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սևդա Սևանը, բուլղարահայ գաղութը, բարեգործությունը և մենք», թիվ 84 (429), 30 ապրիլի 1992 թ., էջ 1-2:
[416] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 10 հոկտեմբերի, 1990:
[417] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 132:
[418] Տե՛ս «Հայաստան», 11 հունվարի, 1991:
[419] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, նշվ.աշխ.:
[420] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 45:
[421] Տե՛ս Պետրոսյան Ք., նշվ. աշխ., էջ 133:

Պլովդիվում հիմնադրվել է «Արաքս» բարեգործական կազմակերպությունը, Վառնայում՝ Կանանց միությունը: Համայնքի ազգային կյանքի աշխուժացմանը որոշ չափով նպաստեցին նաև 1990-ական թթ. առաջին կեսին Հայաստանից եկած բազմաթիվ հայեր[422]:

Վերջին հարյուրամյակի ընթացքում Բուլղարիայում 97 անուն հայկական պարբերականներ են լույս տեսել[423]: 1991 թ. Պլովդիվում սկսվել է «Վահան»[424] երկլեզու շաբաթաթերթի հրատարակումը, իսկ 1993 թ. Բուրգասում կազմակերպվեց «Հայեր» երկշաբաթաթերթի[425] հրատարակումը[426]: Այս շաբաթաթերթի հոդվածները գլխավորապես բուլղարերեն էին: Բուլղարիայում լույս տեսած պարբերականների մեջ ամենաերկարակյացներից էր «Երևան»-ը[427], որը գոյություն ուներ տակավին 1944 թ. և իր գոյությունը շարունակեց նաև հետսոցիալիստական շրջանում:

1990-ական թթ. սկսած Բուլղարիայում վերաբացվեցին գրադարան-ընթերցասրահները, որոնք կարևոր աշխատանք էին կատարում երիտասարդ սերնդին հայեցի դաստիարակելու և ազգային մշակույթին հաղորդակից դարձնելու ուղղությամբ: Հետկոմունիստական շրջանում շատ հայեր առաջավոր դիրքեր գրավեցին բիզնեսում, գիտության, քաղաքականության, լրագրության մեջ: Երկար տարիներ Բուլղարիայի ազգային բանկը ղեկավարում էր Լևոն Համբարձումյանը, անվանի ֆինանսիստներ

---

[422] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, նշվ.աշխ., էջ 128:

[423] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

[424] «Վահան» շաբաթաթերթը լույս է տեսել 1991 թվականից Պլովդիվում բուլղարերեն և հայերեն լեզուներով: Խմբագիրը Հարի Նիկողոսյանն էր: Լուսաբանում էր բուլղարահայ համայնքի և սփյուռքահայ մյուս համայնքների կյանքը, Հայաստանում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունները: Տպագրել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսներին, սփյուռքահայ նշանավոր գործիչներին, Հայոց եկեղեցու պատմությանը նվիրված բազմաթիվ նյութեր:

[425] «Հայեր»-ը երկշաբաթյա հրատարակությամբ լույս տեսնող պարբերական է: Լույս է տեսնում 1993 թվականից Բուրգասում՝ բուլղարերեն-հայերեն գլխագրով և սակավաթիվ հայերեն հոդվածներով: Խմբագիրը Գևորգ Սարաֆյանն էր: Թերթը քարոզում էր գաղափարական սկզբունքներ, «որոնք պետք է դավանի յուրաքանչյուր հայ՝ հայրենիքի մեջ թե արտասահմանում»: Լուսաբանել է բուլղարահայության հասարակական և մշակութային կյանքը, տպագրել լուրեր և պաշտոնական հաղորդագրություններ Հայաստանից:

[426] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, նշվ.աշխ., էջ 137:

[427] «Երևան»-ը գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթ էր: Սկզբում լույս էր տեսնում եռօրյա պարբերականությամբ: «Երևան» մշակութային միության կենտրոնական վարչության պաշտոնաթերթ: Լուսաբանում էր բուլղարահայերի մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին:

էին Եղի Մինասյանը և Սարգիս Սարկիզովը (Վառնայում Հայաստանի Հանրապետության նախկին պատվո հյուպատոս, որն իր պաշտոնից ազատվեց բուլղար հասարակության համար անհասկանալի պատճառներով): Գիտության մեջ համաշխարհային հռչակ ձեռք բերեց աստղաֆիզիկոս Գագո Մարդիրոսյանը: Բուլղարիայում անվանի լրագրողներ էին Ալեքսանդր Մարկարյանը, Արման Բաբիկյանը, Անտոն Հեքիմյանը[428]:

ԽՍՀՄ փլուզման շրջանում հազարավոր հայեր տեղափոխվեցին Բուլղարիա: Հետո նրանցից շատերը վերադարձան Հայաստան: Նրանց մի մասը հեռացան աշխարհի տարբեր երկրներ: Ըստ Սևդա Սևանի համայնքի անդամների 60-70 տոկոսը ունեին բարձրագույն կրթություն և հեշտությամբ էին ինտեգրվում այլ հասարակությունների հետ[429]: Ուստի ավելի լավ կյանքի ակնկալիքով բուլղարահայերից շատերը տեղափոխվում էին ավելի զարգացած երկրներ: Կային նաև այնպիսիները, որոնք մեծ հաջողությունների էին հասնում Բուլղարիայում: Այստեղ տեղափոխված ամենահայտնի հայը ըմբիշ Արմեն Նազարյանն էր:

Հատուկ ուշադրության էր արժանի պլովդիվցի Թորոսյանների ընտանիքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո ազգությամբ հայ ամուսինը համոզում էր բուլղարուհի կնոջը տեղափոխվել խորհրդային Հայաստան՝ սոցիալիզմ կառուցելու: Ավագ որդին՝ Մկրտիչը, ծնվել էր Բուլղարիայում, կրտսերը՝ Սուքիասը, ԽՍՀՄ-ում: Ավագը դարձել էր կատակերգակ դերասան, կրտսերը՝ օպերային երգիչ և նկարիչ: Երկուսն էլ երկուական որդի ունեն, իսկ կանայք Վրաստանից էին: ԽՍՀՄ փլուզման ժամանակ Մկրտիչը օգտվեց Բուլղարիայում ծնվելու փաստից և Բուլղարիայի քաղաքացիություն ստացավ: Այժմ նրա որդիները՝ Հովհաննեսը և Տիգրանը, ամենահայտնի դերասաններն են Բուլղարիայում, բուլղար երիտասարդության կուռքն են: Սուքիասի կտավները մեծ պահանջարկ ունեն

[428] Տե՛ս Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրության Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2015, համար 3, էջ 33-39:
[429] Տե՛ս Tchilingirian H., նշվ.աշխ., էջ 30-36:

Բուլղարիայում[430]: Բոլոր այս անձիք կարևոր դերակատարություն ունեին և շարունակում են ունենալ հայ-բուլղարական կապերի զարգացման գործում:

2003 թ. Սոֆիայում լույս տեսավ «Մենք» բուլղարահայերեն պատկերազարդ հանդեսը, որը հայկական մշակույթի, պատմության և ավանդույթների համառոտ հանրագիտարան էր ուղղված բուլղար ընթերցողին: Հրատարակությունը իրականացրել էին Հարի Նիկողոսյանը, Վարդանուշ Թոփաքբաշյանը և Անի Աճեմյանը[431]:

Երկրում գործող 6 հայկական եկեղեցի կա, բաց են ազգային հաստատությունները, լույս են տեսնում հայերեն հրատարակություններ[432]:

Անկախության հռչակումից հետո հայկական համայնքը ակտիվորեն սկսեց ներազդել հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների վրա, նպաստելով նրա ամրապնդմանը և զարգացմանը: 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի բուլղարահայ համայնքի հայտնի դեմքերից էր Սևդա Սևանը (Ֆրանսուհի Բախչեջյան): Լինելով գրող Ս. Սևդան տարիներ շարունակ կամուրջ է հանդիսացել Հայաստանի և Բուլղարիայի միջև: Վերջինս ակտիվ հասարակական գործունեություն ծավալեց հատկապես ՀՀ անկախության շրջանում:

Բուլղարիայում Հայաստանի դեսպանատունը սկզբնապես տեղավորված էր Ապրիլի 20-ի փողոցի թիվ 11 շենքի 4-րդ հարկում՝ սովորական մի բնակարանում: Եվ չնայած անձնակազմի փոքրությանը (ժամանակավոր հավատարմատար Սևդա Սևանից բացի աշխատում էին ևս երկու մարդ), այն բավական աշխատանք էր կատարում հայ-բուլղարական միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում: Ինքը՝ Սևդա Սևանը, կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի նախապատրաստության մեջ առավել չափով գնահատում էր արտգործնախարարության և համապատասխան ճյուղային նախարարությունների փորձագետների դերը:

---

[430] Տե՛ս Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2015, համար 3, էջ 33-39:
[431] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, նշվ. աշխ., էջ 135:
[432] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

1990-ական թթ. սկզբին հայկական համայնքը բավական ծանր վիճակում էր գտնվում պայմանավորված Բուլղարիայի ծանր սոցիալ-տնտեսական վիճակով: Ըստ տիկին Սնդա Սևանի, տեղի հայ համայնքը այնքան էլ հարուստ չէ, և միայն երկու բարեգործներ են, որ կարողանում էին օգնել դեսպանատանը, հայ համայնքին: Ի դեպ ըստ հավատարմատարի ձմեռը Հայոց ազգային տունը, ուր տեղավորված էին հայկական բոլոր կազմակերպությունները, չէր ջեռուցվում, համայնքը գնացել էր զոհողության՝ ջեռուցման վարձ մուծելու փոխարեն մուծել էր դեսպանության առաջին քարտուղարի բնակվարձը[433]:

Երկու բարերարները՝ Վազգեն Կարալյանը և տիկին Յուլիա Բերբերյանը (նշանավոր թենիսիստուհին և Կանանց համաբուլղարական միության նախագահը) հիմնականում հոգացել էին դեսպանատան ձեռքբերման, ձևավորման, սարքավորումների տեղադրման ծախսերը[434]:

Աղյուսակ 5: **Ստորև տրված աղյուսակում ցույց է տրվում բուլղարահայ համայնքի հայության թվաքանակը և տեղաբաշխումը ԲՀ քաղաքներում**[435]:

| Երկիրը | Տեղի ընդհանուր բնակչությունը | Հայերի մոտավոր թիվը 2003 թ. | Տոկոսային հարաբերակցությունը |
|---|---|---|---|
| Բուլղարիա | 7.8մլն | 50000 | 0.64 |
| Սոֆիա | 1.0964 | 7000 | 0.64 |
| Բուրգաս | 193.3 | 2000 | 1.04 |
| Պլովդիվ | 340.6 | 9000 | 2.65 |

433 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Բոյանայում» և նրանից դուրս», թիվ 85 (1205), 15 ապրիլի 1995 թ., էջ 1:
434 Տե՛ս նույն տեղում:
435 Տե՛ս Մալխասյան Մ., նշվ. աշխ., էջ 22:

| | | | |
|---|---|---|---|
| Ռուսե | 162.1 | 2000 | 1.24 |
| Վառնա | 314.5 | 5000 | 1.6 |

Արդեն անկախության առաջին ամիսներին բուլղարահայ համայնքը սկսեց ակտիվ գործունեություն ծավալել: Ըստ Բուլղարահայ «Երևան» թերթի հաղորդման 1991 թ. հոկտեմբերի 18-20-ը Բուլղարիայի Վառնա քաղաքում տեղի ունենացավ միջազգային կոնֆերանս «Հայկական ոգու կենսունակությունը» թեմայով: Այն անդրադարձավ հայ մշակույթի դարավոր ընթացքին, նրա ազդեցությանը և կապին համաշխարհային քաղաքականության և այլ ժողովուրդների մշակույթների հետ: Կոնֆերանսը բացի մշակութային հատվածից կարևոր էր նաև այն առումով, որ այստեղ կարևոր քայլեր մշակվեցին երկու ժողովուրդների տնտեսական և առևտրական համագործակցության ուղղությամբ: Կոնֆերանսի կազմակերպական կոմիտեն գլխավորում էր տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարո Մումջյանը: Հրավերներ էին ուղղարկվել բուլղար և հայ գիտնականներին, Էջմիածնի ու Անթիլիասի կաթողիկոսություններին, Վենետիկի Մխիթարյան միաբանությանն ու Մուրադ Ռաֆայելյան դպրոցին, հայ բարեգործական ընդհանուր միությանը[436]:

Արդեն 1992 թ. սկզբին ստեղծվեց ՀՕՄ-ի Բուլղարիայի մասնաճյուղը և Սևդա Սևանը Հայաստան բերեց առաջին օգնությունը ու թեև դա բավական փոքր չափեր ուներ, սակայն առաջին օգնությունն էր անկախությունից հետո, որն ուղարկվում էր Բուլղարիայից[437]:

1992 թ. հունիսի 6-7-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում տեղի ունեցավ Ռումինիայի Հայոց միության համաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին Մոլդովայի, Բուլղարիայի և Հունգարիայի հայ համայնքների ներկայացուցիչներ: Ժողովը քննարկեց հիշյալ երկրների միջև տնտեսական, մշակութային կապերի զարգացմանը, ինչպես նաև` այդ երկրներում ազգային

---

436 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սփյուռքահայ մամուլի էջերից», թիվ 222 (285), 18 հոկտեմբերի 1991 թ., էջ 1:

437 Խոսքը 600 կգ. կաթի փոշու մասին է, որից 100 կգ-ն տրվել է Արարատի շրջանի Նոր Ուղի գյուղի մանկապարտեզին, իսկ 500 կգ. Երևանի 4-րդ մանկական հիվանդանոցին, որի հսկողության տակ էին ՀՀ և Արցախի շաքարախտով հիվանդ բոլոր երեխաները:

փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող մի շարք հարցեր: Ժողովին ներկա էր և ելույթ ունեցավ ՀՀ նախագահի օգնական Վահան Տեր-Ղևոնդյանը[438]:

Ժողովում Հունգարիայի «Արմենիա» Հայոց միությունը, Մոլդովայի Հայոց միությունը, Բուլղարիայի «Երևան» հայոց ընկերակցությունը, Ռումինիայի Հայոց միությունը իրար ճանաչում էին իբրև Հունգարիայի, Մոլդովայի, Բուլղարիայի, Ռումինիայի հայ ազգի փոքրամասնությունների ներկայացուցչական կազմակերպություններ: Այս երկրների հայկական միությունները վերահաստատում էին իրենց լիակատար հավատարմությունը այն ժողովուրդների հանդեպ, որոնց կողքին իրենք ապրում էին: Վերահաստատվում էր նաև այն ցանկությունը, որ գործնականորեն պայքար մղվի հայերով բնակեցված իրենց երկների միջև լավ հարաբերություններ ամրապնդելու համար: Կողմերը առաջարկում էին համագործակցել իրար մեջ և Հայաստանի հետ, տնտեսական ու մշակութային բնագավառներում, նաև միասնական հանդես գալ մարդու իրավունքների և սփյուռքահայության պաշտպանության նպատակով:[439] Փաստաթուղթը Բուլղարիայի համայնքի անունից ստորագրեց «Երևան» Հայոց Ընկերակցության նախագահ Սարգիս Սարգիսյանը[440]:

1994 թ. ապրիլի 27-ին ՀՀ ԱԳ նախարար Վահան Փափազյանը այցելեց Սոֆիա և Պլովդիվ տեղի հայ համայնքների հետ հանդիպումներ ունենալու համար: Սոֆիայում հայկական համայնքի հետ հանդիպման ժամանակ «Երևան» թերթի խմբագիր Կարո Հայրապետյանը կարևորեց երկկողմ հարաբերությունների և շփումների զարգացումը: Պլովդիվում Վ. Փափազյանը եղավ հայերի մշակութային տանը, այն դպրոցում, որտեղ սովորում էին նրանց երեխաները, ինչպես նաև հայկական եկեղեցում: Նախարարը նաև հանդիպում ունեցավ քաղաքի ղեկավարության հետ[441]: Այս պաշտոնյաները հսկայական դերակատարություն ունեին հայ-

---

438 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ համայնքների համաժողովը Բուխարեստում», թիվ 113 (458), 11 հունիսի 1992 թ., էջ 1:
439 Տե՛ս նույն տեղում:
440 Տե՛ս նույն տեղում:
441 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Վահան Փափազյանի հանդիպումները Սոֆիայում և Պլովդիվում», թիվ 79 (943), 28 ապրիլի 1994 թ., էջ 1:

բուլղարական միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում:

Բուլղարահայերը կարևոր պաշտոններ էին զբաղեցնում պետական, արդարադատության, գիտական, մշակութային և լրատվական մարմիններում: Ամբողջ հայ գաղութը բուլղարների հետ համահավասար իրավունքներ ուներ երկրում[442]: Համայնավարական իշխանությունների օրոք հայերն ենթարկվել էին նույն զրկանքներին և հալածանքներին, ինչ բուլղարները[443]:

1995 թ. ապրիլի 12-ին Սոֆիայում տեղի ունեցավ Բուլղարիայում բնակվող Ազգային փոքրամասնությունների միացյալ կոմիտեի մամլո ասուլիսը: Այդ կոմիտեի նախագահ Կարո Հայրապետյանի կարծիքով միջոցառման անցկացման նպատակն էր զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին ծանոթացնել հայերի ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ նախատեսված միջոցառումներին: Ազգային փոքրամասնությունների կազմակերպության մեջ մտնում են հունական, հրեական, հայկական, ռումինական և այլ համայնքների ներկայացուցիչներ:[444] Բուլղարահայերը ակտիվորեն փորձում էին ներազդել բուլղարական իշխանությունների և հասարակության վրա հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում, որը բավական բարդ խնդիր էր, եթե հաշվի առնենք, Բուլղարիայում ապրող թուրքական հոծ համայնքը[445]:

ՀՀ-ի անկախության հռչակումից հետո բուլղարահայ համայնքը սկսեց ավելի կազմակերպված գործել, որը պայմանավորված էր գլխավորապես Բուլղարիայում տեղի ունեցող դրական տեղաշարժերով:

---

[442] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի վարչապետը հայերի մասին», թիվ 16 (1136), 26 յունուար 1995 թ., էջ 1:

[443] Տե՛ս նույն տեղում:

[444] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի ազգային փոքրամասնությունների կոմիտեի նախաձեռնությամբ», թիվ 84 (1204), 14 ապրիլի 1995 թ., էջ 3:

[445] Բուլղարիայիում հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է միայն 2015 թ.: Մանրամասն տե՛ս Parliament Passes Resolution on Armenians' Mass Extermination in Ottoman Empire in 1915-1922 Period, 24.04.2015, http://www.bta.bg/en/c/DF/id/1065011, (17.02.2019):

Բուլղարիայի Հայ առաքելական եկեղեցին, կազմակերպությունները ու մամուլը անվերապահորեն օժանդակում էին Հայաստան համահայկական հիմնադրամի բոլոր ձեռնարկներին: Եռամսյակը մեկ Բուլղարիայի քաղաքներում գործող եկեղեցական վարչությունները ընդունում էին ազգային տուրքի անդամավճար: Բուլղարիայի «Երևան» թերթի տեղեկություններով առաջինը իր ազգային տուրքը վճարել էր 80-ամյա արհեստավոր Օննիկ Թաշճյանը: Նա Սոֆիայի եկեղեցական վարչություն էր հանձնել 3000 լև գումար[446]:

1996 թ. մարտի 1-ին Բուլղարիայի ազատագրման 118-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն էր կազմակերպվել «Հայաստան-Բուլղարիա» ընկերության նախաձեռնությամբ: Հարկ էր նշել, որ այս միջոցառումը առաջին տարին չէ որ իրականացվում էր: Համանման միջոցառումների անցկացման պատճառը երկու ժողովուրդների համատեղ ճակատագիրն էր: Այսպիսի քայլերով համայնքը ավելի էր ամրապնդում երկու ժողովուրդների հարաբերությունները և նոր նախադրյալներ էր ստեղծում երկկողմ միջպետական հարաբերությունների զարգացման համար: Հանդիսության բանախոսները իրենց ելույթներում մեկ անգամ ևս հաստատագրեցին այդ հավերժական հաղթանակի, հավերժական բարեկամության անդառնալիությունը[447]:

Համանման միջոցառում կազակերպվեց նաև նվիրված թուրքական լծից Բուլղարիայի ազատագրման 120-րդ տարեդարձին: Հանդիսությունը կազմակերպվել էր արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական ընկերությանը (ԱՕԿՍ) առընթեր «Հայաստան-Բուլղարիա» ընկերությունը: Բուլղարիայի ազգային տոնին նվիրված հանդիսությանը ելույթ ունեցավ նաև պատմական գիտությունների դոկտոր Ջոհրաբ Ղասաբյանը, ակադեմիկոս, «Հայաստան-Բուլղարիա» ընկերության վարչության անդամ Գևորգ Ղարիբջանյանը, «Հայաստան-Ռումինիա ընկերության նախագահ Հակոբ Առաքելյանը,

---

446 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, ««Հայաստան» հիմնադրամը Բուլղարիայում», թիվ 27 (1465), 13 փետրուար 1996 թ., էջ 1:

447 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղար ժողովրդի հաղթանակը», թիվ 41 (1480), 2 մարտի, 1996 թ., էջ 2:

հայ-բուլղարական համատեղ ձեռնարկության ներկայացուցիչ Անգել Կազանչիևը և ուրիշներ[448]:

Բուլղարիան այն երկրներից էր, որ Հայաստանի տնտեսական ճգնաժամի տարիներին իր դռները հյուրընկալորեն բացեց հայերի առջև:

Հազարավոր հայեր փախչելով տնտեսական դժվարություններից, ցրտից, պատերազմից, մի շարք անհարմարություններից, ապաստան գտան Բուլղարիայում: 1998 թ. ինքը` Բուլղարիան գտնվում էր տնտեսական ճգնաժամի մեջ, դժվարացել էր կյանքը, այն այլևս տաքուկ անկյուն չէր: Այդ տարիներին բազմաթիվ էին վերադառնալ ցանկացողները: Օտարության մեջ գտնվող հայերի համար հայկական դեսպանատունը այն հարազատ անկյունն էր, ուր կարող էին դիմել իրենց հուզող հարցերի պատասխանները ստանալու համար:

1990-ական թթ. արտագաղթողների մի փոքրիկ տոկոսն էր ընդամենը, որ նյութապես ապահովված էր: Բուլղարիա տեղափոխված հայերի գրեթե 90 տոկոսը գտնվում էր նյութական ծանր վիճակում: Դժվարությունները ոչ միայն նյութական էին, այլև կապված էին տեղական իշխանությունների հետ: Սովորաբար Բուլղարիա էին գնում 21 օրվա վիզայով, սակայն մնում էին ամիսներ, նաև` տարիներ: Այդ հանգամանքն առաջացնում էր բազմաթիվ խնդիրներ տեղական իշխանությունների հետ: Նույնիսկ նյութապես ապահովվածներից շատերը տարիների ընթացքում վատնում էին փողերը և սնանկանում[449]:

Այդ տարիներին Բուլղարիա տեղափոխված մարդկանց հոսքի պատճառով որոշակիորեն փոխվեց հայերի նկատմամբ ունեցած բուլղարների դրական վերաբերմունքը: Պատճառը սոցիալական տարբեր շերտերի այնտեղ միաժամանակ հայտնվելն էր: Դրանց մեջ և՛ գողեր, և՛ մարդասպաններ կային, իսկ այդպիսի դեպքերի մասին մամուլի հաղորդումները բացասական կարծիք էին ստեղծում հայերի մասին: Դեսպանության աշխատանքների շնորհիվ

---

[448] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի ազգային տոնը նշվեց նաև Երևանում», թիվ 43 (2000), 6 մարտ 1998 թ., էջ 7:

[449] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիան Ամերիկա չէ, և հայերն այնտեղից կվերադառնան Հայաստան», թիվ 71 (2028), 14 ապրիլ 1998 թ., էջ 3:

բուլղարները ավելի հանդուրժող դարձան, իսկ նման բացասական երևույթները ավելի սակավաթիվ[450]:

ԽՍՀՄ փլուզումից և Վարշավյան դաշինքի անկումից հետո բուլղար ժողովուրդը կողմնորոշվեց դեպի Արևմուտք: 1990-ական թթ. սկզբից երկրում փոխվել էր մոտ մեկ տասնյակ կառավարություն: Սակայն քաղաքական ճգնաժամը հասավ այնպիսի գագաթնակետի, որ այլևս ոչ ոք չէր ուզում իշխանությունն իր ձեռքը վերցնել:

Հայկական դեսպանատունը բացվելուց մի քանի ամիս հետո, շուրջ երկու տարի իշխանության գլխին էր թուրքական կուսակցությունը: Հարկավոր էր դիվանագիտական ճկունություն դրսևորել՝ երկու երկրների միջև տնտեսական և քաղաքական հարաբերություններ զարգացնելու համար[451]:

Բուլղարահայության կյանքում կարևոր իրադարձություն էր Հայաստանի առաջին Հանրապետության 80-ամյակի միջոցառումների իրականացումը: Միջոցառումներն իրականացվեցին 1998 թ. մայիսի 25-29-ը Բուլղարիայի ավելի քան 10 քաղաքներում, որտեղ գոյություն ունեին հայկական գաղութներ և գործում էին հայկական կազմակերպություններ[452]:

Սոֆիայում պաշտոնական տոնակատարությունը կազմակերպված էր համատեղ ԲՀ-ում ՀՀ դեսպանության, Հայ Առաքելական Եկեղեցու Բուլղարիայի թեմի խորհրդի և Բուլղարահայ կազմակերպությունների Համադրիչ խորհրդի կողմից: Հանդիսությանը ներկա էին բուլղարական իշխանությունների ներայացուցիչները[453]:

ՀՀ անունից ներկաներին ողջունեց ԲՀ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատր Ս. Սևանը: Իր խոսքի վերջում նա հրավիրեց հանդիսության մասնակիցներին խոնարհվել բոլոր

[450] Տե՛ս նույն տեղում:
[451] Տե՛ս նույն տեղում:
[452] ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ), Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլն) հայ-բուլղարական փոխհարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ց. 3, գ. 212, թ. 105:
[453] Նույն տեղում:

զոհերի հիշատակին, որոնք իրենց կյանքը դրեցին Հայաստանի անկախության խորանին[454]:

Հատկապես 1990-ական թթ. բուլղարահայությունը լրջագույն խնդիրների առաջ էր: Համակարգի փոփոխության արդյունքում աղքատացած բուլղարահայերն ի վիճակի չեն դեսպանատանն աջակցելու: Միջոցները չէին բավականացնում, որ մյուս համայնքներին հավասար բուլղարահայերը ազգային կյանք կարողանան վայելել: Վերջիններս չէին կարողանում մասնակցել համահայկական ժողովներին: Մշակութային առումով ևս նույն պատճառով միջպետական համագործակցություն չէր իրականացվում: Բայց բուլղարահայ համայնքը, համագործակցելով դեսպանատան հետ, բուլղարացիներին շատ բարձր մակարդակով ներկայացնում էր մեր մշակույթը[455]:

Դժվար էր հայապահպանության աշխատանք տանել մի երկրում, որտեղ հայերը ցրված էին 15 քաղաքներում: Եվ հատուկ թաղամասերում չէին ապրում, ինչպես ասենք, Մերձավոր Արևելքում: 1990-ական թթ. դեսպանի խոսքերով. «դժվար էր օրինակ, աշակերտ հավաքել: Եթե միջոցներ լինեին, ապա 1-2 ավտոբուս ձեռք կբերվեր աշակերտներին հավաքելու համար: Սոֆիայում եղած միակ հայկական եկեղեցին, որ միշտ մարդաշատ է, գործում է առանց գմբեթի (փլվել է): Ազգային տան շենքի առաջինն հարկում մի բնակարան ևս աշխատում էր որպես եկեղեցի»[456]:

Բուլղարահայերը տարիների ընթացքում ձեռք էին բերել ու վայելում էին տեղի ազգաբնակչության հարգանքը և լիիրավ կերպով օգտվում էին երկրի քաղաքացիների համար սահմանված իրավունքներից[457]:

Ամենամեծ հայկական գաղթօջախը Պլովդիվում էր, որտեղ բնակվում էին 6000 հայեր (ԲՀ քաղաքացի) այնուհետև՝ Սոֆիան՝ 3200 հայ, Վառնան՝ 2800, Ռուսեն՝ 2000, Բուրգաս՝ 1700 և այլ

---

454 Նույն տեղում:

455 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարահայը կարող է օրինակ դառնալ ուրիշ համայնքների համար», թիվ 164 (3297), 4 սեպտեմբերի 2003, էջ 5:

456 Տե՛ս նույն տեղում:

457 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիայի Հանրապետություն», թիվ 166 (3299), 6 սեպտեմբերի 2003, էջ 1,4:

բնակավայրեր: Հայ համայնքը բազմաշերտ էր՝ կային արհեստավորներ, ծառայողներ, մտավորականներ և այլն[458]:

Հայերը մասնակցում էին նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Կային բազմաթիվ հայեր, որոնք ղեկավար դիրքեր էին գրավում տեղական կամ հանրապետական նշանակության կառավարման մարմիններում: ԲՀ ժողովրդական ժողովում բուլղարա-հայկական բարեկամության խորհրդարանական խմբի նախագահն էր ԲՀ ժողովրդական ժողովի պատգամավոր Յու. Բերբերյանը (իշխող ՍԴՍ կազմակերպությունից)[459]:

Բուլղարահայերի մեծամասնությունն ընդգրկված էին ազգային հասարակական-մշակութային հաստատություններում և կազմակերպություններում: Եկեղեցական կյանքը ղեկավարվում էր թեմական խորհրդի կողմից: Հոգևոր թեմի առաջնորդն էր գրշն. Տիրայր արք. Մարտիկյանը: Համարյա բոլոր հայաբնակ քաղաքներում, որտեղ գործում էին եկեղեցիները, կան եկեղեցական հոգաբարձություններ: Բուլղարիայում գերիշխողը Հայ առաքելական եկեղեցին էր, բայց կան նաև փաքրաքանակ հայ ավետարանական համայնքներ, մասնավորապես Սոֆիայում, Պլովդիվում և Վառնայում[460]:

Համայնքում գործում էին բազմաթիվ կազմակերպություններ ու միություններ: Դպրոցական հոգաբարձություններ են գործում այն քաղաքներում, որտեղ դասավանդվում է հայերեն (բուլղարական դպրոցներում) կամ գործում են հայկական կիրակնօրյա դպրոցներ: Սոֆիայում է գտնվում Վ. Սարոյանի անվան դպրոցը, որն ուներ փոքրաթիվ հայ աշակերտներ[461]:

Հայկական մշակույթի պահպանման ու տարածման համար համայնքում հայտնի էին «Գրիգոր Գրիգորով» երքչախումբը (ք. Սոֆիա), «Էրեբունի» վոկալ-գործիքային էստրադային համույթը (ք. Պլովդիվ), «Մարաշյան» հայկական պարի խումբը «ք. Վառնա» և սիրողական «Սունդուկյան» թատրոնը: Հ.Մ.Ը.Մ-ն աշխատանքներ էր ծավալել հայ պատանիների մարմնամարզական և հայրենասիրական

---

458 Տե՛ս նույն տեղում:
459 Տե՛ս նույն տեղում:
460 Տե՛ս նույն տեղում:
461 Տե՛ս նույն տեղում:

ոգով դաստիարակման ուղղությամբ, իսկ «Համազգային» միության շրջանակում ստեղծվել էր «Արևիկ» պարի խումբը[462]:

Բուլղարիայում գտնվող ՀՀ քաղաքացիները ունեին մի շարք խնդիրներ: Այդ խնդիրները հիմնականում կապված էին անձնագրերի հետ, հատկապես երիտասարդների, որոնք զորակոչային տարիքից բխող խնդիրներ ունեին: Կային խնդիրներ, որոնք առնչվում էին Բուլղարիայի օրենսդրությանը: Դրանք վերաբերում էին կեցությանը, վիզային ռեժիմի հեշտացմանը: ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի խոսքերով, թեև ցանկություն կա այդ խնդիրները լուծել, սակայն չպետք է մոռանալ, որ Բուլղարիան Եվրոմիության գոտուն էր պատկանում և այստեղ մի շարք սահմանափակումներ կային[463]:

Բուլղարիայի հայ համայնքը նշանակալի դեր էր խաղում նրա հասարակական-քաղաքական ու հոգևոր կյանքում՝ իր ավանդը ներդնելով երկու երկրների միջև կապերի խորացման գործում[464]:

2005 թ. հունիսի 2-5-ը ԲՀ գտնվող ՀՀ ԿԳ նախարարի պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ ու քննարկվեցին նրա հիմնախնդիրները: Լինելով Պլովդիվ քաղաքում՝ պատվիրակությունը եղավ Վիկտորիա և Գրիգոր Թութունջյան դպրոցում, որտեղ 1-8-րդ դասարաններում հայերենի ուսուցումը պարտադիր էր: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ինչպես աշակերտության, այնպես էլ ուսուցիչների հետ, որոնց համար Հայաստանին վերաբերող գրեթե ամեն ինչ հետաքրքիր էր: Դա էր պատճառը, որ բազմաթիվ հարցադրումներ հնչեցին, որոնք առնչվում էին Հայաստանի կրթական համակարգին: Հանդիպման ընթացքում նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել Բուլղարիայի հայկական դպրոցների շրջանավարտներին Եվրասիա համալսարանում անվճար ուսուցման տարեկան երկու նպատակային տեղ հատկացնելու

---

[462] Տե՛ս նույն տեղում:
[463] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը քայլ առ քայլ հաղթահարում է դժվարությունները», թիվ 168 (3301), 10 սեպտեմբերի 2003, էջ 1,2:
[464] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Մենք գտնվում ենք բուլղարա-հայկական հարաբերությունների աշխուժացման փուլում», թիվ 176 (3555), 5 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

համար[465]: Պատվիրակությունը Պլովդիվում հանդիպեց նաև հայ համայնքի ներկայացուցիչներին, այցելեց Ագրարային համալսարան, ծանոթացավ հին քաղաքին[466]:

Այսպիսով՝ բուլղարահայ համայնքը հսկայական դեր էր խաղում Հայաստանի և Բուլղարիայի հարաբերություններում՝ նպաստելով երկու երկրների մերձեցմանը, միջպետական շփումներին, տնտեսական հարաբերությունների խորացմանը: Ունենալով մի շարք կառույցներ բուլղարահայ համայնքը էական դեր էր կատարում տարածաշրջանի այլ երկրներում ապրող հայերի կազմակերպական խնդիրները կարգավորելիս: Պարբերաբար Բուլղարիայի տարբեր քաղաքներում հայկական կառույցները համաժողովներ էին հրավիրում: Լինելով Բուլղարիայում ապրող հնագույն համայնքներից՝ Բուլղարահայերը մասնակցում էին երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտական, կրթական կյանքին, իրենց նպաստն էին ներդնում Բուլղարիայի զարգացման գործում: Արձանագրված հաջողություններին զուգահեռ կային նաև մի շարք խնդիրներ, որոնք լուծումներ էին պահանջում: Բուլղարահայությունը իր վրա էր կրում տեղի սոցիալական խնդիրները և ստիպված էր պայքար մղել Բուլղարիայում ապրող հսկայածավալ թուրքական համայնքի դեմ, որը հսկայական գործունեություն էր ծավալում: Հայության առջև ծառացած քաղաքական խնդիրներից էր հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը Բուլղարիայում և բնակչության շրջանում դրա մասին տեղեկացվածության ապահովումը: Ցավոք, սոցիալական խնդիրները, որոնք առկա էին Բուլղարիայում վնասում էին հայկական համայնքի ամբողջականության պահպանմանը և պատճառ էին դառնում տեղի հայության այլ երկրներ տեղափոխվելուն:

[465] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 45:
[466] Նույն տեղում:

## 3.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Հայ-բուլղարական շփումների կարևոր ոլորտներից էին մշակույթը, գիտությունն ու կրթությունը: Տարբեր պատմափուլերում հարաբերվելով միմյանց հետ այս ոլորտները հանդիսացել էին երկու ժողովուրդների միավորման հիմնական գրավականները: Կարող ենք փաստել, որ նախկինում երբ Հայաստանում գրեթե բացակայում էին բուլղարական մշակույթին վերաբերող հաստատությունները, քիչ էին Հայաստանում ուսումնառությունը իրականացնող բուլղար ուսանողները, գիտական կապերը բավական թույլ էին: Սակայն հակառակ

ուղղությամբ կա որոշակի ակտիվություն, որը պայմանավորված էր Բուլղարիայում հայկական համայնքի առկայության և ակտիվության, Բուլղարիայում կրթական հաստատությունների ավելի բարձր վարկանիշի, իսկ վերջին տարիներին նաև եվրոպական կրթական արժեքների հաստատման հետ:

Չնայած 1990-ական թթ. սկզբին Բուլղարիայում կար տնտեսական ճգնաժամ, սակայն այդ երկիրն ու նրա մայրաքաղաքը չէին կորցրել տարածաշրջանային գիտամշակութային և կազմակերպական կենտրոնի նշանակությունը: Բուլղարիայում տասնյակ հազարավոր ուսանողներ էին սովորում, միջազգային ու տարածաշրջանային կենտրոնակայաններ կային, խոշոր ու բարձր մակարդակի համաժողովների անցկացման համար հարմարավետ շինություններ[467]:

Հայ-բուլղարական կրթական կապերը դեռևս վաղ անցյալում ակտիվ էին: 1903 թ. հունվարի 1-ի դրությամբ Բուլղարիայում գործում էին 10 հայկական տարրական դպրոց վարժարաններ՝ 947 աշակերտներով և 33 ուսուցիչներով[468]: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Բուլղարիայում գործում էին մի քանի հայկական կիսապրոֆեսիոնալ թատերական խմբեր, որոնցից առանձնանում էին Պապայանի «Վեսելո» խումբը, «Նադեժդա» խումբը՝ Ծավարշի գլխավորությամբ[469]: Հետագա տասնամյակներում Բուլղարիայում շարունակվեց ակտիվ մշակութային ու կրթական քաղաքականությունը հայերի մասնակցությամբ, սակայն դրանք չէին կրում երկկողմ բնույթ և գերազանցապես իրականացվում էին տեղի հայության ջանքերի շնորհիվ:

Հետխորհրդային տարիներին հայ-բուլղարական մշակութային կյանքում սկսվեց նկատվել որոշակի ակտիվություն, որը պայմանավորված էր երկկողմ դիվանագիտական ու քաղաքական շփումներով: 1991 թ. Բուլղարիայում սկսեց լույս տեսնել «Ամեն կիրակի» հանդեսը, որը կրում էր այդ տարիներին Բուլղարիայում ամենահանրաճանաչ հեռուստատեսային ծրագրերից մեկի անունը: Ամսագրի խմբագիրն էր նշված հեռուստահաղորդման հեղինակ

---

[467] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ-բուլղարական կապերը նոր մակարդակի», թիվ 79 (1199), 9 ապրիլի 1995 թ., էջ 1:

[468] Տե՛ս Ղասաբյան Հ., նշվ. աշխ., էջ 189:

[469] Տե՛ս նույն տեղում, էջ 204:

Գևորգ Գևորգյանը[470]: Այդ տարիներին հանդեսը համարվում էր ամենափնտրվողը ողջ Բուլղարիայում: Սակայն այս հանդեսը հազվադեպ էր նյութեր հրապարակում հայության և հայ-բուլղարական հարաբերությունների մասին, քանզի այդ շրջանում երկկողմ հարաբերությունները չունեին զարգացման տեմպեր, իսկ հայությունը նոր-նոր էր փորձում ինքնակազմակերպվել Բուլղարիայում՝ փորձելով հարմարվել առկա հասարակական-քաղաքական պայմաններին:

1993 թ. մայիսի 6-ին արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և համագործակցության հայկական ընկերության շենքում, տեղի ունեցավ Հայաստան-Բուլղարիա ընկերության ներկայացումը: Ընկերության վարչության նախագահին էր Երևանի Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի դոցենտ Էդուարդ Գրիգորյանը: Նախկին սովետա-բուլղարական ընկերության փոխարեն ստեղծված նոր ընկերության նպատակը գիտական, մշակութային, առևտրատնտեսական ոլորտների համագործակցության, հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության ամրապնդումն էր:[471]

Կարևոր էր նաև ՀՀ և ԲՀ կառավարությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին պայմանագրի իններորդ հոդվածը, որով սահմանվում էր, որ կողմերը անհրաժեշտ պայմաններ կապահովեն և համապատասխան միջոցներ կձեռնարկեն ՀՀ մշտապես բնակվող ազգությամբ բուլղարացի և ԲՀ-ում մշտապես բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների էթնիկական, լեզվական, մշակութային և կրոնական ինքնօրինակության ուսումնասիրության, պահպանման և զարգացման ուղղությամբ՝ միջազգային իրավունքի նորմերին և կողմերի ներքին օրենսդրությանը համապատասխան[472]: Նույն պայմանագրի 15 և 17-րդ հոդվածներով սահմանվում էին, որ կողմերը կնպաստեն համագործակցության զարգացմանը հիմնարար և

[470] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարական թերթերից», թիվ 4 (67), 6 հունվարի 1991 թ., էջ 3:

[471] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար», թիվ 89 (693), 7 մայիսի 1993 թ., էջ 4:

[472] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995, նշվ.աշխ., էջ 481:

կիրառական գիտությունների, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բնագավառներում: Կողմերը պայմանավորվում էին խրախուսել երկու երկրների գիտությունների ակադեմիաների, գիտահետազոտական ինստիտուտների, գիտաարտադրական միավորումների, գիտնականների և հետազոտողների միջև անմիջական կապերի զարգացումը և միմյանց կաջակցեն տարբեր բնագավառներում մասնագետների պատրաստման գործում: Պայմանավորվածություն էր ձեռք բերվել նաև նպաստելու իրենց ժողովուրդների միջև ավանդական կապերի զարգացմանը համապատասխան պայմանագրերի և ծրագրերի հիման վրա՝ մշակույթի, գիտության, կրթության և զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում: Սահմանվում էր, որ կողմերը իրենց քաղաքացիների համար կապահովեն մյուս կողմի մշակույթի, արվեստի ստեղծագործությունների և գրականության մատչելիությունը և այդ նպատակով կաջակցեն պետական, հասարակական և անհատական նախաձեռնություններին[473]:

Հայ և բուլղար հասարակական-քաղաքական և գիտական հասարակայնության շփումները ևս բազմաթիվ են եղել: Դրա ապացույցներից է Աթենքում ՆԱՏՕ-ի գիտական հանձնախմբի և Արևելյան Եվրոպայի երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած գիտական-քաղաքական համաժողովը, որին մասնակցում էին նաև Հայաստանի և Բուլղարիայի ներկայացուցիչները: Աթենքի քիմիական արդյունաբերության բաժանմունքի կողմից կազմակերպված համաժողովում մասնակցեցին և գիտական ուսումնասիրություններ ներկայացրեցին նաև հայ և բուլղար գիտնականները[474]:

Հայաստանի և Բուլղարիայի միջև կարևոր էր 2000-2002 թթ. մշակույթի, կրթության և գիտության բնագավառում համագործակցության ծրագրի ստորագրումը: Կողմերը դա գնահատում էին որպես կարևոր քայլ մշակույթի, կրթության և գիտության բնագավառում ուղղակի շփումների և տեղեկատվության փոխանակման համար որպես ներդրում երկու ժողովուրդների միջև

---

473 Տե՛ս նույն տեղում, էջ 482-483:

474 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը մասնակցում է քաղաքական համաժողովի», թիվ 248 (1112), 21 դեկտեմբերի 1994 թ., էջ 1:

ավանդական կապերի խորացման մեջ[475]: Այս ծրագրի շրջանականերում 2000 թ. փետրվարին Սոֆիայում կազմակերպվեց Հայաստանի ժողարվեստի պետական թանգարանի ցուցահանդեսը[476]:

Բուլղարիայի հետ կրթության և գիտության բնագավառում համագործակցության ակտիվացման նպատակով 2006 թ. հունիսին Սոֆիայում էր գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարարը[477]:

Անկախության հռչակումից հետո բազմաթիվ էին հայ-բուլղարական գրական կապերը: Այս ուղղությամբ հատկապես կարևոր էին գրահրատարակչության, թարգմանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները: Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում «Սվետլինա» գրադարանի մակնիշով Հայկական բարեգործական ընդհանուր միության «Բարեգործական» հրատարակչությունը բուլղարերեն լույս ընծայեց նշանավոր հայ գրող Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» հայտնի վեպը: Թարգմանությունը բնագրից կատարել էր բուլղարահայ ճանաչված թարգմանիչ և լրագրող Հակոբ Օրմանջյանը, որը երկար տարիներ եղել էր բուլղարահայոց «Երևան» մշակութային միության «Երևան» լրագրի գլխավոր խմբագիրը[478]:

2004 թ. Հակոբ Օրմանջյանը լույս ընծայեց Մարտիրոս Սարյանի «Արևը շողում է բոլորիս համար» ժողովածուն: Այն ամփոփում էր մեծանուն նկարչի մտորումները, տպավորությունները, գնահատականները գրականության, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության ոլորտում վաղ շրջանից մինչև XX դար[479]:

Հակոբ Օրմանջյանը մեծ վաստակ ունի հայ գրականության լավագույն ստեղծագործությունները բուլղարերեն թարգմանելու գործում: 1973 թ.-ից սկսած նա բուլղարերեն էր թարգմանել և

---

475 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության նախագահների համատեղ հայտարարությունը», թիվ 235 (2449), 2 դեկտեմբերի 1999, էջ 2:

476 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 1, գ. 20, թ. 9:

477 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթեթր, «Դիվանագիտական տարի. Հայաստանի արտաքին քաղաքականությունը 2005 թվականին», թիվ 2 (3858), 11 հունվարի 2006 թ., էջ 3-5:

478 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» բուլղարերեն», թիվ 191 (2876), 21 հոկտեմբերի 2003 թ., էջ 6:

479 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Մարտիրոս Սարյան. «Արեվը շողում է բոլորիս համար» ժողովածու»՝ բուլղարերեն», թիվ 6 (2931), 20 հունվարի 2004 թ., էջ 6:

Սոֆիայում, Պլովդիվում ու Վառնայում հրատարակել դասական և ժամանակակից հայ գրողների շուրջ երեք տասնյակ ստեղծագործություններ: Դրանց թվում են Րաֆֆու «Սամվելը», Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմությունը», Գուրգեն Մահարու «Երիտասարդության սեմին» եռագրությունը, Սերո Խանզադյանի, Վահագն Գրիգորյանի, Աղասի Այվազյանի ու այլ գրողների գործերը[480]:

Հ. Օրմանջյանն ու նրա դուստր Գայանեն բուլղարական «Օտեչեստվո» հրատարակչությամբ լույս էին ընծայել Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի և Ավետիք Իսահակյանի հեքիաթների ընտրանին բուլղարերեն թարգմանությամբ: «Քաջ Նազար» խորագրով տպագրված այդ պատկերազարդ ժողովածուի մեջ տրված էին հեղինակների հակիրճ կենսագրությունները: 1975 թ. Սոֆիայում հրատարակվել էր Հ. Օրմանջյանի և լրագրող Կ. Հայրապետյանի կազմած ու թարգմանած «Հայկական պատմվածքներ ու նովելներ» ժողովածուն, որի մեջ ընդգրկված էին 53 հայ գրողների գործեր (Րաֆֆի, Շիրվանզադե, Ե. Օտյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան և այլն): Քսան հազար տպաքանակով լույս տեսած այդ գիրքը լավ ընդունելության արժանացրին ընթերցողները[481]:

Հ. Օրմանջյանը եղել է «Զեմլեդելչեսկա զնամյա» կենտրոնական թերթի հատուկ թղթակիցը: Նա ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից Բալկանների միջազգային վավերագրական կենտրոնի գլխավոր մասնագետներից էր: Այդ կենտրոնի առաջադրանքով նա կազմել, գրաբարից բուլղարերեն թարգմանել և լույս էր ընծայել «Հայ ճանապարհորդները Բալկանների մասին (17-19-րդ դդ.)» արժեքավոր ժողովածուն, որի մեջ տեղ էին գտել նյութեր՝ քաղված Սիմեոն Լեհացու ուղեգրություններից, Հովհ. Թովմաճյանի պատմությունից, Ղուկաս Ինճիճյանի, Ստ. Գյուվեր Ագոնցի աշխարհագրական երկերից ու Մինաս Բժշկյանի «ճանապարհորդությունից»[482]:

---

480 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» բուլղարերեն», թիվ 191 (2876), 21 հոկտեմբերի 2003 թ., էջ 6:
481 Տե՛ս նույն տեղում:
482 Տե՛ս նույն տեղում:

Հ. Օրմանջյանը վաղուց ցանկություն ուներ «Հայ ժողովրդի պատմությունը», որ հրատարակել էր Երևանի համալսարանը, ներկայացնել բուլղար ընթերցողներին: Այդ կապակցությամբ նա դիմել էր այդ գրքի գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին, որը նրան խորհուրդ էր տվել թարգմանությունը կատարել գրքի երկրորդ, լրացված հրատարակությունից: Թարգմանիչը լավ գիտեր, որ գրքի հեղինակները խորհրդային ժամանակաշրջանի պատմությունը չէին կարող ճշմարիտ կերպով շարադրել, ուստի Մ. Ներսիսյանի համաձայնությամբ նա գրքի այդ մասերն ամբողջովին բաց է թողել՝ սահմանափակվելով միայն Հայաստանի առաջին հանրապետության պատմությամբ: Թարգմանությունն իրականացնելիս նա մեջբերումներ էր կատարել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքից, որի մեջ արժեքավոր տեղեկություններ կային բուլղարների նախնիների մասին: Քաղվածքներ էին կատարված նաև Սեբեոսի, Ղևոնդի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի և միջնադարյան այլ հեղինակների գործերից: Այդ լրացումներն ավելի են բարձրացնում թարգմանության արժեքը և հետաքրքրական դարձնում այն բուլղար ընթերցողների համար: Արժե նշել, որ Պլովդիվի բարեգործական ընկերության, ինչպես նաև Արմեն Արսենյանի (ԱՄՆ) և Եղիազար Ուզունյանի (Պլովդիվ) նյութական աջակցությամբ հրատարակված այդ գրքի տպաքանակն անմիջապես վաճառվել էր՝ նյութական շահ բերելով հրատարակողներին:

Ի գնահատություն թարգմանական արվեստի մեջ նրա ակնառու ծառայությունների, Բուլղարական Ժողովրդական Հանրապետության պետական խորհուրդը Հ. Օրմանջյանին պարգևատրել էր «Կիրիլ և Մեթոդի» առաջին աստիճանի շքանշանով[483]:

2003 թ. սեպտեմբերի 1-ից Բուլղարիայում գործում էր Հայաստանի ազգային պատկերասրահից բերված հավաքածուի ցուցադրություն, որը կազմակերպվել էր երկու երկրների՝ մշակույթի հարցերով զբաղվող գերատեսչությունների և Բուլղարիայում Հայաստանի դեսպանության ջանքերով: Հարկ է

[483] Տե՛ս նույն տեղում:

նշել, որ այդ ցուցադրության այցելողների հիմնական մասը բուլղարացիներ էին[484]:

2003 թ. սեպտեմբերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Բուլղարիա կատարած պաշտոնական այցի ընթացքում ստորագրվել էր «ՀՀ կառավարության և Բուլղարիայի հանրապետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը»[485]: Որոշումը ՀՀ ԱԺ-ն վավերացրել է 2004 թ. փետրվարի 18-ին[486]: Այստեղ նշվում էր նաև երկուստեք ոլորտի ուսանողների փոխանակման, կրթական կապերի ամրապնդման մասին:

Համագործակցության եզրերը հստակեցնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարար Նորայր Դավիդյանի հրավերով Հայաստան այցելեցին Բուլղարիայի նախարարը և խորհրդարանի ներկայացուցիչ Նատալի Եֆրոմովան[487]:

«Մեր երկրների կառավարությունների միջև կնքված համաձայնագիրը վերաբերում է երկու երկրների բոլոր քաղաքացիներին: Նախարարը մեզ ծանոթացրեց Հայաստանի առողջապահության ոլորտում վերջին տարիներին իրականացված բարեփոխումներին, խնդիրներին: Պետք է ասեմ, որ մեր խնդիրները բավական նման են»,- ասաց բուլղար նախարարը[488]:

Բուլղարիայում հիվանդանոցները հիմնականում մասնավոր սեփականություն են, սակայն զուրկ չեն պետության աջակցությունից: Այդ ընթացքում սեփականաշնորհվել են նաև պոլիկլինիկաները: Սակայն դա չի նշանակում, թե բժշկական ծառայությունները բնակչության լայն շերտերին հասանելի չէին: Երկրում արդեն յոթ տարի էր, ինչ գործում էր բժշկական պարտադիր ապահովագրությունը: Բնակչության 45 տոկոսի, այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաների, մինչև 25 տարեկան ուսանողների, թոշակառուների, զինծառայողների, հաշմանդամների և սոցիալ ապես

---

[484] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հայաստանը քայլ առ քայլ հաղթահարում է դժվարությունները», թիվ 168 (3301), 10 սեպտեմբերի 2003, էջ 1,2:

[485] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Իսկ Բուլղարիայում բժշկական մասնավոր բուհերի պահանջարկ չկա», թիվ 52 (3668), 24 մարտ 2005, էջ 4:

[486] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի որոշումը ՀՀ կառավարության և ԲՀ կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը վավերացնելու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=24041, 02.02.2019:

[487] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Իսկ Բուլղարիայում բժշկական մասնավոր բուհերի պահանջարկ չկա», թիվ 52 (3668), 24 մարտ 2005, էջ 4:

[488] Տե՛ս նույն տեղում:

անապահովների ապահովագրական վճարները կատարում էր պետությունը: Մյուսներից գանձվում էր եկամտի 6 տոկոսը, որի 70 տոկոսը փակում էր գործատուն, իսկ 30 տոկոսը՝ քաղաքացին[489]:

Եթե 1990-ական թթ. վերջին Բուլղարիայում բժիշկը ստանում էր մոտ 200 եվրոյին համարժեք գումար, ապա 2005 թ. դրությամբ պոլիկլինիկաներում աշխատող բժիշկը ստանում է 500 և ավելի, իսկ հիվանդանոցում աշխատողը՝ 400 և ավելի եվրո: Բուժաշխատողների միջին աշխատավարձը կազմում էր 200 եվրո[490]:

Երկու երկրների առողջապահության ոլորտի պատասխանատուները եղել էին Երևանի պետական բժշկական համալսարանում, առողջապահության ազգային ինստիտուտում, արյունաբերական կենտրոնում, առաջատար մի շարք կլինիկաներում[491]:

Նախատեսվում էին մասնագետների, ուսանողների փոխանակումներ, ուսումնական, գիտական համատեղ ծրագրեր, համագործակցություն վարակիչ հիվանդությունների կանխարգելման և շրջակա միջավայրի պահպանության, դեղաքաղաքականության և այլ ոլորտներում: Երկուստեք կարևորվում էին համանման կլինիկաների ուղիղ կապերը: Հավանաբար կսկսենք արյունաբանական կենտրոններից[492]:

Համաձայնագրում հետաքրքիր մի կետ կար, որ կարող է նպաստել նաև տուրիզմի զարգացմանը: Խոսքը երկու երկրներում միմյանց քաղաքացիներին անվճար շտապ բուժօգնության ապահովումն էր»,- ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը[493]:

2004 թ. ՀՀ ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանի այցի ընթացքում նշվեց Սոֆիայում և Երևանում մշակութային կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը: Կարևորվեց Բուլղարիայի փորձի օգտագործումը եվրաինտեգրման ճանապարհին: Փոխադարձ համաձայնությամբ որոշվեց զարգացնել նաև համագործակցությունը երկու երկրների տարածաշրջանների միջև՝

---

489 Տե՛ս նույն տեղում:
490 Տե՛ս նույն տեղում:
491 Տե՛ս նույն տեղում:
492 Տե՛ս նույն տեղում:
493 Տե՛ս նույն տեղում:

սկսելով Պլովդիվ և Գյումրի քաղաքներից[494]: Որոշվեց Սոֆիայի համալսարանում բացել հայագիտության ամբիոն[495]:

Պլովդիվում՝ Հինդլիյանների տանը Պլովդիվի համայնքի և ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի միջև բարեկամական կապերի և համագործակցության մասին համաձայնագիր ստորագրվեց: Բուլղարական կողմից համաձայնագիրը ստորագրեց Պլովդիվի քաղաքապետ Իվան Չոմակովը, հայկական կողմից՝ Գյումրիի քաղաքապետՎարդան Ղուկասյանը:

Ըստ համաձայնագրի Գյումրին և Պլովդիվը դարձան քույր քաղաքներ և պարտավորվեցին համագործակցության զարգացման անհրաժեշտ պայմաններ ստեղծել՝ առաջնորդվելով 2 երկրների օրենսդրություններով, հավասարության, գործընկերության և փոխշահավետության սկզբունքներով[496]:

2004 թ. ԲՀ նախագահի Հայաստան այցի շրջանակներում «ԲՏԱ» պետական լրատվական գործակալության գլխավոր տնօրեն Մաքսիմ Մինչևը պայմանագիր ստորագրեց «Արմենպրեսի» տնօրեն Հրայն Զորյանի հետ: Այդ համաձայնագիրը հնարավորություն էր տալիս կողմերին առաջին ձեռքից ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Հ. Զորյանը, կարևորելով լրատվական գործակալությունների միջև նման համաձայնագրի ստորագրումը, հույս հայտնեց, որ այն կնպաստի երկու ընկերությունների միջև հետագա փոխգործակցության զարգացմանը, կկատարվի փորձի փոխանակում, կիրականացվի համատեղ նախագծեր, տեխնիկական աջակցություն, աշխատակիցների վերապատրաստման ծրագրեր[497]:

2004 թ. ԲՀ նախագահը այցի ընթացքում եղավ մի շարք մշակութային, կրթական հաստատություններում, ինչպես նաև Ծիծեռնակաբերդում: Այստեղ նա ծանոթացավ Հայոց ցեղասպանության պատմությանը, մեկ րոպե լռությամբ հարգեց զոհերի հիշատակը ու նշեց, որ Բուլղարիան հայոց ողբերգության

494 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Սկսվել է ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի պաշտոնական այցը Բուլղարիա», թիվ 119 (3498), 30 հունիսի 2004, էջ 1:

495 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Հանդիպում Բուլղարիայի նախագահի հետ», թիվ 120 (3499), 1 հուլիսի 2004, էջ 1:

496 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Համաձայնագիր քաղաքների միջև», թիվ 120 (3499), 1 հուլիսի 2004, էջ 1,2:

497 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Համաձայնագիր պետական լրատվական գործակալությունների միջև», թիվ 177 (3556), 6 հոկտեմբերի 2004, էջ 3:

ցավակից է եղել առաջին իսկ օրերց և բազմաթիվ փախստականների ապաստան է տվել[498]:

Երևանի պետական համալսարանում հանդիպելով ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին Գ. Պրվանովը նշեց. «Մեր երկու ժողովուրդները միասին ապրել են, տառապել կիսելով ուրախություն և վիշտ: Մենք երբեք չենք պատերազմել, ոչ էլ մեր ժողովուրդներն են բախվել որևէ առիթով»: Սակայն Բուլղարիայի նախագահին մտահոգում էր, որ շատ չեն այն երիտասարդները իրենց երկրում, որոնք ծանոթ էին հայ ժողովրդին, նրա պատմությանն ու մշակույթին, ինչպես նաև հայ երիտասարդությունը քիչ բան գիտի բարեկամ բուլղար ժողովրդի մասին[499]:

Բուլղարիայի նախագահին ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը շնորհեց բուհի պատվավոր դոկտորի կոչում[500]: ԵՊՀ-ում Բուլղարիայի նախագահը հիշեց Պ. Յավորովի «Հայեր» բանաստեղծության բովանդակությունը հայ-բուլղարական բարեկամության մասին և շեշտեց, որ բանաստեղծի այդ կարծիքը կիսում է Բուլղարիայի հանրության մեծ մասը[501]:

Գ. Պրվանովը եղավ նաև Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում և Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանից ստացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից հրատարակած «Ճարտարապետության հուշարձանները Խորհրդային Հայաստանում» ռուսերեն և Մատենադարանի հրատարակած «Արհեստն ու կենցաղը հայկական մանրանկարներում» հայերեն գրքերը[502]:

Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը իր տպավորությունների մասին Մատենադարան ինստիտուտի հուշամատյանում գրեց. «Զարմանքով տպավորված եմ թանգարանային հավաքածուի բացառիկ հարստությամբ և առաջին հերթին հին հայկական ձեռագրի դպրոցով: Այստեղ մարդ կարող է լավագույնս

---

498 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդ, ԵՊՀ…», թիվ 178 (3557), 7 հոկտեմբերի 2004, էջ 1,2:
499 Տե՛ս նույն տեղում:
500 Տե՛ս նույն տեղում:
501 Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, «Գնալ զիջումների՝ ինքնությունը չկորցնելով», https://www.aravot.am/2004/10/07/318804/,(16.01.2019):
502 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդ, ԵՊՀ…», թիվ 178 (3557), 7 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

գիտակցել, որ հայկական մշակույթը եվրոպական քաղաքակրթության սյուներից մեկն է»[503]:

Բուլղարիայի նախագահի հետ Մատենադարան էր այցելել նաև Սոֆիայի Ազգային գրադարանի տնօրեն, պրոֆեսոր Բորյոնա Խրեստովան: Նա իրենց գրադարանի կողմից որպես նվեր Հայաստան բերեցին Բուլղարիայում 10-18-րդ դդ. հրատարակված բուլղարական մի շարք գրքերի և միջնադարյան ձեռագրերի, ինչպես նաև 10-րդ դարի հայկական մի ձեռագրի, միջնադարյան Հայաստանի արվեստի և մշակույթի մասին պատմող գրքերի, 20-րդ դարասկզբին Բուլղարիայում հրատարակված հայատառ պարբերականների կրկնօրինակները, նաև միջնադարյան հայկական երգերի ձայնասկավառակներ և այլ արժեքավոր նմուշներ[504]:

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունը հին պատմություն ունի, երբ եղեռնական 1915 թ. Բուլղարիան իր դռները բացեց 50 000 հայ գաղթականներ առջև, այս ժողովրդի մեծ զավակները և հատկապես Պեյո Յավորովը աշխարհի բողոքի ձայներին միացրին և բուլղար մտավորականների ազատության պայքարի կոչերը: Մեծ բանաստեղծը մեզ հարազատ էր իր հայտնի «Հայերը» բանաստեղծությամբ, որը բազմիցս թարգմանվել է հայ դասականների կողմից[505]:

1966 թ. Երևանի թիվ 131 դպրոցն անվանվեց Պեյո Յավորովի[506] անունով, որի առջև գտնվող բանաստեղծի հուշարձանի դիմաց ծաղկեփնջեր դրեցին Հայաստանում հյուրընկալված Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովն ու նրա տիկինը[507]:

Հայաստանում բուլղարական փոքրիկ օազիս համարվող այս դպրոցը բարեկամության կարևոր օղակներից մեկն էր, և Գ.

---

[503] Տե՛ս նույն տեղում:
[504] Տե՛ս նույն տեղում:
[505] Տե՛ս նույն տեղում:
[506] Պեյո Տոտեվ Կրաչոլովը, որն ավելի հայտնի է Պեյո Յավորով անունով, բուլղար պոետ-սիմվոլիստ և հեղափոխական է: Մանրամասն տե՛ս Николов Б., ВМОРО – псевдоними и шифри 1893 – 1934, Звезди, 1999, с. 34, 43, 74, 76; Николов Б.,Вътрешна македоно-одринска революционна организация. Войводи и ръководители (1893 – 1934). Биографично-библиографски справочник, София, 2001, с.194.
[507] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդ, ԵՊՀ ...», թիվ 178 (3557), 7 հոկտեմբերի 2004, էջ 1,2:

Պրվանովը նշեց, որ երկու տարի անց այստեղ տոնվելիք հեբելյանը իրենք կազմակերպելու են միասին[508]:

«Մեծ հաճույք էր այցելել այս դպրոցը և զգալ այստեղ Բուլղարիայի շունչը: Յավորովը խորհրդանշում էր երկու ժողովուրդների բարեկամությունը, բայց նախքան կգրեր իր «Հայերը» բանաստեղծությունը, նա կապեր ուներ հայ հեղափոխականների հետ, քանի որ նաև ազատամարտիկ լինելով՝ Յավորովը հեղափոխական բանաստեղծ էր»,- ասաց Գ. Պրվանովը[509]:

Երկկողմ կրթական խնդիրները լուծելու տեսանկյունից կարևոր էր 2005 թ. ՀՀ ԿԳ նախարար Ս. Երիցյանի հանդիպումը իր բուլղար պաշտոնակցի հետ: Բուլղարիայի Հանրապետության կրթության և գիտության նախարար Իգոր Դամյանովի գլխավորած պատվիրակությանը պաշտոնական այցով հունվարի 9-12-ը գտնվում էր Հայաստանում: Այցի նպատակը երկու երկրների կառավարությունների միջև 2003 թ. ստորագրված կրթության և գիտության բնագավառներում համագործակցության ծրագրի քննարկումն ու վերոհիշյալ ծրագրի հիման վրա համապատասխան արձանագրության ստորագրումն էր: Երկու երկրների կառավարությունները գործնական համագործակցություն էին իրականացնում դեռ 1994 թ.-ից, որոնք պարբերաբար թարմացվում և շտկվում էին: Վերոհիշյալ համաձայնագրի շրջանակներում 2003 թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Բուլղարիայի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում ստորագրվել էր երկու երկրների կառավարությունների միջև 2003-2006 թթ. կրթության և գիտության բնագավառներում համագործակցության ծրագիրը:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԿԳ նախարարը հյուրերին ներկայացրեց այն կրթական բարեփոխումները, որոնք իրականացվում էին Հայաստանում: Երկու երկրների կրթության և գիտության նախարարները քննարկեցին համագործակցության այն եզրերը, որոնք հնարավոր էր իրականացնել առաջիկայում: Դրանք կարող էին վերաբերել ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտներին:

---

[508] Տե՛ս նույն տեղում:
[509] Տե՛ս նույն տեղում:

Այցի ընթացքում Իգոր Դամյանովի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Հայաստանի մի քանի բուհերի (Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների լեզվաբանական ինստիտուտ, Եվրասիա միջազգային համալսարան) պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ, ծանոթացավ Հայաստանի պատմամշակութային արժեքներին, եղավ տեսարժան այլ վայրերում: Ի դեպ, սա Բուլղարիայի նախարարի առաջին պաշտոնական այցն էր Հայաստան[510]:

Նույն թվականին ՀՀ ԿԳ նախարարը այցելեց Սոֆիա: ՀՀ պատվիրակությունը Բուլղարիայում եղավ հունիսի 2-5-ը: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ կրթության և գիտության նախարարության միջազգային համագործակցության և սփյուռքի վարչության գլխավոր մասնագետ Սվետլանա Մկրտչյանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր Սուրեն Օհանյանը: Պատվիակությանը հյուրընկալեց ԲՀ կրթության նախարարությունը:

Այցի առաջին օրը ԲՀ ԿԳ նախարար Իգոր Դոմյանովը ընդունեց ՀՀ կրթության և գիտության նախարարի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին, ինչպես երկկողմ հետաքրքրություն ներկայացնող, այնպես էլ հայկական համայնքի հետ առնչվող հարցեր: Մասնավորապես բուլղարական կողմը պատրաստակամություն հայտնեց օգնելու և աջակցելու՝ հայերենի դասավանդումը դպրոցներում ավելի արդյունավետ կազմակերպելու, ուսուցիչների վերապատրաստմանը աջակցելու, մասնագետների փոխանակման հարցերը կազմակերպելու և այլ հարցեր[511]:

ՀՀ ԿԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը եղավ տարբեր ուսումնական հաստատություններում, գիտական հիմնարկներում և

---

510 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, «Հանդիպեց ՀՀ ԿԳ նախարարը», թիվ 1 (3167), 11 հունվարի 2005 թ., էջ 2:

511 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (տեղեկատվություն, հուշագիր, շնորհավորական ուղերձ և այլն) ՀՀ և Բուլղարիայի միջև երկկողմ հարաբերությունների վերաբերյալ, ց. 11, գ. 29, թ. 55:

ունեցավ գործնական հանդիպումներ, մանրակրկիտ ծանոթացավ դրանց գործունեությանը, բարեփոխումների ճանապարհին ԲՀ կրթական համակարգի ձեռքբերումներին: Սոֆիայի «Սուրբ Կլիմենտ Օխրիդսկի» համալսարանում և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայում ստորագրվեցին համագործակցության պայմանագրեր, որը թույլ կտար ավելի կոնկրետ, առարկայական դարձնելու հորիզոնական կապերը Հայաստանի և Բուլղարիայի գիտակրթական հաստատությունների միջև[512]:

ՀՀ ԿԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը եղավ նաև Հենրի Ֆորդի անվան տրանսպորտի և էներգետիկայի մասնագիտական գիմնազիայում[513]: Այցի ընթացքում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր: Դրանք էին մտադրությունների հուշագիրը ՀՀ ԿԳՆ և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի միջև, Համագործակցության պայմանագիր Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և Սոֆիայի պետական համալսարանի միջև, ինչպես նաև համագործակցության պայմանագիր Եվրասիա միջազգային համալսարանի և Հեռավար ուսուցման Բուլղարական համալսարանի միջև[514]:

Երկկողմ հարաբերությունները լի էին բազմաթիվ մշակութային միջոցառումներով: Սակայն դրանք հաճախ չէին իրականացվում պետական միջոցներով, այլ սփյուռքի հայկական տարբեր կառույցների գործունեության հետևանք էին: Այդպիսի միջոցառումներից էր Մարսելի «Սահակ-Մեսրոպ» երգչախմբի 2005 թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 3-ը հյուրախաղերը Բուլղարիայում: Երգչախումբը մի շարք համերգներ տվեց Բուլղարիայում՝ մասնավորապես հրաշալի մեկնաբանելով Կոմիտասի բազմաձայն Պատարագը: Այցելության կազմակերպիչը ՀԲԸՄ Սոֆիայի վարչությունն էր և հատկապես դրա ատենապետուհի Սոնյա Ավագյան-Պետրոսյանը:

Համերգը տեղի էր ունեցել Սոֆիայի «Բուլղարիա» հայտնի համերգասրահում: Ծրագրում ընդգրկված էին բուլղար, հայ և

---

512 Նույն տեղում

513 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն,տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 56:

514 Նույն տեղում:

ֆրանսիացի կոմպոզիտորների գործեր: Խմբավար Խաչիկ Յըլմազյանի ղեկավարությամբ երգչախումբը բոլոր ստեղծագործությունները մեկնաբանել էր երաժշտական երանգավորումների հարստությամբ ու ճշգրտությամբ:

Հոկտեմբերի 2-ին Պլովդիվ քաղաքում երգչախումբը Կոմիտասի բազմաձայն Պատարագը հնչեցրել էր Սբ. Գրիգոր եկեղեցու վերնատանը: Ունկնդիրներն ընդգծում էին, որ տասնյակ տարիներ իրենք չէին լսել նման հոգեզմայլ երաժշտություն: Նույն օրվա երեկոյան «Սահակ-Մեսրոպ» երգչախումբը համերգով հանդես էր եկել Պլովդիվի ամենահայտնի համերգասրահում: Մեներգիչները և դաշնակահարուհի Ժյուլիետ Յըլմազյանն էապես նպաստել էին երգչախմբի փայլուն հաջողությանը[515]:

2006 թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության նախարար Գևորգ Գևորգյանը ընդունեց Հայաստանում ԲՀ դեսպան Ստեֆան Վալեվ Դիմիտրովին: Ս. Վ. Դիմիտրովը նախարարին հանձնեց Բուլղարիայի մշակույթի նախարար, պրոֆեսոր Ստեֆան Դանաիլովի ուղերձը, որում մասնավորապես ասված էր. «Կցանկանայի վստահեցնել Ձեզ, որ մենք պատրաստակամ ենք հետագայում ևս շարունակել մեր ավանդական համագործակցությունը՝ հանուն Բուլղարիայի և Հայաստանի հանրապետությունների, մշակույթի ոլորտում փոխադարձ շահերի իրագործման»[516]:

Հանդիպման ընթացքում արժեվորվել էին նախորդ եռամյա ծրագրերի ձեռքբերումները՝ հատուկ ուշադրության արժանացնելով Մարգարիտ Թերզյանի հայերեն-բուլղարերեն, բուլղարարեն-հայերեն բառարանը, Էդվարդ Գրիգորյանի խոսակցական բառարանը, Բուլղարիայի կերպարվեստի ազգային ակադեմիայում Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցահանդեսը, Բուլղարիայի սիմֆոնիկ նվագախմբի՝ Արամ Խաչատրյանի գործերի կատարումները[517]:

2008 թ. հայ-բուլղարական գիտատեխնիկական համագործակցության բնագավառում ուժի մեջ մտավ երկու

---

515 Տե՛ս «Ազգ» օրաթերթ, ««Սահակ-Մեսրոպ» երգչախմբի փայլուն ելույթները Բուլղարիայում», թիվ 200 (3366), 4 նոյեմբերի 2005 թ., էջ 6:
516 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Բուլղարիա-Հայաստան համագործակցություն», թիվ 37 (3893), 1 մարտ 2006, էջ 4:
517 Տե՛ս նույն տեղում:

երկրների կառավարությունների միջև կնքված տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի ստեղծման մասին համաձայնագիրը: Ըստ համաձայնագրի կողմերը պայմանավորվում էին տնտեսական և գիտատեխնիկական ոլորտներում հայ-բուլղարական համագործակցության արդյունավետ իրականացմանը և զարգացմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով, իրենց իրավասու պետական մարմինների հավասար թվով ներկայացուցիչներից ստեղծել տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով մշտական հանձնաժողով: Նախատեսվում էր, որ հանձնաժողովի աշխատանքները կանցկացվեն առնվազն երկու տարին մեկ անգամ հաջորդաբար Երևանում և Սոֆիայում[518]:

Հանձնաժողովը քննարկելու էր տնտեսական և գիտատեխնկական ոլորտներում կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գերակա ուղղությունները, դրանցից բխող նոր փոխշահավետ կապերի ձևավորումը, համատեղ ծրագրերի իրագործումը և համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակումը[519]:

Համաձայնագիրը կնքվեց Երևանում 2007 թ. նոյեմբերի 13-ին և վավերացվեց ու ուժի մեջ մտավ հաջորդ տարի փետրվարի 21-ին: Հայկական կողմը այդ հանձնաժողովի աշխատանքերին մասնակցում էր հետևյալ կազմով. Գ. Սարգսյան՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար (հանձնաժողովի հայկական կողմի նախագահ), Վ. Վարդանյան՝ ՀՀ քաղաքաշինության նախարար, Վ. Տերտերյան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ, Ս. Մանասարյան՝ Բուլղարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան և այլն[520]:

2008 թ. ուժի մեջ մտավ նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ԲՀ երիտասարդության և սպորտի

[518] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2008, էջ 14:
[519] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[520] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում տնտեսական եվ գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի անհատական կազմը հաստատելու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=44444 , (02.02.2019):

